Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

ԴԱՐԱՎՈՐ ՍԱՔԱՄՈՒՄԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՀՏԴ 941(479.25):325(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Հ 178

Հակոբջանյան Ա.
Հ 178 Ղարաբաղյան հիմնահարցը դարավոր մաքառումների արդյունքում.– Եր.: Զանգակ–97, 2004.– 112 էջ:

Պատմաքաղաքական սույն ակնարկը ներկայացնում է Ադրբեջան կեղծանունով շրջանառության մեջ մտած Արևելյան Անդրկովկասի հազարամյակների պատմության հետագիծը, մատնացույց անում, թե ինչպես ժամանակի հզոր պետությունները, բնիկ ժողովուրդների հայրենիքի հաշվին, ազերբուրքերի համար ստեղծեցին «հայրենիք» և այսօր էլ աշխատում են ավելի ընդարձակել այն:

Միաժամանակ ցավով արձանագրվում են զինադադարով սկսված քաղաքական պատերազմում մեր որոշ բացթողումները, որ կարող էին բնավ չլինել:

Հ $\frac{0503020913}{0003(01)\ 2004}$ 2004 ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 99930 – 2 – 965 – 3

© Հակոբջանյան Հ.
© «Զանգակ–97» հրատ.

Հրատարակչության տնօրեն՝ Մաշա Մնացականյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Սրբագրիչ՝ Նարինե Ներսիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Լալա Հովսեփյանի
Շապիկի համակարգչային մշակումը՝ Արևիկ Հակոբյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 7 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

«ԶԱՆԳԱԿ–97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+3741) 23–25–28,
Ֆաքս՝ (+3741) 23–25–95, էլ. փոստ՝ info@zangak.am,
էլ. էջը՝ www.zangak.am

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ցեղասպանությունը և հայրենի տարածքների բռնազավթումը օտարների կողմից մարդկության դեմ կատարվող այն ծանրագույն հանցագործություններից են, որոնց հատուցման պահանջի համար վաղեմության հասկացություն չկա, եթե դրանից հետո նույնիսկ հազարամյակներ են անցել: Վկան՝ հրեաների հայրենիքի վերականգնումը երկհազարամյա կորստից հետո:

Այսօր «աշխարհի կոկորդում մնացած» ղարաբաղյան հիմնահարցն անցել է 300–ամյա արյունոտ ճանապարհ ու դեռևս իր բավարար լուծումը չի ստացել: Հանդես գալով որպես պարսկական տիրակալությունից Արևելյան Հայաստանի ազատագրման հարց՝ ժամանակի ընթացքում շահագրգիռ հզորներն իրենց կատարած տնական ավերումներով հարցի տարածքային շրջանակները նեղացրել, հանգեցրել են Ղարաբաղին: Ավելին: Երկատել են նաև Ղարաբաղ հասկացությունը, այն բաժանել Լեռնայինի ու Դաշտայինի, և Դաշտային Ղարաբաղը մարսած համարելով՝ օղակը սեղմել Լեռնային Ղարաբաղի վզին՝ այդ վերջին հենակետը ևս բռնազավթելու հեռանկարով:

Պատմականորեն Ղարաբաղյան ազատամարտը և դրանով պայմանավորված հիմնահարցը բաժանվում է երկու հիմնական փուլերի՝ ամեն մեկն ընդգրկելով հարյուրամյա մի ժամանակահատված: Առաջին փուլն ընդգրկում է 18–րդ դարի քսանական թվականներից մինչև 19–րդ դարի քսանական թվականները և խնդիր ուներ Արևելյան Հայաստանը ազատագրել պարսկական տիրապետությունից: Դա մի Արևելահայաստան էր, որի արևելյան սահմանագլուխը Բաքուն էր՝ բաժանված յոթ խանությունների՝ Բաքվի, Շամախու, Շաքիի, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջևանի և Երևանի: Աշխարհատարածքով շահախնդիր երեք հզոր տերությունների՝ Պարսկաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի հակադիր շահերի բախման արդյունքում ոչ միայն չիրականացավ այդ ծրագիրը, այլև ունեցանք անդառնալի կորուստներ: Վերջին հարվածը Բաքվի կո-

մունայի տապալումն էր օսմանյան յաթաղանով ու դրան հաջորդած քաղաքական շահարկումները:

Ղարաբաղյան ազատամարտի երկրորդ էտապն սկսվեց ցարիզմի տապալումով ու խորհրդային կարգերի հաստատումով՝ արդեն որպես զուտ ղարաբաղյան հիմնահարց, և 70–ամյա դաժան մաքառումների արդյունքում ղարաբաղցին հաստատեց այս արևի տակ իր գոյության իրավունքը՝ վերականգնելով կորցրած պետականությունը:

Մենք սկզբունքորեն շրջանցել ենք ադրբեջանական զանգվածների կատարած վայրենությունները հանրապետության ողջ տարածքով մեկ՝ գտնելով, որ նման քստմնելի պատկերների ցուցադրումը վիրավորում է մարդկային արժանապատվությունը: Մենք թռուցիկ ենք անդրադարձել ադրբեջանական իշխանությունների հակահայկական, կլանողական, իրենց տրամադրությանը հանձնված երկրատարածքից «հայերի քոքը կտրելու»քաղաքականությանը՝ սկսած Ասադ Կարանի հայտնի նամակ–հանձնարարականից: Նկատի ենք ունեցել, որ մարտնչող շովինիզմի ու վայրենի այդ դրսևորումները չէին լինի, եթե նրանց թիկունքում կանգնած հզոր ուժերը՝ 1905–06 թթ. ցարական «ախրանկան», 1918 թ. թուրքական ավերիչ արշավանքը, 1919–20 թթ. անգլիական օկուպացիոն զորքերը, 1920–91 թթ. բոլշևիկյան վարչակարգը, չբորբոքեին նրանց վայրենի կրքերը, նրանց չլիցքավորեին անպատժելիության զգացումով, ամեն անգամ իրենց ամենակարող զորությունը չդնեին նրանց տրամադրության տակ: Պատմության մեջ մի ակնթարթ միայն՝ 1992–94 թթ., ադրբեջանցիները զրկվեցին արտաքին այդ անհաղթելի ուժից և չնայած չեչեն ու աղվան մուջահեդ վարձկաններին էլ օգնության կանչեցին, բայց «յոթ միլիոնով» ծնկի եկան հարյուր հիսուն հազարի առաջ, որպեսզի ... մի քանի տարի հետո «դառնան» 8 միլիոն:

Գորբաչովյան վարչակարգի հրահրմամբ սկսված ազերբուրքական վայրենի ագրեսիային փոխարինելու եկավ նույնքան սանձազերծ ու լկտի ազերբուրքական պատմաքաղաքական ագրեսիան: Պետական մակարդակով ղեկավարվող ազերթուրքական հակահայկական քարոզարշավը հասել է այն աստիճանի սանձարձակության, որ Հ. Ալիևը հանձնարարում է. «Եվ հետագայում էլ պետք է հորինել այնպիսի ստեղծագործություններ, որոնք մշտապես, հետևողականորեն ապացուցեն, որ Ադրբեջանին են պատկանում այն հողերը, ուր ներկայումս տեղադրված է Հայաստանը: Մենք պիտի դա անենք: Մենք պիտի ճանապարհ բացենք մեր հետագա սերունդների համար» («Բակինսկիյ ռաբոչիյ», 18 փետրվարի, 1999 թ.):

Կատարելով պետպատվեր՝ ազերթուրքական քարոզչական մեքենան իսպառ վերացրել է ամեն կարգի նենգափոխումների արգելակները՝ անտեսելով նույնիսկ մարդկային բանականության ամենատարրական պահանջները: Անհրաժեշտության բերումով պետք է իմանալ, թե ինչից սկսվեց դա, և դեպի ուր է միտված Ալիևի հանձնարարականը:

Չնայած 1921թ. կուսհամագումարի ամբիոնից Ստալինը պնդում էր, թե ազերթուրքերը դեռևս ցեղ են, չեն ձևավորվել որպես ազգ, այդ հանգամանքը նրան չխանգարեց, որ 30–ական թվականների կեսերին հանձնարարի այդ ժողովրդի համար պատմություն շինել, և ինքն էլ տվեց առաջին օրինակը՝ համաշխարհային պոեզիայի գագաթներից մեկին՝ Նիզամուն, հռչակելով ադրբեջանական բանաստեղծ: Գործի անցան երիտասարդական ավյունով լցված պատմաբաններ՝ Յանպոլսկի, Տրևեր, Երեմյան և ուրիշներ, հետագայում՝ Բունիաթովն իր շքախմբով, այսօր՝ նրա ժառանգորդները պետական մակարդակով: Եվ այդ ժողովրդի համար շինեցին ու շինում են քաղաքակրթության մեջ աննախադեպ մի պատմություն: Նախևառաջ անհրաժեշտ էր «ճշգրտել» այն հենասյուները, որոնց վրա պիտի կառուցեին եգիպտական բուրգը: Եվ «հանճարեղ» խորաթափանցությամբ ու անառարկելի «ճշգրտությամբ» հայտնագործեցին: Ահա մ.թ.ա. 9–8–րդ դարերում Ուրմիա լճի հարավարևելյան շրջանում հիշատակվող Մանա (Ար–Մանա) պետությունը, որն այդպես էլ պատմության մեջ հետագա շարունակություն չի ունեցել: Բայց չէ՞ որ աշխարհագրական այդ տարածքը վերջին դարերից դարձել է Ենիսեյի ավազանից ու Ալթայի կողմերից եկած քոչվորների բնակատեղիներից մեկը: Հենց այդ եկվորներն էլ Մանայի, հետագա Ատրոպատենայի «բնիկներն» են, որոնց նվաճելով՝ թուրքերը պարտադրեցին իրենց լեզուն, դարձրին թուրքախոս: Դե թող մեկը վեր կենա ու հակառակն ապացուցի: 1930–1950–ական թվականներին վերնից իջած քաղաքական պատվերն էր՝ ապացուցել, թե ազերիները թուրքեր չեն, և այդ մտայնությունն էր իշխում Ադրբեջանի պատմագիտական հրապարակումներում:

Եվ քանի որ ազերթուրքերը մեկով բավարարվել չէին կարող, մանավանդ որ Ադր. ԽՍՀ–ն բավական հեռու էր Մանայից, «հայտնագործեցին» նաև երկրորդ հենասյունը՝ պատմության մեջ գոյություն չունեցած աղվան անունը կրող ժողովրդին՝ իր «դարերի խորքը թափանցող» պատմությամբ, իր «հարուստ ու զարգացած» մշակույթով:

Հայտնագործված այդ հայրենիքը բովանդակավորելու համար, փառք Աստծո, տեղական ժողովուրդներն ստեղծել էին իրոք դարերի

խորքն իջնող քաղաքակրթություն ու պատմություն, որն առանց նույնիսկ որևէ սրբագրման, գոչի մի հարվածով «դառնում» է ազերբուրքական. ոչ միայն տեղական ժողովուրդների ստեղծած մահմեդական քաղաքակրթությունը, այլև հայոց խաչքարերը:

Եվ քանի որ հարցերի հարցը Ադրբեջան կեղծանունով թմբկահարվող Արևելյան Անդրկովկասը սեփականացնելն էր, այն դարձավ ազերբուրքական պատմաքաղաքական բռնայուրացման առարկա և իրենց հաղթարշավը հասցրին Նոյ նահապետին, որն «անառարկելիորեն» ծագումով ազերբուրք է: Ինչ է, իզո՞ւր են Նախիջևանի երկրամասը, ուր ըստ առասպելի առաջին անգամ ոտք է դրել Նոյ նահապետը, բռնազավթել ազերբուրքերի համար: Մարտնչող ազերբուրքականությունը պատմաքաղաքական իր «թռիչքներով» արդեն հասել է մի այնպիսի հանգրվանի, որ այսօր կարող է հեշտորեն «ապացուցել», թե համաշխարհային ջրհեղեղը չի տարածվել իրենց վրա, թե իրենք Ադամի ու Եվայի չմիջնորդավորված շարունակությունն են, թե հետջրհեղեղյան ողջ քաղաքակրթությունն ազերբուրքերից փոխառնված իրողություն է: Պարզապես նրանք դեռևս չգիտեն, որ նման վկայություն կա անտիկ պատմագրության մեջ: Մ.թ. I դարի հռոմեական պատմիչ, ազգությամբ հրեա Հովսեպոս Փլավիոսը, վկայակոչելով առավել հնագույն պատմիչ Նիկոդայոս Դամասկոսցուն, նրանից կատարում է այսպիսի մեջբերում. «Մինիաս երկրից վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ՝ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերն ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ»[1]: Մնում է մեր անփոխարինելի հարևաններին հուշել, որ մեջբերման մեջ հիշատակվող Մինիասը նույն Սանան է, որ Հայաստան տեղանվան օգտագործումն այդտեղ թյուրիմացություն է, որ Բարիս լեռը գտնվում է իրենց «իսկոնի» հայրենիք Ադրբեջանում, և Բարիս լեռան փրկվածներն էլ իրենց նախապապերն են:

Ահա թե ինչու նրանք կարող են «պատմական փաստերով ապացուցել» նախաջրհեղեղյան ժողովուրդ լինելու իրենց իրավունքը: Չէ՞ որ թուրքն ու ազերբուրքն ինչ էլ որ ասեն կամ գրեն, կամ փողի զորությամբ գրել տան, հզոր Արևմուտքը քաղաքակրթության իր «բարձունքներից» անմիջապես գրկաբաց է ընդունելու՝ հանուն աշխարհը կլանելու իր քաղաքական շահախնդրության:

Հետևապես ոչ մի նշանակություն չունի այն հանգամանքը, որ անցյալ դարի 30–40–ական թվականներին իրենց դպրոցական դասագրքերում «սխալմամբ» գրում էին. «Առաջին բանաստեղծը, որ գրել է ադրբեջաներենով, Վագիֆն է» (18-րդ դարի վերջերը):

Երբ 1953 թ. Իմիշլիի շրջանի Թալբիխանլու գյուղից 43 ծուխ ազերբուրքերի հարկադրանքով տեղափոխել են Ղարաբաղի Տող գյուղը՝ որպես Ղարաբաղի վերջնական թուրքացման հերթական միջոցառում, այդ ամենա, ամենահնագույն ու քաղաքակիրթ ժողովրդի զավակներն զգուշանում էին քարակերտ բնակարան մտնելուց՝ վախենալով առաստաղը փլվի գլխներին: Սա անեկդոտ չէ, բերում ենք ականատեսի վկայությունը: «Սկզբում նրանք բնավ չէին ցանկանում բնակվել Տողում,– վկայում է ականատեսը,– քանզի այստեղի քաղաքատիպ, լայն բացվածքով պատշգամբներով երկհարկանի տները և ընդհանրապես գյուղի արդյունաբերական ձեռնարկությունները, սալահատակ փողոցներն իրենց համար անսովոր էին և նույնիսկ վախենում էին աստիճաններով բարձրանալ և աներկյուղ մտնել տախտակապատ առաստաղներով սենյակները: Նրանց թվում էր, թե առաստաղը կթափվի իրենց գլխին: Դրա համար շատերը... վրաններ էին խփում ինչպես բակերում, այնպես էլ պատշգամբներում և երկար ժամանակ բնակվում դրանցում»[1]:

Այսքանով հանդերձ, ազերբուրքերը ի ծնե անմրցակից են քաղաքական ճկունության ու դիվանագիտական կողմնորոշումների տեսակետից: Վերջին մի հարյուրամյակում դիվանագիտորեն նրանք չորս անգամ փոխել են իրենց անվանումը, հանդես եկել ուրիշների կողմից իրենց վերագրած անուններով՝ կովկասյան թաթար, թուրք, ադրբեջանցի, նորից թուրք՝ ներքուստ մնալով սեփական ինքնանվանման տերը՝ մուսուլման. վերջին մի հարյուրամյակում չորս անգամ այբուբեն են փոխել՝ ներկայանալով ամենահին մշակույթի տեր ժողովուրդներից մեկը:

Ահա թե ինչու սահմաններ չճանաչող ազերբուրքական գեղծարարությունները հարկադրում են բարի ճանապարհ մաղթել մեր անփոխարինելի հարևաններին նախաջրհեղեղյան ազերբուրքական պատմության ու քաղաքակրթության որոնման բնագավառում և հիմնահարցը ներակայացնել իր նախա, նախա, նախահիմքերից:

[1] Օտար աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Ե., 1976, հ. IX, էջ 55:

[1] Շահեն Մկրտչյան, Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, 1996, էջ 47–48:

ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԾՈՎ

Հայկական բարձրավանդակի հետ միաժամանակ Արևելյան Անդրկովկասը ևս եղել է հայ ժողովրդի բնական հայրենիքն այն հեռավոր ժամանակներից, երբ նա առանձնացել է հնդեվրոպական նախամայր ժողովրդից՝ որպես ինքնուրույն էթնիկական միավոր: Չնայած այդ երկրատարածքը գիտական ծրագրով չի ենթարկվել պեղումների, և հնագիտությունը դեռևս իր խոսքը չի ասել, իր խոսքը չի ասել նաև պատմահամեմատական լեզվաբանությունը, այնուամենայնիվ, այլևայլ բնագավառներին վերաբերող ուսումնասիրություններից, շատ դեպքերում կողմնակիորեն ու պատահական, ջրի երես են դուրս գալիս փաստեր և իրողություններ, որոնք խոսում են այդ տեսակետի օգտին:

Այսպես. Ղարաբաղի բարբառում կան որոշակի քանակությամբ բառեր, որոնք գործածական են միայն այդ բարբառում, չեն մտել հայերենի ընդհանուր բառապաշարի մեջ: Այդ բառերը իրենց հնչյունական կազմով ու արտահայտած իմաստով նույնությամբ արձանագրված են նաև հնդկական սուրբ գրքում՝ «Ռիգվեդայում»: Օրինակ, ըստ «Ռիգվեդայի», Յամա մահվան թագավորության տիրակալն է, մարդկանց մահ բերող աստվածը: Նույն հնչյունական կազմով և նույն իմաստով բառը պահպանվել է նաև Ղարաբաղի բարբառում և այսօր էլ ամենօրյա գործածական բառ է: Այդպես են նաև հոթառ (հռետոր), ավահա (սվաբա), արշա և այլ բառեր: Միայն Ղարաբաղի բարբառում գործածվող բառերի մի խումբ էլ առկա է ժամանակակից անգլերեն լեզվում[1]:

Սրանք իրողություններ են, որոնք մտածելու տեղիք են տալիս, մանավանդ եթե վերջնականապես ապացուցված իրողություն է դառնում, որ հնդեվրոպական նախամայր լեզուն կրող ժողովրդի նախահայրենիքը եղել է Արևելյան Փոքր Ասիայից մինչև Արևմտյան Իրանն ընդգրկող երկրատարածքը:

Հնագետների հայտնաբերած հնագույն քաղաքակրթություններից մեկը շումերական քաղաքակրթությունն է Հարավային Միջագետքում, ուր շումերներն ապրել են մ.թ.ա. 5–րդ հազարամյակի վերջերից մինչև 2–րդ հազարամյակի սկիզբը: Շումերական գրական հուշարձաններից է նաև մարդկությանը հայտնի ամենահին էպոսը, որը ներկայացնում է

[1] Տես՝ Սովետական Ղարաբաղ, 1988 թ., հ. 184, 190, 194:

շումերական իրականությունը մ.թ.ա. 28–27–րդ դարերում: Այդ էպոսում բավական որոշակի տեղեկություններ կան նաև շումերների հարևան ու մրցակից Արատտա երկիր–պետության մասին, որի արևելյան, հարավային ու արևմտյան սահմանները համընկնում են պատմական Հայաստանի սահմանների հետ: Շումերական էպոսում հիշատակություն կա նաև Արատտայի աստվածային պանթեոնի մասին: Մայր աստվածուհին կոչվում էր Տուրտուր, դրա շումերներից աքքադացիներին փոխանցված «Գիլգամեշ» էպոսում դառնում է արդեն Ուբար Տուտու: Ուբար մակդիրի կորստով տուտու բառը հասել է մեր օրերը կրկնակի իմաստով: Արևմտահայերենում տուտու նշանակում է մեծ մայր, տատիկ՝ ինչ–որ չափով պահպանելով նախկին իմաստը: Իսկ Ղարաբաղի բարբառում տուտու են ասում դանդաղաշարժ, անկարող, որևէ գործում շնորհք ցուցաբերելու անընդունակ կնոջը: Ըստ երևույթին այդ հեռավոր ժամանակներում, հայկական ցեղերի միավորմանը զուգընթաց, նրանց աստվածային պանթեոնների միջև ևս մրցակցություն ու «կռիվ» է եղել, և արևելյան հատվածում հաղթող է դուրս եկել Նանե մայր աստվածուհին՝ դառնալով մեծ մայր, տատիկ, իսկ պարտված Տուտուն ստացել է բացասական իմաստ:

Ընդամենը մեկ բառ, որը, սակայն, հնարավորություն է տալիս թափանցելու դարերի խորքը և կռահելու, որ Արևելյան Անդրկովկասը ևս Արատտա երկիր–պետության կազմի մեջ է եղել, և այդ երկիր–պետությունն էլ հայ ժողովրդի հնագույն պետական կազմավորումն է: Իսկ ինչքա՞ն այդպիսի փաստեր կհայտնաբերվեին նպատակամղված հնագիտական ու լեզվաբանական ուսումնասիրությունների դեպքում՝ հնարավորություն ստեղծելով վերականգնելու հնագույն ժամանակների պատմական իրականությունը:

Վանի Արարատյան թագավորության սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ Արգիշտի Երկրորդը, շարունակելով իր նախորդների քաղաքականությունը՝ մի միասնական պետության կազմում հայկական ցեղերի միավորման ուղղությամբ, մ.թ.ա. 8–րդ դարի վերջերին երկրի սահմանները հասցրեց Կասպից ծովի արևմտյան ափերը: Սհա այդ ժամանակ էլ նա հիմնադրեց Բագուն, ինչպես իր անվանակից նախորդը, նվաճելով Արարատյան դաշտը, այնտեղ հիմնադրեց Երեբունին ու Արգիշտիխինիլի–Արմավիրը: Չէ՞ որ Բագու բառը կազմված է զուտ հայկական բառակազմական միջոցներով: Բագ (բոգ) արմատը հնդեվրոպական նախամայր լեզվից հայոց լեզվին փոխանցված բառ է, որը առկա է հայերեն մի շարք բառակազմություններում՝ Բագ–ին, Բագ–արան,

Բագ–ավան: Բագ արմատը հայոց լեզվի գործուն բառապաշարի մեջ է եղել մինչև մ.թ.ա. երկրորդ դարի սկիզբը, երբ Երվանդ Վերջինը իր կառուցած պաշտամունքային կենտրոնն անվանակոչեց Բագարան: Բագու բառը կազմված է նույն բագ արմատից և հայերեն *ու* ածանցից, որը բառին տալիս է ունենալու իմաստը, ինչպես ազդ–ու, կծ–ու, հատ–ու և այլն:

Բագուն հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված միակ տեղանունը չէ Ապշերոնյան թերակղզում. տառացիորեն նրա հարևանն է դարերի խորքից եկող Մարդականը՝ կազմված մարդ արմատից և ական ածանցից՝ բառակազմական իր զուգահեռներն ունենալով Բյուր–ական, Սիս–ական, Բայլ–ական, Վասպուր–ական և նման շատ ու շատ բառերում:

Այս կարգի ցրված փաստերի, մանավանդ մինչև մեր օրերը հասած տեղանունների շարքը ամբողջ Արևելյան Անդրկովկասով մեկ կարելի է բազմապատկել, փաստեր, որոնք դուրս են մնացել գիտական հետաքրքրությունների տեսադաշտից: Սակայն մի բան որոշակի է. Արևելյան Անդրկովկասը մինչև 17–րդ դարի վերջերը իր հիմնական մասով գիտակցվում էր որպես Հայաստան, հայ ժողովուրդն էր այդ տարածքի հիմնական ու գերակշռող էթնիկական տարրը, չնայած դարեր շարունակ այնտեղ մեկը մյուսին հերթափոխել են օտար նվաճողները՝ ամեն մի նվաճող իրեն ձեռնտու ձևով վարչատերիտորիալ բաժանումների ենթարկելով այն: Բոլոր նվաճողներն էլ, սկսած Ալեքսանդր Մակեդոնացուց, երկրատարածքի էթնիկական նվաճման խնդիր չեն դրել և շատ թե քիչ էթնիկական, պատմամշակութային նստվածքներ չեն թողել: Իսկ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է եղել օտարի լուծը թոթափել, տեղը կանգնել է հայկական ազգային իշխանություն, վերջինը՝ Բաքվի կոմունան 1918 թ.: Իր իրական բովանդակությամբ և ոչ թե կոմունայի ղեկավարության գաղափարաքաղաքական ուղղվածությամբ, մի հակասություն, որը դարձավ կոմունայի պարտության պատճառներից մեկը, թերևս ամենահիմնականը:

***

Օգտագործելով հնագույն աղբյուրները՝ Պատմահայր Խորենացին ներկայացնում է մ.թ.ա. III դարի պատմական իրականությունը: Պարսկաստանի տիրակալ Արշակ Մեծն Աքեմենյան աշխարհակալությունը վերականգնելու հեռանկարով Հայաստանի թագավոր է նշանակում իր

եղբայր Վաղարշակին՝ նրան վերապահելով նաև ասիական արևմուտքը՝ միաժամանակ պետության հյուսիսարևելյան սահման նշանակելով «Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է արևմտյան (կարդա՝ Կասպից) ծովի մոտ»[1]: Արևելքի տիրակալ Արշակ Մեծի համար Կասպից ծովը արևմտյան է:

Արտաշես Առաջինի (մ. թ. ա. 179–160) օրոք Կասպից երկիրն ապստամբել էր թագավորի դեմ: Արտաշեսը նրանց դեմ է ուղարկում իր զորավար Սմբատին, որը «գնալով բոլորին հնազանդեցնում է», գերիներ վերցրած վերադառնում[2]: Այդ երկրամասը մեկ էլ ապստամբած ենք տեսնում IV դարի երկրորդ կեսին, Արշակ երկրորդ թագավորի դեմ: Այս անգամ էլ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն է հնազանդեցնում նրանց: «Ապա Մուշեղ սպարապետը սաստկապես վրեժ է առնում Կասպից երկրից, Փայտակարան քաղաքից, որովհետև նրանք էլ ըմբոստացել ու դավաճանել էին Հայոց թագավորին»[3]:

Անտիկ աշխարհի աշխարհագիր – պատմիչները (Ստրաբոն, Պլինիուս, Պտղոմեոս և ուրիշներ) միաձայն համերաշխությամբ Հայաստանի արևելյան սահման ճանաչում են Կասպից ծովը: Ահա թե ինչ է գրում Պոմպեոս Եստրոգոսն իր պատմական երկում մ.թ. I դարի սկզբին. «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի թագավորության կողքից, ինչպիսին է Հայաստանը, քանի որ նրա սահմանները, Պարթևաստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմանները, ընդ որում, Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը տասնմեկ հազար քայլ տարածություն ունի, իսկ լայնքով նրա երկարությունն է յոթ հարյուր հազար քայլ»[4]: Ըստ Պլինիուսի ճշգրտված տվյալների՝ Հայաստանի երկարությունը եղել է հազար ինը հարյուր հիսուն կմ, լայնությունը՝ ինը հարյուր յոթանասունհինգ կմ[5]:

Աշխարհակալ Հռոմը, 166 թ. սկսած, կայսրության արևելյան մասում ստեղծում է ռազմական մի սիստեմ, որի համաձայն՝ «բարեկամ ու դաշնակից» թագավորությունները պահպանում էին մշտական հեծելազոր կայսրության նպաստով: «Հայկական հեծելազորի պահպանության

[1] Մ. Խորենացի, Պատմություն հայոց, 1968, էջ 83:
[2] Նույն տեղը, էջ 187:
[3] Փ. Բուզանդ, Պատմություն հայոց, 1986, էջ 152:
[4] Հայ ժողովրդի պատմություն, 1971, հ. 1, էջ 707:
[5] Նույն տեղը, էջ 838:

համար կայսրությունը համաձայնել էր յուրաքանչյուր տարի վճարել որոշ դրամական նպաստ»[1]: Իսկ դրա դիմաց հայկական հեծելազորը պետք է հյուսիսային ցեղերի ասպատակություններից պաշտպաներ «Կովկասյան անցքերը»: Եվ երբ ~~196 թ~~ 198 թվականին «խազիրներն ու բասիլները ճորա դռնից» հերթականորեն դուրս են գալիս ասպատակության, նրանց դեմ զորքով դուրս է գալիս հայոց Վաղարշ Բ թագավորը, «նրանց բազմությունը կոտորելով, դիակներն սփռում է դաշտի երեսին և երկար տեղ նրանց հալածելով անցնում է ճորա կապանով: Այստեղ թշնամիները նորից ճակատամարտ կազմեցին. թեպետ հայոց քաջերը նրանց փախուստի մատնեցին, բայց Վաղարշն սպանվեց կորովի աղեղնավորների ձեռքով»: Հորը փոխարինած Խոսրովն «իսկույն հայոց զորքերը միացնելով անցնում է մեծ լեռը՝ իր հոր մահվան վրեժն առնելու. նա սրով ու գեղարդով վանում է այդ հզոր ազգերին, բոլոր պիտանի մարդկանցից հարյուրից մեկը պատանդ է վերցնում և իբրև իր տերության նշան մի արծան է կանգնեցնում հունարեն գրով, որպեսզի հայտնի լինի, թե ինքը հնազանդվում է հռոմեացիներին»[2]:

Այսպիսով, անտիկ աշխարհի գրավոր աղբյուրների վկայությամբ՝ Հայաստանի արևելյան սահմանը Կասպից ծովն է: Այդ սահմանն անխախտ է մնացել մինչև հայ Արշակունիների թագավորության վերացումը:

Այժմ դառնանք քաղաքական շահարկումների թիրախ դարձած Աղվանքի բազմաչարչար ֆենոմենին: Պատմությունն ավանդում է, որ պարսից արքայից արքա Արշակ Մեծն իր եղբայրներին թագավորեցնում է Մարաստանում ու Հայաստանում, իսկ երրորդի համար էլ ստեղծում է Մասքութ Արշակունիների թագավորությունը Չող մայրաքաղաքով՝ Քուռը դարձնելով նրա հարավային սահման. մի սահմանագիծ, որը պահպանվել է մինչև երկու պետություններում Արշակունի թագավորությունների վերացումը, որի արդյունքում Սասանյանները երկրատարածքում կատարեցին նոր վարչատերիտորիալ սահմանագծումներ, ստեղծեցին Աղվանից մարզպանությունը:

Պատմությանը հայտնի չէ որևէ աշխարհակալ պետություն, որն իր վարչաքաղաքական սահմանները գծած լինի ենթակա ժողովուրդների էթնիկական սահմաններով: Ընդհակառակը, միշտ էլ այնպիսի բաժանումներ են կատարել, որ որևէ ժողովուրդ ազգային ինքնուրույնություն

[1] Նույն տեղը, էջ 790:
[2] Մ. Խորենացի, նշված աշխատությունը, էջ 200–201:

չունենա, միշտ խճճված լինի հարևանների հետ ունեցած հարաբերությունների ցանցում, որպեսզի միշտ կախված լինի իշխողի արդարամտությունից: Վերջիններից մեկը՝ այսօր մեզ ժառանգություն հասած աշխարհաքաղաքական վիճակը: Պարզ է, որ Արշակ Մեծը բացառություն կազմել չէր կարող: Ահա թե ինչ սահմաններ է գծում նա իր եղբայր Վաղարշակի համար, որին դարձրել էր Հայաստանի թագավոր: «Սա իր եղբորը՝ Վաղարշակին, թագավորեցնում է Հայաստանի վրա, այսպես նպատակահարմար համարելով, որպեսզի իր թագավորությունն անխախտ մնա: Նրան մայրաքաղաք է տալիս Մծբինը և նրա համար սահմաններ որոշում՝ Ասորիքի արևմտյան կողմից մի մասը, Պաղեստինը, Ասիան, ամբողջ Միջերկրայքը և Թետալիան Պոնտոս ծովից մինչև այնտեղ, ուր Կովկասը վերջանում է արևմտյան ծովի մոտ, նաև Ատրպատականը և էլի՝ որքան քո միտքը և քաջությունը կհասնեն»[1]:

Նույն ելակետով էլ Արշակ Մեծն ստեղծում է Մասքութ Արշակունիների թագավորությունը, որի կազմում, ըստ Ստրաբոնի վկայության, կուտակված էին 26 տարալեզու ցեղեր: Թե ինչքանով է ստույգ Ստրաբոնի հիշատակած 26 թիվը, ոչ ոք չի կարող հաստատել կամ ժխտել: 5–դ դարի մեր պատմիչները տարբեր առիթներով անդրադարձել են այդ ցեղերին, հիշատակել 2 տասնյակից ավելի ցեղանուններ: Այսպես՝ Սանեսան թագավորի՝ Հայաստան կատարած արշավանքի կապակցությամբ Փավստոս Բուզանդը գրում է. «Այն ժամանակ Մասքութների Սանեսան թագավորը սատիկ բարկանալով թշնամացավ իր ազգակից հայոց Խոսրով թագավորի հետ և հավաքեց, գումարեց բոլոր զորքերը՝ հոներ, փոխեր, թավասպարներ, հեծմատակներ, իժմախներ, գաթեր, գղվարներ, գարգարներ, շչբեր, ճղբեր, բաղասիճներ, եգերսվարներ և այլ խառնիճաղանջ, թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմություն...»[2]: Իսկ Եղիշեն էլ թվարկում է այսպես. «Ինչպես և լփնաց և ճղբաց զորքերը. Վատը, Գավը, Գղվարը, Խրսանը և Հեծմատակը, Փախսը, Փոխսն ու Փյուքվանը և Թավասպարների ամբողջ զորքը»[3]:

Բայց թե հիշատակված ցեղերը, իրենց մեծագույն մասով, ինչ տարածքներ են զբաղեցրել, հայտնի չէ: Մերօրյա հետազոտողները պատմական բոլոր սկզբնաղբյուրները մանրազնին հետախուզելուց հետո Աղվանից թագավորության զբաղեցրած տարածքում կարողանում են պայմանականորեն տեղադրել հազիվ 6–7 ցեղերի՝ մասքութներ, թա-

[1] Նույն տեղը, էջ 83:
[2] Փ. Բուզանդ, նշված աշխատությունը, էջ 75:
[3] Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, 1971, էջ 191:

վասպարներ, լեկեր, լփիններ, շիլբեր, չիլբեր: Իսկ թե ինչ լեզվի կրողներ են եղել այդ ցեղերը, ինչ մշակույթ են ստեղծել, դրանց վերաբերյալ որևէ վկայություն ճարել չեն կարողանում, վկայություն չկա: 19–րդ դարի վերջին Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը, նախկին Աղվանքի այդ մարզերը հետազոտելով, հայտնաբերել է հազիվ երկու բարբառ՝ լահճերեն և ուտիերեն, յուրաքանչյուր բարբառից որպես նմուշ վերցրել մի շարք բառեր:

Կարելի է ենթադրել, որ հիշատակվող 26 ցեղերի մեջ չի եղել ուրիշ որևէ մեկը, որն իր թվակազմով ու ընդհանուրի մեջ ունեցած կշռով իրենով բովանդակավորեր, իրենով ներկայացներ կազմավորվող պետությունը: Իսկ կազմավորվող պետության հիմնական ու գերակշիռ էթնիկական տարրի՝ հայերի անունով այն ներկայացնել չէր կարելի երկու Հայաստան իրար կողքի ճանաչելու քաղաքական աննպատակահարմարության պատճառով: Եվ «որպեսզի իր (Արշակ Մեծի) թագավորությունն անխախտ մնա», ձևավորվող պետությունը շրջանառության մեջ է մտցվում աշխարհագրական անունով, երկրամասի ամենամեծ վարչաէթնիկական տարածքի՝ Աղվանքի անունով, իսկ ցեղերն էլ ստանում են աղվանից ժողովուրդ հավաքական անունը, որը նշանակում է ոչ այլ ինչ, քան Աղվանքի ժողովուրդ, Աղվանք երկրի ժողովուրդ:

Վերացնելով Արշակունյաց երկու թագավորությունները՝ Սասանյանները չխախտեցին ավանդությունը. ստեղծեցին Աղվանից մարզպանություն՝ նախկին թագավորությանն ավելացնելով Հայաստանի Ուտիք և Արցախ մարզերը: Բայց երբ թուլացավ նաև Սասանյանների ազդեցությունը, երկրամասը տրոհվեց երեք միավորների՝ Աղվանք, Լփինք և Չող. նրանց միավորող միակ գործոնը մնաց լուսավորչական եկեղեցին:

Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» հայտնագործումով սկզբնավորվեց պատմագիտության մի նոր բնագավառ՝ աղվանագիտությունը: Հայ և եվրոպական հետազոտողներն այս կամ այն ճշգրտությամբ տալիս էին ծագող հարցերի գիտական պատասխանները, մինչև որ անցած դարի 30–ական թվականներից պատմագիտական ճշմարտությանը փոխարինելու եկան նենգափոխումներն ու հարմարեցումները՝ հեռուն գնացող քաղաքական նկատառումներով: Մանավանդ Արևելյան Անդրկովկասում ամեն մի հայկականի, նույնիսկ հայի գոյության իսկ փաստը աղվանաթուրքական հռչակելու բունիաթովյան սանձարձակությունը որոշ հայագետների ստիպեց, որ գոնե հնարավորը փրկեն ազերթուրքական այդ ավազակային թալանից: Առաջին հերթին մտահոգության խնդիր դարձավ վերջին դարերում Ղա-

ռաբաղ հասկացությամբ ներկայացող Կուր գետի աջափնյակի փրկության հարցը: Այդ անհրաժեշտության թելադրանքով և հենվելով առաջին դարի հույն աշխարհագիր Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների վրա՝ «չինական պարիսպ» կանգնեցրին Կուր գետի երկայնքով մեկ: Արժանին պետք է մատուցել կատարվածի դիմաց: Մի Մնացականյան, մի Ուլուբաբյան, մի Հակոբյան ինտերնացիոնալ պարտադրանքի պայմաններում կարողացան հարևան հանրապետության վարչական տարածքի մեջ խցկած Կուրի աջափնյակի հայկականությունն ու հայապատկանությունը փրկել ազերթուրքական մարտնչող շովինիզմի երախից: Ավելին. մեկ–մեկ էլ նրանք, «չարություն» անելով անցնում էին «չինական պարսպի» վրայով, մատնացույց անում, որ ձախափնյակում էլ մենք ունեինք Կամբեճան ու Փոքր Հայք՝ իր Անահտական տաճարային համակարգով: Միգուցե այդքա՞ն էր հնարավոր երեկ: Իսկ այսօր, երբ ճշմարտությունն իր իրավունքի մեջ վերականգնելու համար քաղաքական սպառնալիքներ չկան, անհրաժեշտ է լիարժեք քայլերով անցնել նաև պարսպից այն կողմ՝ տեսնելու համար, թե, վերջապես, ի՞նչ է եղել այնտեղ:

Հանրահայտ ճշմարտություն է, որ անտիկ աշխարհին հայտնի Ասիայի հազարամյակների պատմության ընթացքում ամենափոփոխականները եղել են պետական կազմավորումները, նրանց աշխարհագրական սահմաններն ու էթնիկական կազմերը, իսկ ամենից պահպանողականները եղել են աշխարհագրական անվանումները, տեղանունները: Տարածքների քաղաքական փոփոխության արդյունքում մասնավոր դեպքերում է կատարվել տեղանվանափոխություն: Այսպես: Ցարիզմի հարյուրամյա տիրապետության ընթացքում ընդամենը երկու տեղանուն անվանափոխվեց Արևելյան Հայաստանում՝ Գյումրի–Ալեքսանդրապոլ, Գանձակ–Ելիզավետապոլ: Բոլշևիկների 70–ամյա տիրապետության պայմաններում նույն տեղանունները վերանվանվեցին Լենինական, Կիրովաբադ, և Ղարաքիլիսան էլ դարձավ Կիրովական: Իսկ հանգամանքների փոփոխվելուց հետո նորից իրենց դերի մեջ մտան նախաստեղծ տեղանունները: Ուրիշ հարց է, եթե նոր տիրապետողը սեփական ձեռնարկումներ կատարի և անվանակոչի դրանք: Այսպես: Ցարիզմը գաղթօջախներ ստեղծեց Կովկասում և անվանակոչեց դրանք՝ Սեմյոնովկա, Կուրոպատկինո, Կարյագինո և նմաններ:

Ինչպես արդեն նշվել է, Արշակ Մեծն իր երրորդ եղբոր համար էլ ստեղծել է Մասքութների Արշակունիների թագավորությունը՝ այն անվանակոչելով Աղվանից թագավորություն: Հետազոտողները համարյա

անխտիր այդ անվանման մեջ դնում են էթնիկական իմաստ, ինչ–որ առանձին մի ժողովուրդ, որի համար աջ ու ձախ ընկած որոնում են ցանկացած ժողովրդի գոյության փաստը հաստատող կռվան՝ նրա լեզուն ու մշակույթը, բայց ոչինչ, տառացիորեն ոչինչ չեն գտնում: Սակայն, ո՞վ զարմանք, պատկառելի տարածք զբաղեցնող Աղվանքում մենք բախվում ենք մի իրողության հետը, որը դուրս է մնացել բոլոր հետազոտողների տեսադաշտից: Խոսքը վերաբերում է երկրի աշխարհագրական անուններին, տեղանուններին, որոնք անխտիր կամ համարյա անխտիր, հայերեն են կամ ունեն հայերեն բառակազմական ծնույթ՝ սկսած ընդհանուր երկրանունից ու երկրի մայրաքաղաքի անվանումից:

Սկսենք հենց երկրանունից: Աղվանք (Աղուանք), որի զուգահեռներն են հարևան Ուտիք–Արցախում՝ Գարդմանք, Պիանք, Պազկանք, Մուխանք, Հարճլանք, Մեծառանք և այլն: Բոլորն էլ կազմված տեղանուն կազմող անք ածանցով: Երկրի մայրաքաղաքը՝ Կապաղակ= Կապ+աղ+ակ՝ կազմված հայերեն բառաբաղադրիչներով, որի զուգահեռներից են՝ փակաղակ, կաչաղակ, մակաղել, սվաղել, նվաղել, կատաղել, հապաղել և այլն:

Եվ այսպես, գավառներ՝ Կամբեջան, Եղնի (Խենի), Գետառու, Խոխմազ (Խողմաղ, Հողմաղ Հողի), Շաքե, Ուտան ի մարզպան, Համբասի, Գեղավու, Հեջերի, Քաղադաշտ (Քաղաձոր): Բնակավայրեր՝ Գիշ, Շաքի, Կապաղակ, Քաղաբերդ: Գետեր՝ Աղուան, Գետառու, Գեղավու, Սեբոջ, (Քալաձոր): Այս անունները արտագրել ենք Երեմյանի կազմած քարտեզից: Ավելի խոսուն են Կուրի ձախափնյակը ներկայացնող այլ աղբյուրներից քաղված տեղանունները; որոնցից ներկայացնում ենք մի շարք՝ Դաշտակ, Հաբանդ, Գարդման, Կախավան, Կալ–տակ, Օրաբան, Մուխանց. Քանդակ, Ջարդունի, Բաղասական, Խաչմաս, Դուրկան, Արջկան, Շապորան, Շրուան, Խուրս–վեմ պարիսպ, Խսրուան, Հերան, Բագավան, Ավշարան, Ալնան, Յոթնփորակյան բագին, Բագու, Մարդական և այլն:

Հայերենակազմ, հայերենաշունչ այս բառապաշարը պերճախոս վկայում է ինքն իր մասին: Դրանք ստեղծողները կարող էին լինել միայն հայերենախոս տարրեր, իսկ դրսեկներն այդ պատրաստի բառապաշարը պիտի հարմարեցնեին իրենց լեզվամտածողությանն ու լեզվի օրենքներին: Ասենք, Աղվանքը կարող էին դարձնել Ալբանիա, Կասպքը՝ Կասպիանե, ինչպես բոլոր տեղանուններն ու անձնանունները հարմարեցնում էին իրենց լեզուներին. Բակուրը դառնում էր Պակուրոս, Վաղարշակը՝ Վոլոգես, Կապաղակը՝ Կաբալա, Գարդմանը՝ Գիրդիման և այլն:

Աղվանից աշխարհի ողջ տարածքով մեկ սփռված տեղանունները միաժամանակ վկայում են, որ ոչ միայն այդ երկրի բնակչության հիմնական ու գերակշիռ զանգվածը հայախոս, հայ է եղել, այլև այնտեղ մշակույթ կարող էին ստեղծել վաղուց ի վեր նստակեցության ընտելացած, կենսական բարիքներ ստեղծելու ունակ հայերը միայն և ոչ թե այնտեղ թափանցած քոչվոր ավարառուները: Պատահական չէ, որ ամեն կարգի որոնումների ժամանակ հայտնաբերվում է միայն հին հայկականը՝ Կուրից սկսած մինչև Դերբենդի պարիսպները:

Մի կրկին անգամ հիշենք, որ անտիկ աշխարհի պատմիչներն ու աշխարհագիրները, ինչպես նաև հայ հին հեղինակները Հայաստանի ու Աղվանքի ընդհանուր սահման ճանաչում են Կուր գետը: Դա երկու պետությունների, բայց ոչ երբեք երկու ժողովուրդների միջև հաստատված միջպետական սահմանն է: Երկու պետական կազմավորում, որոնց գահերին առաջին անգամ նստել են երկու հարազատ եղբայրներ՝ հետագան ժառանգելով իրենց հետնորդներին: Պարզ է, որ նրանց հարաբերությունների հիմքում տարածքային կամ էթնիկական խնդիրներ չկային: Ավելին՝ նույնիսկ իրար հետ թշնամանալու, մեկը մյուսի երկիրն ավերելու դեպքում անգամ արյան կանչը նրանց չէր լքում: Բնութագրական է Բուզանդի հաղորդած մի վկայություն: Մասքթաց Սանեսան թագավորի բազմացեղ զորքերը համարյա մի ամբողջ տարի «հայոց երկիրը ծածկեցին, քանդեցին, գերեցին, ամբողջովին ավերեցին»: Հայոց խոսրով թագավորը, դիմադրություն կազմակերպելու փոխարեն, փախավ ու ապաստանեց Դարեոնք բերդում: Իսկ երբ հայ նախարարները ջարդեցին մասքթաց զորքերին, Սանեսանի գլուխն էլ տարան թագավորին, վերջինս «երբ տեսավ, սկսեց լալ ու ասաց. «Իմ եղբայրն էր, Արշակունի ցեղից»[1]:

Հարաբերությունների նման դրվածքով, իշխող նման հոգեբանությամբ պետք է բացատրել Աղվանքի հայության մասին վկայությունների սակավության ու անորոշության հանգամանքը հայ պատմագրության մեջ, մանավանդ որ, մարզպանական շրջանից սկսած, վերացավ այդ սահմանը և ձևավորվեցին այլ սահմաններ: Այնուամենայնիվ, անտիկ աղբյուրներում ինչ–որ չափով, ինչ–որ ձևով տարորոշվում է հայերի ներկայությունն ու առանձին էթնիկական սրավոր լինելու իրողությունն Աղվանքում: Մնում է պատնեշ–սահմանն անցնել ու առանց նախապաշարումների քայլել Կուրի ձախափնյակով:

[1] Փ. Բուզանդ, նշված աշխատությունը, էջ 76–77:

Առաջին հեղինակը, որ տեղեկություններ է հաղորդում Աղվանքի, նրա սահմանների, էթնիկական կազմի մասին, I դարի հույն աշխարհագիր Ստրաբոնն է: Ահա թե ինչ է վկայում Կուրը երկու պետությունների սահման ճանաչող հեղինակը: «Հայաստանի ծայրագավառներից... Խորձենեն և Կամբեճանն ամենահյուսիսայիններն են և բոլորից շատ ծածկված ձյունով: Նրանք սահմանակից են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կոլխիդային»: Այնուհետև՝ «Անցումը Իբերիայից Աղվանք ձգված է Կամբեջանի անջուր ու քարքարոտ գավառով, Ալազան գետի ափով»: Կամ՝ «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների ու աղվանների հետ»: Այսպիսով՝ Ստրաբոնը եռակի վկայությամբ հաստատում է, որ Կամբեճանը Հայաստանի գավառներից է, գտնվում է Կուրի ձախափնյակում, ձգվում է մինչև Կովկասյան լեռները, իր միջով բաց է թողնում Ալազան գետը: Կամբեճանի հայապատկանության ու հայկականության մասին վկայությունները հասնում են մինչև 11–րդ դարը, երբ այնտեղ ձևավորվել էր հայկական գավառական թագավորություն: Բայց թագավոր Իշխանակը իր վրացուհի մայր Դինարի ազդեցությամբ ընդունում է վրացադավանություն, որի հետևանքով հետագայում Վրաստանի հզորացմամբ ու ծավալմամբ և վրացական եկեղեցու ազդեցությամբ ժողովուրդը ձուլվում է վրացիներին: Այդ մասին ուղղակի և անուղղակի վկայություններ կան ժամանակին ստեղծված վավերագրերում՝ արժևորված գիտության կողմից:

Կամբեճանից արևելք, Կուրի ձախափնյակով տարածվում է հայկական մի երկրամաս ևս, որն աղբյուրներում հիշատակվում է Փոքր Հայք անունով: Այդ երկրամասն առաջին անգամ հիշատակում է I դարի պատմիչ Հովսեպոս Փլավիոսը մ.թ.ա. I դարի կեսին հռոմեական զորավար Պոմպեոսի արշավանքների առիթով: Հայաստանում գործերն ավարտելուց հետո Պոմպեոսն անցնում է Ալբանիա–Աղվանք, «զորքը երեք մասի բաժանելով՝ ձմեռեց Անահտական երկրում և Կյուռնոս (Կուր) գետի մոտ... Այսուհանդերձ նա հանգստությամբ չձմեռեց: Քանզի Օրոյսեսը՝ Կյուռնոսից վերև բնակվող ալբանների թագավորը... արշավեց նրանց վրա Սատուռնալիա տոնի ժամանակ»[1]: Կուրի ձախափնյակում գտնվող Փոքր Հայքի մասին հաջորդ հիշատակության հեղինակը II դարի պատմիչ Պլուտարքոսն է, որն արդեն երկրատարածքն անվանում է Փոքր

[1] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9,1976, 142 էջ:

Հայք: Խոսելով հռոմեական զորավար Պոմպեոսի՝ Աղվանքում տարած հաղթանակի մասին՝ Պլուտարքոսը միաժամանակ ներկայացնում է նաև նրա ետդարձը: «Այդ ճակատամարտից հետո Պոմպեոսը պիտի շարժվեր դեպի Վրկանա կամ Կասպից ծովը, բայց թունավոր սողունների առատության հետևանքով հրաժարվեց այդ մտադրությունից և ծովից՝ երեք օրվա անցնելիք տարածությունից վերադարձավ Փոքր Հայք»:

Պլուտարքոսի այս տեղեկությունը հարստացնելով այլ աղբյուրների հաղորդումներով՝ վաստակաշատ պատմաբան Ասատուր Մնացականյանն ընդհանրացնում է. «Այդ առթիվ կարևոր վկայության ենք հանդիպում «Աշխարհացույցում», այն էլ նրա համեմատաբար ընդարձակ խմբագրության մեջ: Այստեղ Աղվանքի նկարագրության մասում կարդում ենք. «Աղբանիա... Աղուանք... Քավաղակ քաղաք Աղվանից՝ մերձ ի Կաւկաս, ընդ որոյ մէջ գետն Սեբոջ դէպ ի հարաւոյ ըստ Փոքր Հայոց»: Այս վկայության համաձայն՝ Կովկասյան լեռներից իջնող Սեբոջ գետն անցնում է Կապադակ քաղաքի մոտով կամ միջով և հոսում դեպի հարավ՝ «ըստ Փոքր Հայոց», այսինքն՝ Փոքր Հայքի միջով կամ սահմանով, և թափվում Կուր գետը: Կնշանակի՝ «Աշխարհացույցի» այս խմբագրության հեղինակի ունեցած տեղեկություններով Կուր գետից հյուսիս, Աղվանից աշխարհի սահմաններում, եղել է Փոքր Հայք կոչվող մի տարածություն, որի սահմաններից մեկը համընկել է Սեբոջ գետի միջին և ստորին հոսանքին»[1]:

Ավելացնենք միայն, որ հայությունը դարեր շարունակ գոյատևել է այնտեղ, վերջին դարերում դարձել պարսկական տիրակալների ստեղծած Շաքիի խանության էթնիկական հիմքը՝ իր համարյա միատարր հայ բնակչությամբ (88 %): Վերջին երեքհարյուրամյա անհավասար մաքառումների արդյունքում հայ ժողովուրդն այսօր զրկված է իր հայրենիքի այդ հատվածից ևս՝ հիմնովին հայաթափվելով 1988 թ.:

Կամբեճանից արևելք, Փոքր Հայքից հյուսիս, մինչև Կովկասյան լեռների ջրբաժանն ընկած տարածքը զբաղեցնում է բուն Աղվանքի կենտրոնական գավառը՝ Ուստան ի մարզպան, իր հայակազմ, հայախոս աշխարհագրական անուններով:

Ինչպես տեսանք, Սեբոջ (Քալածոր) գետով ճշգրտվում է Փոքր Հայքի զբաղեցրած մոտավոր տարածքը: Իսկ նրանից արևելք, ըստ «Աշխարհացույցի» հաղորդման, տեղադրվում է «Դաշտ ի Բազկան (որ է Հեջերի)» գավառը: Այդ գավառի ու շրջակաների մասին պատկերացում ենք կազմում հետագա պատմական տեղաշարժերից:

[1] Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջը, 1966, էջ 56:

Կաղանկատվացին իր «Պատմության» մեջ սպառիչ բացատրություն է տալիս Աղվանից աշխարհ թափանցած Միհրանյան տոհմի, նրանց զբաղեցրած երկրամասի, Միհրանյանների կատարած դերի, տոհմի սպառման ու հարակից այլ հարցերի մասին:

Հակառակ Կաղանկատվացու աներկբա հաղորդումների՝ հայագիտության մեջ միանգամայն սխալ աշխարհագրական տեղ է հատկացվել այդ տոհմին, տարել մտցրել են Ուտիքի Գարդման գավառ: Հետևենք պատմիչի ցուցումներին՝ որոշելու համար, թե որտեղ է եղել համանուն Գարդման գավառը: Պարսից Խոսրով արքան վրեժխնդիր է լինում իր հորը սպանած քեռիներից՝ նրանց ցեղից սպանելով մոտ 60 մարդու: «Այդ պատճառով Խոսրովի ազգական այն Միհրանը փախստական է դառնում, իր հետ միաբան դարձնում երկրի որոշ մասեր և, վերցնելով մոտ 30000 ընտանիք, անցնում է Աղվանքի կողմերը ու հասնում է Ուտիք գավառը՝ Պարտավ մեծ քաղաքի մոտ. նա կամենում էր այնտեղից էլ գնալ խազիրների մոտ և միանալ (Խոսրովի) թշնամիներին»[1]: Կոնկրետ դեպքում հետաքրքիր չէ՝ Միհրանը փախստակա՞ն էր, թե՞ Աղվանքին տիրած պահելու համար նենգորեն ուղակված պարսկական առաջնորդ: «Նա կամենում էր գնալ խազիրների մոտ և միանալ (Խոսրովի) թշնամիներին». Պարտավից դաղստանաբնակ խազիրների մոտ գնալու ճանապարհն անցնում է Շիրվանով և ոչ թե Ուտիքի Գարդմանով: Միհրանից սպասվող թշնամանքը չեզոքացնելու համար Խոսրովը պալատականների խորհրդով «հաշտության նամակ» է ուղարկում իր ազգական Միհրանին, ուր հայտնում է նաև, թե ցանկության դեպքում, նամակն ստացած տեղը Միհրանը կարող է իր համար բնակության վայր դարձնել «այնքան, որքան կարող են ընթանալ քո ոտքերը»: «Նամակը հասնելու ժամանակ նա գտնվելիս է լինում Գարդման լեռնոտ գավառում: Նամակը վերցնելով՝ կարդում է և լցվում ուրախությամբ: Եվ տեսնելով բարեխառն երկիրը՝ բնականաբար ցանկանում է այդտեղ մնալ: Իր անունով մի քաղաք է շինում՝ այն անվանելով Միհրավան»[2]: «Միհրավանը գտնվել է այժմյան Շամախուց արևմուտք 40 կմ հեռու, ներկայիս Ամիրվան գյուղի տեղում՝ երկրորդ Գարդման գավառում»[3]:

Այնուհետև պատմիչը տալիս է մեր խնդրի համար ամենակարևոր տեղեկությունը. «Իսկ երբ գարունը բացվեց, բարձրացավ Գարդման գավառի վերին կողմը, դավադրությամբ իր մոտ կանչեց տեղի գլխավորներից 12 մարդ, սրահարեց և տիրեց երկրին»: «Սրահարեց և տիրեց երկրին»: Այսինքն՝ երկիրն ունեցել է բնիկ տերեր, այն էլ «հայկազյան նախնական ցեղի եռանշահիկներ», որոնց սրահարելով՝ ինքը դարձավ երկրի տեր: Հաջորդ նախադասությամբ պատմիչը հաղորդում է, որ Միհրանի ծոռ քաջ Վարդանը երեք տարում կառուցում է Գարդմանի բերդը, ապա լրացնում նախապապի կիսատ թողածը: Այս քաջ Վարդանը նս «իր սրտում դավ է նյութում հայկազյան նախնական ցեղի եռանշահիկների դեմ, որոնց մասին վերևում հիշատակել ենք. որպես թե ի սեր բարեկամության ճաշի է հրավիրում և նրանց համար կորստյան հաց է պատրաստում, տալիս է ճաշի մեջ ուտելու իրենց արյան գնով: Վաթսուն մարդ է գլխատում, որոնցից միայն իր ցեղին փեսայացած Ջարմիհր եռանշահիկին է թողնում կենդանի: Սրանք այսպես տիրեցին Աղվանքին. նաև իրենց հնազանդեցրեց Կովկասի վայրենի ցեղերին»[1]:

Որ քաջ Վարդանի կառուցած բերդը գտնվում է Կուրի ձախափնյակում, գետից բավականին վերև, հաստատվում է ոչ միայն նրանով, որ հասել է մեր օրերը Գիրդիման վերանվանումով, այլև Ջիվանշիրի անվան հետ կապված մի կողմնակի իրողությամբ: Քաջ Վարդանի ծոռ Ջիվանշիրը եկեղեցի է կառուցում Գարդմանա բերդում, որի բացման կապակցությամբ աստծուն հղած աղոթքում, ի թիվս այլ բաների, խնդրում է. «Սա դարձրու աղոթքների ու պաղատանքների տուն նրանց համար, որոնք արևելքում ծովեզրյա են»[2]:

Միամտություն կլինի կարծել, թե ծովեզերքին բնակվող հավատացյալները կցանկանային հարյուրավոր կիլոմետրեր անցնելով հասնել Ուտիքի Գարդման՝ աստծուն աղոթելու: Իսկ եթե այս ամենին ավելացնենք Աղվանից աշխարհի անխոնջ հետազոտող Մ. Բարխուդարյանի վկայությունն այն մասին, որ Շամախու մոտի Գարդման բերդից քիչ հեռու առկա է նաև Ջիվանշիրի անունը կրող մի բերդ, որը կիսավեր վիճակում հասել է մինչև 19–րդ դարի վերջը, ամեն ինչ կհստակվի, ամեն ինչ կընկնի իր տեղը:

«ԺԲ բերդն Աղվանից կոչվում է այժմ Ջիվանշիրի դալա (բերդ), որ հիմնված է Գարդման բերդի արևմտյան հանդեպ, Գարդման գետակի աջ կողմում, Կովկաս սարից Շեյխ–Լալա թուրքաբնակ գյուղի վրա կախված մի լեռնաբազկի վրա»[3]:

[1] Մ. Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, 1969, էջ 133:
[2] Նույն տեղը, էջ 113:
[3] Նույն տեղը, էջ 283:

[1] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 133, 134:
[2] Նույն տեղը, էջ 146, 147:
[3] Մակար եպս. Բարխուդարյանց, Աղվանից երկիր և դրացիք, էջ 111:

Վերոբերյալ վկայությունները ցույց են տալիս, որ Կուրի ձախափնյակն զբաղեցնող մի պատկառելի երկրատարածք ևս՝ Դաշտ ի Բազկան–Բաղասական–Գարդման, հետագայի Շիրվանի հարավային մասը, զբաղեցրած են եղել «հայկազյան նախնական ցեղի եռանշահիկների» ներկայացուցիչները, որոնց հետնորդները տարբեր դարաշրջաններում տարբեր կարողունակությամբ, քանակական տարբեր կազմերով հարատևել են մինչև 1988 թ., մինչև գորբաչովյան վարչակարգի կազմակերպած ցեղասպանությունը:

Պատմական Դաշտ ի Բազկան–Բաղասական–Գարդմանի և Աղվանքի արևելյան հարևանն արդեն Կասպք–Փայտակարանն է՝ իր Ալևան Յոթնփորակյան Բագին, Բագավան գավառներով, որոնք, ինչպես նշվել է սկզբում, դեռևս մ.թ.ա 8–րդ դարի վերջերին Արգիշտի երկրորդը միացրել է Վանի Արարատյան թագավորությանը և հիմնարկել Մարդական ու Բագու բնակավայրերը, ուր հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդն անպակաս է եղել:

Այսպիսով՝ մենք գործ ունեցանք մի Աղվանից թագավորության հետ, որի հարավային սահմանը եղել է Կուր գետը, իր կազմում ունեցել է տարբեր լեզուներով խոսող ցեղեր, բայց գետի ամբողջ ձախափնյակը, որը նույնն է, թե երկրի ամբողջ հարավը, ծայրից ծայր զբաղեցրել է մի Աղվանք, իր Ուստան ի մարզպան, Կամբեճան, Փոքր Հայք, Դաշտ ի Բազկան բաղադրիչներով, ուր անհիշելի ժամանակներից ապրում էին «հայկազյան նախնական ցեղի» ներկայացուցիչները: Ահա թե ինչու Արշակ Մեծը, Մասքութների Արշակունյանց թագավորություն ստեղծելով, պետությունն անվանակոչեց երկրատարածքի ամենածավալուն ու ամենակայուն միավորի՝ Աղվանքի անունով, չնայած թագավորության մայրաքաղաքը դարձրեց Մասքութների երկրում գտնվող Չողը:

Մենք Աղվանից աշխարհի հյուսիսային մարզերին չենք անդրադառնում՝ գտնելով, որ հայկական տարրը կարող էր այնտեղ թափանցել Աղվանից թագավորություն ձևավորվելուց հետո միայն՝ հասնելով մինչև Դերբենդ և ավելի հյուսիս:

Դիտարկենք միայն, որ թվական ունեցող հայերեն ամենահին արձանագրությունները վերաբերում են 6–րդ դարին: Ուշագրավ է, որ հայտնաբերված չորս արձանագրությունների ցանկում 2–րդն ու 3–րդը հայոց Աղվանքում են հայտնաբերվել: Ահա դրանք՝ Հառիճ՝ 568, Խաչմաս՝ 573, Շամախու մոտ՝ 585, Սեբաստիա՝ 595:

Հայերի ներթափանցումն Աղվանից թագավորության հյուսիսային կողմերն այնքան հիմնովին և ընդգրկուն է եղել, հայերի տեսակարար

կշիռն այքան բարձր, որ արաբական տիրակալության վերացումից հետո այնտեղ ևս ստեղծվել է հայոց գավառական թագավորություն և գոյատևել մինչև 13–րդ դարի սկիզբը: Ահա ինչ է գրում այդ մասին 12–րդ դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ: «Կային և ուրիշ հայ թագավորներ՝ Դարբանդ գավառում, որ կոչվում էր Կապան՝ օգերին և աղվաններին սահմանակից. նրանք ազնիվ և սրբակրոն թագավորներ էին, և պատարագներում հիշվում են նրանց անունները՝ աստվածասեր այլ սուրբ թագավորների շարքում. այն է՝ Վաչագանի, նրա որդու՝ Գոշատակի որդու՝ Փիլիպեի, Փիլիպեի որդու՝ Սնադայի, Սնադայի որդու՝ Սենեքերիմի, Սենեքերիմի որդու՝ Գրիգորի, որը մեր այս մատյանի գրության ժամանակ դեռ կենդանի էր»[1]: Ուռհայեցու պատմությունը հասնում է մինչև 1136/1137 թթ.:

Ինչ մնում է Ստրաբոնի հիշատակած 26 տարալեզու ցեղերին, ապա նրանք զբաղեցրել են նորաստեղծ պետության հյուսիսային տարածքները և բնավ էլ չեն անհետացել. նրանց մեծ մասն այսօր էլ գոյատևում է Դաղստանում:

***

428 թ. Պարսկաստանի արքայից արքա Վռամ 5–րդը վերացնում է Արշակունյաց թագավորությունը իրեն ենթակա Հայաստանում: Դա, լինելով 387 թ. պարսկա–բյուզանդական դաշնագրի տրամաբանական շարունակությունը, միաժամանակ չէր սահմանափակվում հայոց պետականության վերացմամբ, այլ լուծում էր քաղաքական ավելի մեծ ընդգրկումների հարցեր: Պարսկական արքունիքը իր տիրակալության տակ գտնվող հյուսիսարևմտյան երկրներում վարչաքաղաքական և տարածքային նոր վերածնումներ է կատարում. Հայաստանի հետ միաժամանակ մարզպանական են դառնում նաև Վրաց և Աղվանից թագավորությունները: Քաղաքական վերածնումները ուղեկցվում են Հայաստանի հաշվին տարածքային վերածնումներով. վրացական մարզպանությանն է կցվում Գուգարաց աշխարհը, Ատրպատականին է կցվում Փայտակարանը, իսկ Աղվանից մարզպանությանն են կցվում Արցախ և Ուտիք մարզերը: Քաղաքական այդ ակտով ոչ միայն ջլատվում էր Հայաստանի դիմադրողական կարողությունը պարսկական ագրեսիվ ոտնձգությունների դեմ ծավալվելիք մաքառումներում, այլև էթնիկական հանգամանքներ ստեղծվում Հայաստանի, Վրաստանի և Աղ-

[1] Ուռհայեցի, ժամանակագրություն, 1973, էջ 151–152:

վանքի միջև. մի քաղաքականություն, որ բոլոր տիրողները անշեղորեն կիրառել են հազարամյակներ շարունակ՝ մեր օրերում հանգեցնելով Հյուսիսային Իռլանդիայի և Կոսովոյի, Մերձդնեստրի և Աբխազիայի, Հարավային Օսեթիայի ու Արցախի և նման ու նման հիմնահարցերին:

Աղվանից մարզպանության ստեղծումով և Մեծ Հայքի Արցախ և Ուտիք աշխարհների՝ այդ մարզի կազմ մտցնելու իրողությամբ էլ պայմանավորվում է Արևելյան Անդրկովկասի պատմաքաղաքական հետագա զարգացումների ընթացքը: Նախևառաջ հայաշխարհ բուն Աղվանքին՝ իր Ուտան ի Մարզպան, Կամբեճան, Փոքր Հայք, Դաշտ ի Բազկան (Հեջերի) բաղադրամասերով, միանում են Ուտիքն ու Արցախը՝ տերիտորիայով ու մարդկային թվակազմով բուն Աղվանքից գերակշիռ մի միավոր, որով նորաստեղծ մարզպանության մեջ հայերն իրենց կազմով ավելի քան կրկնապատկվում են, եթե ոչ եռապատկվում: Միաժամանակ նախկին երկու թագավորությունների՝ Հայաստանի և Աղվանից թագավորության միջև Կուր գետի դերը, որպես բաժանարար սահմանի, վերանում է և միևնույն ժողովրդի երկու հատվածները միանում են նաև վարչատերիտորիալ առումով, մարզի շրջանակներում դառնում մի միասնական ու պատկառելի ուժ: Դրան ուղեկցում է երեկվա Աղվանից թագավորության կազմի մեջ գտնվող այլ էթնիկական տարրերի տարանջատումը. մի գործընթաց, որ սկիզբ է առնում հենց մարզպանության ծնավորումից: Զարգացող իրադարձություններին ժամանակակից ու ականատես Եղիշեի ժլատ ու թռուցիկ տեղեկություններից պարզվում է, որ նորաստեղծ մարզպանության կազմի մեջ ընդգրկված առանձին էթնիկական միավորներ ստացել էին որոշակի տեղական ինքնավարություն, նույնիսկ հիշատակվում են թագավորություն, թագավոր տիտղոսներով:

Անդրկովկասյան երեք երկրների նկատմամբ որդեգրած նոր քաղաքականությունը, որ դրսևորվում է կրոնափոխության պահանջով, Հազկերտը գործողության մեջ է դնում ամենից առաջ հարևան ու բախտակից այդ երեք երկրների զինական ուժերը չեզոքացնելու միջոցառումով: Նրա կարգադրությամբ Անդրկովկասյան երեք երկրների այրուձին տարվում է տերության արևելյան սահմանագլուխ՝ Ապար աշխարհը, Քուշանների երկրին տիրելու պատրվակով: Եղիշեն ներկայացնում է Հազկերտի հրովարտակը և ավելացնում. «Հրովարտակ հասավ Հայոց, Վրաց և Աղվանից և Լփնաց... աշխարհները և շատ ուրիշ հեռավոր տեղեր, որոնք առաջ պարտավոր չէին այն ճանապարհը գնալ»[1]:

[1] Եղիշե, նշված աշխատությունը, էջ 24:

Ինչպես տեսնում ենք, Աղվանից աշխարհի կողքին Եղիշեն հիշատակում է նաև Լփնաց աշխարհը, որպես ինքնուրույն միավոր, չնայած այն մտնում է Աղվանից մարզպանության կազմի մեջ: Նույն իրողությանը Եղիշեն անդրադառնում է նաև կրոնափոխության համար արքունիքի կողմից մոգերին տրված հանձնարարականում: «Դեռ չէին հասել Հայոց մեծ աշխարհը,— նշում է Եղիշեն,— որ փայտի միջոցով վիճակ էին գցում, թե ո՞ր ժողովուրդը (մոգերի) որ դասին է բաժին ընկնելու աշակերտելու համար: Որովհետև առհասարակ հրաման էին առել արքունիքից մտնել ինչպես Հայոց, այնպես էլ Վրաց և Աղվանից և Լփնաց ... աշխարհները»[1]:

Երրորդ անգամ արդեն Եղիշեն խոսում է Լփնաց թագավորության գոյության մասին Խաղխաղի ճակատամարտի առիթով: Այդ ճակատամարտում Աղվանից մարզպան Սեբուխտի գլխավորած պարսկական զորքերի կողքին հայոց դեմ կռվում էին նաև Լփնաց թագավորի զորքերը և... «Արշավիր Արշարունին մռնչաց առյուծի պես և հարձակվեց վագրի նման, խփեց–սատկեցրեց Լփնաց թագավորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիվ համհարզներին էլ նրա հետ սպանեց»[2]:

Խաղխաղի ճակատամարտի նկարագրության մեջ Եղիշեն հիշատակում է նաև Աղվանից մարզպանության կազմի մեջ գտնվող մի երկրորդ՝ Բաղասական թագավորություն: «Այստեղ (ճակատամարտի դաշտում) Բաղասական թագավորի թագավորազուններից ոմանք ետ դարձան Հայոց նախարարներից մեկին ձիուց վայր գցեցին»[3]:

Երկրորդ անգամ Բաղասական թագավորության գոյության մասին Եղիշեն հիշատակում է ապստամբությունից հետո Հազկերտի կազմակերպած դատի առիթով: Տիզբոնի դատավարության ժամանակ Վասակ Սյունեցուն ներկայացված մեղադրանքներից մեկն էլ այն էր, «թե ինչպես նա բարեկամացել էր Հոն Հեռանի հետ՝ Բաղասական թագավորի հետ միաբանած..., այնպես որ թագավորն ինքն էլ հասկացավ այդ մտադրություններն ու սպանեց Բաղասական թագավորին»[4]:

Որ Աղվանից մարզպանության կազմի մեջ ընդգրկված որոշակի էթնիկական խմբերի տրվել է տեղական ինքնավարություն և այդ ինքնավարության տարբեր սուբյեկտներ տարբեր դիրքավորում ունեին պարսկական քաղաքականության նկատմամբ, ամբողջանում է Եղիշե-

[1] Նույն տեղը, էջ 57:
[2] Նույն տեղը, էջ 79:
[3] Նույն տեղը, էջ 78:
[4] Եղիշե, նշված աշխատությունը, էջ 125–26:

ի ներկայացրած իրադարձությունների ընդհանուր համակարգում: Խաղխաղում Վարդան Մամիկոնյանի գլխավորած զորքի դեմ ճակատ են կազմել մարզպան Սեբուխտի, Լփնաց և Բաղասական թագավորների զորքերը, բայց մեջտեղ չեն երևում մարզպանության ամենախոշոր ու հիմնական էթնիկական տարրի՝ Աղվանից աշխարհի դերակատարները: Պարզվում է, որ Հայաստանի հետ միաժամանակ Աղվանքում ևս իրականացնում էին կրոնափոխություն, և Սեբուխտ մարզպանը սկսել էր Աղվանից եկեղեցիների ավերումը: Իսկ Աղվանից նախարարներից ու շինականներից շատերը, չկարողանալով դիմադրություն ցուցաբերել, ստիպված քաշվել էին լեռները՝ կրոնափոխությունից խուսափելու համար: Երբ Հայաստանի ապստամբած նախարարների հանձնարարությամբ Վարդան Մամիկոնյանը դուրս է գալիս Սեբուխտի դեմ, ջարդում նրանց զորքերը և հաղթականորեն առաջ շարժվում, «Աղվանից նախարարներից ու բոլոր շինականներից շատերն էլ, որոնք աստծու անվան համար ցիրուցան էին եղել Կապկոհ (Կովկասյան)լեռների ամուր տեղերում, երբ տեսան այդ գործի հաջողությունը, որ աստված կատարում էր Հայոց զորագնդի միջոցով, նրանք նույնպես եկան–ժողովվեցին և խառնվեցին հայոց զորքի հետ և նրանց հետ միաբան ու հավասար մասնակցեցին քաջության գործին: Այնուհետև գնացին–արշավեցին Հոների պահակի ճրա, որ բռնությամբ գրավել էին պարսիկները, առան, քանդեցին պահակը և կոտորեցին ներսում բնակված զորքը և Դուռը հանձնեցին Վահանին, որ Աղվանից թագավորների ցեղից էր... և տեղնուտեղը այն մարդուն, որին հանձնել էին Դուռը, հենց նրան էլ դեսպան ուղարկեցին հոների երկիրը և հոների երկրին գործակից ուրիշ շատ բարբարոս ազգերի մոտ՝ նրանց հետ բանակցելու և դաշն կնքելու»[1]:

Ըստ էության՝ Եղիշեն հայտնում է ավելին, քան գրել է իր ոսկեղենիկ մատյանում: Այդ ճշմարտությանն ենք ականատես լինում իրադարձությունների հետագա զարգացումներում: Եղիշեի հաղորդումներից պարզվում է, որ նորաստեղծ մարզպանության կազմում Լփնաց և Բաղասական թագավորների կողքին եղել է նաև մի երրորդը՝ Աղվանից թագավորությունը, որի Առանշահիկ թագավորական տան ներկայացուցիչները ազգակցական կապերով սերտորեն կապված են եղել պարսից արքայական տան հետ: Պարզվում է, որ հիշյալ ժամանակահատվածում Աղվանից թագավորը եղել է հենց Հազկերտի քրոջ որդին, իսկ կինն էլ

[1] Նույն տեղը, էջ 79–80:

նույն ընտանիքից: Հազկերտը բռնությամբ դավանափոխել է Աղվանից թագավորին, նրա հետ նաև շատ նախարարների: Իսկ նախարարների մի մասն էլ կրոնափոխությունից խուսափել է՝ ապաստանելով Կապկոհ լեռների ամուր տեղերում և հարմար պահին իջել–միացել է Վարդան զորավորին՝ Աղվանից թագավորական տան անդամ Վահանի գլխավորությամբ:

Բռնությամբ կրոնափոխված Աղվանից թագավորը, սակայն, ազգային շահերին ու ավանդներին հավատարիմ, հայրենիքի ճակատագրով մտահոգ պետական գործիչ է եղել: Հարգկերտի մահից հետո Պարսկաստանում ստեղծված քաղաքական նոր իրականության ընձեռած հնարավորությունների օգտագործմամբ ամենից առաջ նա ձեռնարկում է իր թագավորության՝ Արցախով և Ուտիքով զորացված նոր Աղվանիքի ամրապնդման գործը: Նախկին Աղվանքի մայրաքաղաք Կապաղակն արդեն ծայրամաս էր, անապահով կովկասյան ցեղերի ներխուժումների առաջ: Պարսից տիրակալին սիրաշահելով՝ նրա անունով նոր մայրաքաղաք է ստեղծում իր Նոր Աղվանքի կենտրոնական մասում, Ուտիքի Ուտի Առանձակ գավառում հիմնարկում է Պերոզապատ–Պարտավը, որը միաժամանակ դառնում է ընդհանուր մարզպանական կենտրոն հեռավոր Չողի փոխարեն: Նոր Աղվանքի տիրակալը պահը հասունացած է համարում հաջորդ վճռական քայլը կատարելու համար: Նա թոթափում է բռնությամբ պարտադրված մոգական կրոնը, վերադառնում քրիստոնեական հավատին և ապստամբության դրոշ պարզում պարսկական տիրապետության դեմ: «Աղվանից թագավորը չէր ուզում նորից ծառայության տակ մտնել,— վկայում է Եղիշեն,— այլ նա քանդեց Ճորա պահակը և Մասքութների զորքն այս կողմն անցկացրեց, միաբանեց տասնմեկ լեռնական թագավորներին և պատերազմով ընդդեմ կացավ Արյաց զորքին և մեծ վնաս պատճառեց արքունի զորքերին»[1]:

Մի ամբողջ տարի պատերազմական գործողություններ ծավալվեցին Աղվանից թագավորի դեմ, արքայից արքա Պերոզը կաշառելով պատերազմին մասնակից դարձրեց նաև Հոների և Թավասպարների բազմաքանակ զորքերին, ավերեցին «աշխարհի մեծ կեսը», բայց թագավորին ծնկի բերել չկարողացան: Վերջապես Պերոզ արքան է նահանջողը: «Պարսից թագավորը դարձյալ մարդ ուղարկեց նրա մոտ՝ «իմ քրոջն, ասաց, և քեռորդուս ուղարկիր ինձ մոտ, որովհետև ի բնե մո-

[1] Եղիշե, նշված աշխատությունը, էջ 179:

գական կրոնին հետևող էին, և դու քրիստոնյա դարձրիր, իսկ աշխարհը թող քեզ մնա»[1]:

Աղվանից թագավորը մորն ու կնոջը վերադարձնում է Պարսկաստան, հրաժարվում աշխարհիկ կյանքից և ավետարանը ծեռքին կյանքի մնացած մասն անցկացնում մենակյացների հետ: Աղվանից այդ թագավորը Կաղանկատվացու Պատմության մեջ օժտվում է անունով. նա Աղվանից թագավոր Վաչեն է, Պերոզապատա–Պարտավի հիմնադիրը:

Աղվանից Վաչե թագավորի այս բուռն ու դրամատիկ քաղաքականությունն իր պատմաքաղաքական նշանակությամբ համեմատելի է իր անմիջական հաջորդի՝ Վաչագան Բարեպաշտի կատարած դերի հետ: Վաչեն իր փոքրաքանակ կյանքով հաստատեց, որ անդառնալիորեն ստեղծվել է պատմական մի նոր իրականություն, պատմության թատերաբեմ է իջել մի նոր Աղվանից հայաշխարհ, որն իր լեզվով ու մշակույթով, իր հավատով ու քաղաքական դիրքորոշումներով միշտ մնալու է իր մայր հատվածի հետ ու կողքին, իր մայր հատվածից անբաժան, պատմական բոլոր փոթորիկներին դիմակայելու է միասին ու միատեղ, չնայած պատմական ճակատագիր էր դառնալու բաժան–բաժան արված հայաշխարհների հետագա միավորման, մի միասնական պետական կառույցի մեջ վերամեկտեղվելու անհնարինությունը:

Որ այդ նոր Աղվանքը հայի հայրենիք էր, գիտեին նաև Անդրկովկասի պատմությանն անդրադարձած օտարազգի հեղինակներն անխտիր: Կբավարարվենք մի վկայությամբ միայն: «Ալբուլդան» հռչակավոր աշխատության հեղինակ Իբն ի Ֆակիհը, որ իր գիրքը գրել է Հիջրեթի երրորդ դարի վերջերին (900 թ.) Հայաստանի տարածքը բաժանել է չորս մասի և անվանել. Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմինիա». նա Առանը (Աղվանքը) համարում է Առաջին Արմինիայի մասերից, իսկ Պարտավ, Բելուական, Կապաղակ, Շիրվան, Շաբրան, Շաքե, Շամքոր և Բալասաջանը համարում է Առանի քաղաքներից: Նա գրում է. «Առանը Արմինիայի առաջին հողային հատվածն է»[2]:

Այս նոր հայաշխարհն անցյալից իր հետ բերել էր մայր ժողովրդի հետ միասնական լեզուն, քրիստոնեական հավատն ու ազգային գիրը, որոնք դարերի հոլովույթով իրենց հետագա հայաշունչ զարգացումը ստացան: Աղվանից աշխարհը դարձավ համահայկական հասարակական կյանքի անբաժան ուղեկիցն ու մասնակիցը, համազգային մշակույթի անընդմեջ գործող օջախներից մեկը, իր պատկառելի ավանդը մուծեց ինչպես ազգային–ազատագրական շարժումների դարավոր պատմության մեջ, այնպես էլ համահայկական մշակույթի գանձարանը հարստացրեց ընդհուպ մինչև մեր օրերը: Ավելի քան 1500–ամյա քաղաքական վայրիվերումները, անընդմեջ իրար փոխարինած նվաճողների կատարած վարչատարածքային վերածնումները, ժամանակին ստեղծված պատմական վավերագրերում հաճախակի հանդիպող հակասական վկայությունները խստագույնս բարդացրել են Արևելյան Անդրկովկասի, այդ թվում նաև Հայոց Աղվանից աշխարհի ճշմարիտ պատմության վերականգնման գործը: Մի կրկին անգամ ենք ընդգծում, որ դրությունն ավելի ծանրացավ, երբ անցյալ դարի 30–ական թվականներին Ստալինը հանձնարարեց ադրբեջանցի անվանակոչում ստացած ժողովրդի համար պատմություն ստեղծել, և պատմական ճշմարտության վերհանմանը փոխարինեցին նենգափոխումներն ու հորինումները: Նենգափոխումների ալիքը հասցրեցին Ղարաբաղ, հեռուն գնացող քաղաքական նկատառումներով Արցախ–Ղարաբաղի հայությանը որակելով բռնությամբ հայացված ադվաններ, ադրբեջանցի կոչվող ժողովրդի ուսխնիներ: Կենտրոնի կողմից խրախուսվող ու հովանավորվող այսպիսի գաղափարաքաղաքական մթնոլորտի պայմաններում հերոսության հոմարժեք էր արդեն «սեփականաշնորհված» Աղվանից աշխարհ հասկացությունից գոնե Արցախ–Ղարաբաղի պատմության փրկությունը պատմագիտական կտրվածքով: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ վերջին տասնամյակներին ներկայացվող աշխատություններում Աղվանից աշխարհի պատմությունը միակողմանիորեն հանգեցվել է Արցախ–Ղարաբաղի պատմության՝ պատմական իրողությունների սեղմեսման, տարբեր դարերում կատարված փոփոխությունների ոչ ճիշտ արժեքավորմամբ խաթարվել Աղվանից հայաշխարհի ամբողջական պատմությունը:

Ավելորդ համարելով գիտական շրջանառության մեջ գտնվող 1500–ամյա այդ պատմության վերակրկնությունը՝ կհետապնդենք մի հասնելի խնդիր. կփորձենք ժամանակի պատմական իրողություններով ու վկայություններով մատնացույց անել այդ պատմության հետևողական միակողմանիությունը, որի հետևանքով անտեսվել է Աղվանքի ճակատագիրը:

Նախ պետք է նորից կարդալ Խորենացուն՝ խուսափելու համար զանկալի ու կամայական մեկնաբանություններից: Խորենացին հայտնում է, թե Վաղարշակը «հաստատում է արևելյան հյուսիսային կողմի

[1] Նույն տեղը, էջ 180:
[2] Ենաեթուլլահ Ոեզա, Ազարբայջան և Առան, 1994, էջ 28:

մեծ–անվանի բազմաբյուր կուսակալությունը, Կուր կոչված մեծ գետի ընթացքով, որ անցնում է մեծ դաշտով»: Խորենացու այդ վկայությունը բնավ էլ չի ենթադրում, որ հիշատակվող Կուր մեծ գետը դառնում է ստեղծված կուսակալության հյուսիսային սահման, այլ մատնացույց է անում միայն Կուր գետի ընթացքով տարածված «մեծ դաշտը»: Այնուհետև Խորենացին նշում է, որ Սիսակից սերված Առանի ցեղը «ժառանգեց Աղվանից դաշտը և այս դաշտի լեռնակողմը»[1]: Իսկ թե դա ինչ լեռնակողմ է, մենք արդեն գիտենք Եղիշեի պատմությունից: «Աղվանից նախարարներից ու բոլոր շինականներից շատերն էլ, որոնք աստծո անվան համար ցիրուցան էին եղել Կապկոի լեռների (Կովկասյան լեռների) ամուր տեղերում»[2]: Այսինքն՝ նախամարզպանական կամ բուն Աղվանքի հյուսիսի՝ Կովկասյան լեռների ամուր տեղերում:

Մի վերջին, ճշգրտող երանգ էլ ունի Խորենացու հաղորդումը: «Ասում են, որ սրա (Առանի) զավակներից են սերվել Ուտեացիների ազգը և Գարդմանցիների, Ծավդեացիների, Գարգարացիների իշխանությունները»[3]: Մի դեպքում Առանից է սերվել Ուտիացիների ազգը, մյուս դեպքերում սերվել են իշխանությունները: Դա ևս ինչ–որ բան է ասում:

Աղվանից Վաչե թագավորի աշխարհաթող լինելուց հետո երկիրը 30 տարի մատնվում է անիշխանության, մինչև որ Վաչեի Հազկերտ եղբոր որդի Վաչագանին հաջողվում է վերականգնել երկրի պետականությունը և ծավալել մի այնպիսի բուռն աշխարհաշեն գործունեություն, որ ժամանակակիցների կողմից արժանանում է Բարեպաշտ պատվանունին: Վաչագան Բարեպաշտը ևս բռնի կրոնափոխված իշխանազուններից է եղել, բայց օգտվելով Նվարսակի պայմանագրով պարսկական Վաղարշ արքայից ստացած հավատի ազատության իրավունքից, իր թագավորության մեջ վերականգնում է քրիստոնեական հավատը, ծեռնամուխ լինում Նոր Աղվանքի վերակերտման գործին: Ամենից առաջ նա հետամուտ է լինում քրիստոնեական հավատի ամրապնդմանը, տարվա օրերի թվով եկեղեցիներ կառուցում երկրում, զարկ տալիս ուսման ու լուսավորության գործին: «Հրաման է տալիս իր իշխանության ենթակա Արցախ անառիկ երկրին՝ թողնել և լքել դիցապաշտության օրենքները՝ աղտեղի աստվածների զոհամատույց պաշտամունքը: ... Բազմաթիվ տեղերում նշանակում էր եպիսկոպոսներ, քահանա-

[1] Մ. Խորենացի, նշված աշխատությունը, էջ 137:
[2] Եղիշե, նշված աշխատությունը, էջ 79:
[3] Մ. Խորենացի, նշված աշխատությունը, էջ 137:

ներ, տեսուչներ: Եվ Կամպեճում, Աղվանքում միևնույն հրամանն էր տալիս ու հաստատում»[1]:

Ինչպես տեսնում ենք, Արցախ ամուր աշխարհի հետ նույն միջոցառումները գործադրվում են նաև ձախափնյա Կամբեճանում ու Աղվանքում:

Վաչագան Բարեպաշտի վերակառուցումների պսակը սահմանադրական միապետության իրավական համակարգի ստեղծումն էր, որով կանոնակարգվում են հասարակական բոլոր խավերի իրավունքներն ու պարտականությունները: Այդ նպատակով նա ամառանոցային Աղվեն բնակավայրում գումարում է «մի բազմամարդ ժողով», որին մասնակցում էին երկրի բոլոր կողմերի հոգևոր և աշխարհիկ տերերը: Ահա այդ ժողովին մասնակիցների կազմը.

«Ես Վաչագան՝ Աղվանից արքաս, Շուփհաղիշոն՝ Պարտավի արքեպիսկոպոսը, Մանասեն՝ Կապաղակի եպիսկոպոսը, Հունանը՝ Հաշուի եպիսկոպոսը, Անանիան ու Սահակը, և Ուտիքի Փոդ եպիսկոպոսները, Հովսեփը՝ Կաղանկատուքի քահանան, Մատթեն՝ Պարտավի քահանան, Թոման՝ թագավորի պալատական քահանան, Պողոսը՝ Գայեգուճի քահանան, Շմավոնը՝ Ցրիի քորեպիսկոպոսը, Մատթեն՝ Դարահոջի քահանան, Աբիկազը՝ Բեթի քահանան, Ուրբաթայրը՝ Մանուչեի քահանան, Հովել, Պարպ, Միգե, Հակոբ քահանաները, ազնվական մարդիկ և Արցախի նահապետները, Կաղանկատուքի Բակուր նահապետը և այլ բազմաթիվ մարդիկ»[2]:

Այս ցուցակում արձանագրված Կապաղակը, Հաշուն, Բեթը ու Ցրին Անդրկուրյան գավառներն են, Պարտավը, Ուտիքը, Կաղանկատուքը, Դարահոջը ներկայացնում են Ուտիքը, Արցախի հոգևորականների փոխարեն հիշատակվում են նահապետները, նույնիսկ բացակայում է մի այնպիսի կրոնական կենտրոնի ներկայացուցիչ, ինչպիսին Ամարասի եպիսկոպոսությունն է: Ինչ մնում է Աղվանքի որոշումները կնքող տասնհինգ նահապետներին, նրանք արձանագրված են սոսկ անունով, բացի մեկից՝ «Գարդմանա տեր քաջ Վարդանը», և հնարավոր չէ իմանալ, թե ինչ գավառներ են ներկայացնում նրանք:

Այսպիսով՝ Վաչագան Բարեպաշտը թագավորում էր մի Աղվանք հայաշխարհի, որի անժխտելի բաղադրամասեր էին նաև նախկին Աղվանքն իր Կամբեճան, Փոքր Հայք, Ոստան ի Մարզպան, Դաշտ ի Բազ-

[1] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 35–37:
[2] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 67:

կան–Հեջերի–Հաշու գավառներով: Նրա ենթակայության տակ էր Նույնիսկ Ցրին, ուր Վաչագանի կողմից կուսակալ էր նշանակված Եսվաղենի ապօրինի որդին՝ Խոճկորիկը:

Վաչագան Բարեպաշտի աշխարհաշեն գործունեությունից հետո լռության վարագույր է իջնում Աղվանից աշխարհի վեցերորդ դարի քաղաքական կյանքի վրա: Հայտնի է միայն, որ Խոսրով Անուշիրվանն իր երկարատև թագավորության ընթացքում հիմնովին վերակառուցել է Ճորա պարիսպը, հիմնադրել Շամախի և այլ քաղաքներ, ընդմիջումներով ծավալվել են պարսկա–բյուզանդական պատերազմներ մինչև 7–րդ դարի 3–րդ տասնամյակը (539–62, 571–91, 604–30): Բյուզանդիայի հրահրմամբ խազարները դաժան ավերածությունների են ենթարկել Աղվանքը: 6–րդ դարը Աղվանքի համար վերջանում է նրանով, որ դարի վերջին խստագույնս պատժվում են պարսկական տիրապետության դեմ ապստամբած աղվանից իշխանները: Այդ մասին Աղվանից պատմիչը արձանագրում է. «Սրանք (իշխանները) ապստամբեցին պարսից թագավորի դեմ և նրանցից շատերը ոչնչացան՝ մի մասը սրով, մի մասը խեղանդամվելով, իսկ մյուս մասը հեռավոր երկրներ տարագրվելով»[1]:

Դաժան վայրիվերումների ու ավերածությունների այս դարում Աղվանից աշխարհի ներքին տեղաշարժերի մասին պահպանվել է միայն հոգևոր կյանքին վերաբերող մի իրողություն: 551 թ. Աղվանքի հայրապետական աթոռը Չողից տեղափոխում են Պարտավ մայրաքաղաքը, և հայրապետ է նշանակվում Մեծիրանց գավառի եպիսկոպոս Աբասը: Այդ տարիներին բորբոքվել էին դավանաբանական վեճեր. նեստորականները փորձում էին իրենց գաղափարները տարածել Հայաստանում ու Աղվանքում: Այդ կապակցությամբ հայոց ընդհանրական կաթողիկոս Հովհաննեսը, հայաստանյան մի շարք եպիսկոպոսների հետ ահազանգող նամակ են հղում հայոց եկեղեցուն ենթակա Աղվանքի հոգևոր պետերին:

«Բարիներին, արդարամիտներին, աստվածասերներին, իմ սիրելի եղբորն ու աթոռակցին՝ Աղվանից կաթողիկոս տեր Աբասին, Բաղասատի եպիսկոպոս Մովսեսին, Կապաղակի եպիսկոպոս Գրիգորին, Ամարասի եպիսկոպոս Հռոմիկին, Բաղասականի եպիսկոպոս Տիմոթեոսին, Շաքիի եպիսկոպոս Ամբակումին, Գարդմանա եպիսկոպոս Հովհաննկին, Մեծկողմանց եպիսկոպոս Ղևոնդին»[2]:

[1] Նույն տեղը, էջ 115:
[2] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 92:

Հասցեատեր յոթ եպիսկոպոսներից 4–ը Քուռի աջափնյակից են, երեքը՝ ձախափնյակից՝ Կապաղակից, Շաքիից ու Բաղասականից:

Աղվանից աշխարհի համար պակաս անմխիթարական չսկսվեց նաև 7–րդ դարը: Շարունակվում էին պարսկա–բյուզանդական ավերիչ պատերազմները Աղվանքում, իրենց ավերածություններն ու գերեվարումներն էին կատարում իրար փոխարինող խազիրներն ու հոները, երկիրը մատնված էր կատարյալ անտերության: Այս պայմաններում քաղաքական ասպարեզ է իջնում Աղվանք թափանցած Միհրանյան տոհմը:

Ներկայացնելով Ջիվանշիրի կառավարման տարիները՝ Աղվանից աշխարհի պատմության հեղինակը նշում է, որ Ջիվանշիրը «իր անձով ամբողջ Աղվանքն էր ներկայացնում»: Արդեն մայրամուտ ապրող Սասանյան տերությունից ապստամբած Ջիվանշիրը պարսկական զորքերին ջարդում է Կամբեճանում և Աղվանք թափանցած խազիրների զորքերին Աղվանքից քշում դեպի Չող: Վերջապես Ջիվանշիրի կառավարման ժամանակ է, որ Աղվանքի կաթողիկոս է ընտրվում Շաքիի եպիսկոպոս Եղիազարը (683–689):

Ամբողջ Անդրկովկասի հետ Աղվանից աշխարհը ևս դարի 40–ական թվականներից ենթակա է արաբական տիրակալությանը: Այժմ էլ բորբոքվում են արաբա–բյուզանդական հակամարտությունները: Պատմիչն ինչքան գովեստներ է շռայլում Աղվանից իշխան Ջիվանշիրի հասցեին, միաժամանակ նշում է, որ նա հարկատու է երեք տիրողների՝ արաբներին, հոներին ու բյուզանդացիներին: Իսկ նրան փոխարինած Վարազ–Տրդատին իր որդիների հետ տեսնում ենք բյուզանդական գերության, վերջինիս փոխարինած Շերո իշխանին էլ արաբական գերության մեջ: Քաղաքական նման պայմաններում Աղվանքի ներքին կյանքի մասին տեղեկություն ենք իմանում դարձյալ հոգևոր–եկեղեցական տեղաշարժերից:

Դարի վերջերին դարձյալ գլուխ է բարձրացնում դավանաբանական խառնակչությունը: Այս անգամ արդեն բյուզանդական գերության մեջ գտնվող Վարազ–Տրդատի կին Սպրամն է դառնում քաղկեդոնականություն բորբոքողը: Նրա աջակցությամբ քաղկեդոնիկ Ներսես Բակուրը դառնում է Աղվանից կաթողիկոս և հալածանք սկսում լուսավորչական հավատի հետևորդների դեմ: Աղվանից հոգևորականներն ու իշխանները ստիպված դիմում են հայոց կաթողիկոս Եղիայի օգնությանը: Վերջինս դիմում է Պարտավի արաբ ոստիկան Աբդլմելիք Ամիրմոմնին, և պատժում են հերձվածողներին: Այդ ներազգային բուռն միջոցառմանը հավասարապես մասնակցում են Աղվանքի՝ Կուրով բաժանված եր-

կու հատվածների հոգևորականներն ու իշխանները, և Կուրի ձախափնյակից հականե–հանվանե հիշատակվում են Կապաղակի, Հոշո, Աղածոբի հոգևոր պետերն ու Աղբերդի (նախկին Քաղադաշտ, հետագա Արեշ–Աղդաշի), Կապաղակի, Կամբեճանի իշխանները:

Միաժամանակ արաբ ոստիկանը կազմում է Աղվանքի իշխանների ցուցակը, և հերձվածողների դատաստանին հաջորդում է Աղվանից իշխանների աքսորը Ասորիք: «Սրանից հետո Աղվանքի իշխան Շերոյին ազնվականների հետ միասին տարան Տարոն, իսկ այնտեղից էլ՝ Ասորիք: Այս ժամանակ հայոց հարյուր հիսուներեք (705) թիվն էր»[1]:

Վրա հասած 8–րդ դարն ամբողջությամբ և 9–րդ դարի առաջին տասնամյակները բնութագրվում են մեկը մյուսին փոխարինող արաբ ոստիկանների կատարած ավար–ավերումներով ու գերեվարումներով ամբողջ Անդրկովկաս–Արմինիայով մեկ և արաբական տիրապետության դեմ ծավալված անընդմեջ ընդվզումներով: Այդ երկարատև վայրիվերումների ընթացքում արաբ տիրողները ստեղծել էին Դերբենդի, Շիրվանի ու Շաքիի վարչատարածքային միավորները, որոնք Արևելյան Անդրկովկասի հետագա դարերի պատմության ուղեկիցներն էին դառնալու ընդհուպ մինչև ռուսական տիրապետության տակ անցնելը: Իրենց տիրապետությունն ամրապնդելու, նվաճված երկրների կողոպուտն ավելի արդյունավետ դարձնելու նպատակ հետապնդող այդ վայրիվերումների ընթացքում Աղվանից աշխարհին առնչվող մի վկայության ենք հանդիպում ժամանակի պատմիչ Ղևոնդի մոտ, որը վերաբերում է 760–ական թվականներին:

Արմինիայի ոստիկան Եզիտը, կամենալով ազատվել խազարների անվերջ ասպատակություններից, ամուսնանում է խազարաց խաքանի աղջկա հետ: Սակայն կարճ ժամանակ հետո խաքունը մահանում է, և խազարները, այդ համարելով դավի արդյունք, վերսկսում են իրենց ասպատակությունները: Պատմիչը նշում է. «Ասպատակ սփռելով Կուր կոչված հզոր գետի հյուսիսային կողմերում, առան բազում գավառներ՝ Հեջար, Քաղա, Ոստան–Մարզպան, Հաբանդ, Գեղավու, Շաքե, Բեխ, Խեյնի, Կամբեճան, Խողմազ: Այս գավառները Աղվանից աշխարհում են...- Հավաքելով գերիների բազմությունը և բազում ավար՝ դարձան իրենց բնակավայրերը»[2]:

[1] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 249:
[2] Ղևոնդ, Պատմություն, 1982, էջ 102:

8–րդ դարից մի վկայություն էլ հաղորդում է արաբ պատմիչ Բալաձորին 748 թ. ապստամբության առիթով. «Շամախու շրջանում արաբների դեմ պայքարը գլխավորում էր հայազգի Միքայելը»[1]:

Բայց արաբական տիրակալները միաժամանակ անհրաժեշտության դեպքում օգտագործում էին այդ խազարներին Անդրկովկասն իրենց ենթակայության տակ ճզմված պահելու համար: 9–րդ դարի կեսերին, երբ անկասելի թափ էր ստացել ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ, խազարներին տեսնում ենք արաբ տիրողների աջակցողի դերում: Այդ առումով ուշագրավ է Կաղանկատվացու մի վկայությունը: «Եկավ խազր Փատգոսը, բայց նույն տարին մեռավ, իսկ նրա որդին եկավ ու գրավեց Աղվանքը սրով ու գերությամբ և բազմաթիվ եկեղեցիներ այրեց ու գնաց Բաղդադ: Ապա այնտեղից արքունի հրամանով վերադարձավ և փողով Արշակաշեն գավառում 295 (847) թվականին կառուցեց Գանձակ քաղաքը»[2]: Գանձակ քաղաքն էլ դառնում է արաբ ոստիկանի նոր նստավայր Պարտավի փոխարեն:

9–րդ դարի Արմինիա փոխարքայության պատմությունը բնութագրվում է ազգային–ազատագրական պայքարի բուռն վերելքով, և այդ պայքարում բնավ էլ երկրորդական չէր Աղվանից աշխարհի հայության դերը: Ճիշտ է, նոսրացել էին Քուռ–Արաքսյան հարթավայրի հայ բնակչության շարքերը, արաբները հայ իշխաններից խլել էին Պարտավ մայրաքաղաքը, նախորդ դարերի պես այլևս չէին հիշատակվում արտաքին ներխուժումների ժամանակ դաշտավայրային բնակչության՝ լեռնային շրջաններում ապաստանելու փաստեր, բայց լեռնային ամուր շրջաններում ապրում էր մի հոծ հայկական զանգված, որի հերոսական պայքարը արաբական նվաճողների դեմ, ի վերջո, պսակվելու էր հաղթանակով:

9–րդ դարի առաջին տասնամյակներից սկսած՝ Աղվանից աշխարհի Առանշահիկ իշխանական տները փայլուն էջեր են գրում հայոց ազատագրական պայքարի պատմության մեջ: Եթե Աղվանից իշխաններից Եսայի Աբու Մուսեն հաղթական մարտեր էր մղում Բաբեկի, ապա Բուղայի հրոսակների դեմ երկրի հարավային շրջաններում, զուգահեռաբար ավելի բախտորոշ իրադարձություններ էին ծավալվում հյուսիսային շրջաններում:

Դեռևս 8–ին դարի սկզբներին արաբ Ոստիկան Աբդլմելիք Ամիրմոմնիի պահանջած Աղվանից աշխարհի իշխանների ցուցակից երևում է, որ

[1] Ստ. Մելիք–Բախշյան, Հայաստանը 8–9–րդ դդ., Ե., 1986, էջ 311:
[2] Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 259:

Առանձնահատուկ իշխանական տները դեռևս դրության տերն են: Ահա այդ իշխաններից մեկը՝ «արքաների զարմից Պատրիկ Քորոյանը, որի տոհմը միևնույն Վաչագան արքայի հրամանով բնակվեց Աղբերդ գավառում (հետագայի Արեշ–Աղդաշը), սրա նախնիները քաջ Վաչագանն ու Վաչեն էին»[1]:

Իշխանական այդ տան շառավիղներից էր 9–րդ դարի ազատագրական պայքարի կազմակերպիչներից մեկը՝ Շաքիի տեր Սահլ Սմբատյանը: Այդ մենք իմանում ենք Թովմա Արծրունու Պատմությունից, ուր արաբ զորավար Բուղայի գերեվարած հայ իշխանների ցանկում հիշատակվում է նաև «Սմբատի որդի Սահղը՝ Շաքիի տերը, որ ծերբակալեց Բաբանին»[2]:

Կաղանկատվացին Սահլ Սմբատյան Եռանշահիկ իշխանին առաջին անգամ հիշատակում է 822 թ. իրադարձությունների նկարագրության մեջ: «Իսկ երբ լրացավ հայոց 270 (822) թիվը, Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Շիկաքար: Այդ ժամանակ քաջ ու շքեղատեսք Սահղի Սմբատյան Եռանշահիկ իշխանը և իր քաջազոր եղբայրներն իրենց զորքերով լուսադեմին վրա տվին... և ինչպես առյուծի ժանիքներից, գերիներին խլեցին»[3]:

Երկրորդ անգամ Սահլ Սմբատյանը 838 թվին ջարդում է Աղվանք ներխուժած արաբական 12 հազարանոց զորքը և «նույն տարին միևնույն իշխան Սահղի Սմբատյանը ծերբակալում է ապստամբ Բաբանին ... և հանձնում է Ամիրմոմնիի ձեռքը: Իր վաստակների դիմաց արքունիքից մեծ վարձատրություն է ստանում, իրավունք է ստանում Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի վրա՝ բոլորին տիրելու արքայական իշխանությամբ»[4]:

Ճիշտ է, 854 թ. Բուղան գերության քշեց նաև Աղվանից իշխաններին, որոնց թվում և Սահլ Սմբատյանին ու նրա որդի և իշխանաց իշխան Հովհաննեսին, որն իշխում էր Մեծիրանքում, բայց դրանով արաբներին չհաջողվեց մարել ազատագրական պայքարը: Դարի վերջին քառորդում արդեն Սահլ Սմբատյանի թոռ Համամ–Գրիգորին հաջողվեց Բագրատունյանց թագավորությանը զուգահեռ վերականգնել Աղվանից թագավորությունը: «Այս նույն ժամանակներում՝ 336 (887) թվականին հաջողվեց Աշոտ Բագրատունուն Հայաստանում բարձրացնել իր թագավորական գահը: ... Ապա Բարեպաշտ Համամը, որ եղավ նաև Աղվանքի թագավոր, նույնպես Աղվանքի կործանված թագավորությունը վերականգնեց, ինչպես Աշոտ Բագրատունին նորոգեց հայոց թագավորությունը: Սրանք միևնույն ժամանակ կատարվեցին»[1]:

Համամ–Գրիգորի վերականգնած Աղվանից թագավորությունը 10–րդ դարի կեսերից արդեն վերածվել էր մանր գավառական թագավորությունների: Աղվանից իշխանների մի ճյուղ թագավորություն էր ստեղծել Շաքի–Կամբեճան գավառներից, ուր թագավորում էին Ատրներսեհն ու նրա որդի Իշխանակը: Նման մի թագավորություն էլ ստեղծվել էր Փառիսոս–Գարդմանում, ուր իշխել են Հովհաննես–Սենեքերիմն ու Փիլիպեն: Այդ թագավորությունները ծեգծեգումներով գոյատևել են մինչև 11–րդ դարի 2–րդ կեսերը: 11–րդ դարի կեսերից Միջին Ասիայից ներխուժած սելջուկ–թուրքերը նվաճում են Պարսկաստանը, Անդրկովկասը և Բյուզանդական կայսրության արևելյան շրջանները: Արյան ու ավերումների մի ամբողջ հարյուրամյակ տևող այս տիրապետությանը 12–րդ դարի կեսերից հաջորդում է վրացա–հայկական դաշնակցությամբ ծավալված ազատագրական պայքարը, որի արդյունքում Զաքարյան իշխանները սելջուկ տիրակալներից ազատագրում են հայոց նահանգները մինչև Մարանդ ու Թավրիզ, Կարին ու Խլաթ, Շաքի ու Շիրվան, Պարտավ ու Բայլական: Ուշագրավ է, որ Հաղարծնում թողած մի վիմական արձանագրության մեջ Զաքարյան եղբայրներ Զաքարեն ու Իվանեն ազատագրված այդ տարածքները համարում են իրենց նախնիներից հասած սեփական ժառանգություն, օտարներից ազատագրած սեփական հայրենիք: «Երբ աստծո նախախնամությունը հասավ արարածներին, և մեր նախնիների սեփական ժառանգությունը տվեց մեզ տիրելու, առաջ մեր ձեռքը տվեց անառիկ Անբերդ դղյակը և թագավորանիստ քաղաքն Անին, և ապա Շաքին և Շիրվանը, և Պարտավը մինչև Բայլական, և այլ ուրիշները իրենց սահմաններով»[2]:

Հայրենական տարածքների այս հերթական ազատագրումին 13–րդ դարի 20–ական թվականներից հերթափոխի պես պետք է փոխարիներ Միջին Ասիայից ներթափանցած խորշակը մոնղոլ–թաթարների, Լենկթեմուրի, կարա–կոյունլուների, ակ–կոյունլուների տեսքով,

[1] Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 237:
[2] Թ. Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, 1978, էջ 202–203:
[3] Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 255:
[4] Նույն տեղը, էջ 259:

[1] Կաղանկատվացի, նշված աշխատությունը, էջ 262:
[2] Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը 10–16–րդ դդ., 1975, էջ 132:

16–18–րդ դարերում ասպարեզը զիջելով պարսկա–թուրքական արյունոտ ու ավերիչ հակամարտություններին՝ ամեն նոր նվաճող կատարելով իրեն հարմար վարչատարածքային վերածնումներ։

Իսկ թե հինգհարյուրամյա այդ վայրիվերումների, մեկը մյուսին փոխարինող վարչատարածքային վերածնումների արդյունքում երկրատարածքի էթնիկական կազմը ինչ փոփոխությունների է ենթարկվել, ընթերցողը կտեսնի հաջորդ էջերում։ Բայց մինչ այդ մի վերջին դիտարկում ևս։

Աղվանից աշխարհի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է մ.թ.ա. VI դարին, Մեդական տիրապետության տապալման առնչությամբ։ Այդ կապակցությամբ պատմահայր Խորենացին գրում է. «Եվ Հայոց թագավորը զորք է ժողովում Կապադովկիայի սահմաններից, Վրաց և Աղվանից ընտիրները՝ որքան և կային, և Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրները, և ամբողջ զորությամբ դիմում է Մեդացիների կողմերը»[1]։

Հետագա դարերի վկայությունները հաստատում են մի իրողություն. Մեծ Հայքը մի յուրահատուկ կերպով եղել է Աղվանից աշխարհի անվտանգության երաշխավորն ու պաշտպանը։ Այդ դերը նա կատարել է ոչ միայն իր անկախության ու հզորության դարերում, այլև ժամանակի աշխարհակալ տերությունների ազդեցության ոլորտում կամ ենթակայության տակ հայտնվելու ժամանակ։ Հանրահայտ է, որ աշխարհակալ Հռոմն ու Սասանյան Պարսկաստանը վարձատրում էին հայոց զինական ուժերին Կովկասյան ամրությունները պաշտպանելու համար։ Դարեր տևած այդ դերի շնորհիվ Աղվանից թագավորության հյուսիս–արևելյան մասում՝ Դերբենդի շրջականերում, հայերի տեսակարար կշիռը այնքան է մեծացել, որ այնտեղից դուրս է մղել Մաքսութների ցեղը, իսկ արաբական լուծը թոթափելուց հետո էլ այնտեղ ստեղծել գավառական թագավորություն, այդ թագավորության վերացումից հետո զանգվածաբար գոյատևել ընդհուպ մինչև 1796 թվականը։

Միաժամանակ բուն Աղվանքը կամ, արժանահիշատակ պատմաբան Ասատուր Մնացականյանի բնորոշմամբ, Անդրկուրյան Հայքը իր էթնիկ հայկական միջավայրով դարեր շարունակ եղել է մի յուրահատուկ ապաստարան այն հայորդիների համար, որոնք Մեծ Հայքում կանգնել են անելանելի վիճակների առաջ։ Նման դեպքերում նրանք փրկություն են գտել հարազատ ազգային մի միջավայրում, որը դուրս է Մեծ Հայքի վարչաքաղաքական իրավասության շրջանակներից։ Ա. Մնացականյանը ժամանակի պատմական վավերագրերից իրար կողք է դրել նման մի

[1] Մ. Խորենացի, նշված աշխատությունը, 1968, էջ 117։

շարք դեպքեր՝ հաստատելով Անդրկուրյան Հայքի գոյության ու հարատևության իրողությունը։ Ահա այդ վկայությունները, որոնք կարելի է լրացնել նման այլ վկայություններով ևս.

1. Երբ Մեծ Հայքում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն, և սկսեցին անխնա ավերել հեթանոսական տաճարները, հալածել նրանց սպասավորներին, վերջիններս, համառ դիմադրությունից հետո, ճարահատյալ հայացքներն ուղղեցին դեպի Կովկասի կողմերը՝ Աղվանից աշխարհ։ Ահա ինչ է վկայում նրանց անունից այդ իրադարձությունները ներկայացնող Ագաթանգեղոսը. «Վայ մեզ։ Որովհետև ամբողջ երկրից մեզ փախստական դարձրեց։ Ուստի մենք գնում ենք Կովկաս լեռան բնակիչների մոտ, հյուսիսի կողմերը, գուցե այնտեղ հնարավոր լինի, որ կարողանանք ապրել»։

2. Յոթերորդ դարի պատմիչ Սեբեոսը վկայում է, որ երբ բյուզանդական կայսր Մորիկը Հայաստանը վերջնականապես ծնկի բերելու նպատակով հայոց զինվորական ուժերը տեղափոխում էր Դանուբի ափերը, որպեսզի կամ նրանք ոչնչանան պատերազմներում, կամ կայսրության թշնամիներին ոչնչացնեն, ընդդիմանալով կայսեր այդ հայակործան քաղաքականությանը՝ հայոց երկու զորավար՝ Ատատ Խոռխոռունին և Սամվել Վահևունին, իրենց զորագնդերով ապաստանում են Աղվանից աշխարհում։

3. Վրաց մատենագիր Արսեն Սափարացու վկայությամբ, 7–րդ դարի Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին աղվեսադրոշն է դնում մատենագիր Հովհան Մայրավանեցու ճակատին ու հալածում նրան՝ որպես աղանդավորի։ Վերջինս փախչում է Կովկասի կողմերը, ապաստանում Կամբեճանի «Հայոց ձոր» կոչվող տեղում և աշակերտներ հավաքում իր շուրջը ոչ այնքան այդտեղ ապրողներից, որքան Մեծ Հայքի նահանգներից։

4. Աղվանից աշխարհի հայկական հարազատ միջավայր լինելու խոսուն վկայության ենք հանդիպում նաև 10–րդ դարի կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու պատմության մեջ։ Խոսելով այն մասին, թե ինչպես, արաբական հալածանքներից փախուստ տալով, նա ապաստան է գտել Աղվանից աշխարհի իշխանների ու թագավորի մոտ, միաժամանակ արձանագրում է. «Զի և նոքա ի ժողովրդէն մերմէ և խաշն արոտի մերոյ էին»։ Այսինքն՝ նրանք էլ էին հայեր ու հայ լուսավորչական հավատի հետևորդներ[1]։

[1] Ա. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, 1966, էջ 52–63։

Իսկ երբ արաբական տիրապետության ժամանակներից սկսած Աղվանից աշխարհում հաճախակի ու նորանոր վերածնումներ են կատարվում՝ վերջին դարերում վերածվելով մի շարք խանությունների, և միասնական Աղվանից աշխարհ հասկացությունը դուրս է գալիս շրջանառությունից, Անդրկուրյան Հայքը՝ Կուրի ձախափնյակը, յուրահատուկ ապաստան է դառնում նաև Արցախ–Ղարաբաղի հայության համար: Հայտնի է, որ ավելի քան մի հարյուրամյակ՝ 1406–1510 թթ., Աղվանից կաթողիկոսական աթոռը Գանձասարից տեղափոխվել էր Շաքիի խանությունում գտնվող Ճալեթ բնակավայրը, որովհետև Արցախում նրա գործունեությունն անհնար էր դարձել: Կամ Արցախ–Ղարաբաղին տիրացած Իբրահիմ խանի հալածանքներից խուսափող զանգվածները հիմնականում ապաստանեցին Անդրկուրյան Հայքի խանություններում, չնայած ամենուր մահմեդական տիրապետություն էր:

Բուն Աղվանքի՝ Անդրկուրյան Հայքի՝ հայի հայրենիք լինելու իրողությունը ժողովրդի գիտակցության մեջ հարատևել է նաև հետագա դարերում, հարատևել մինչև մեր օրերը, մանավանդ դարերի արյունոտ փորձություններին դիմագրաված և մինչև 1988 թ. այդ երկրատարածքում թվակազմով երկրորդը հանդիսացող հայկական զանգվածների մոտ: Ինչքա՜ն խոր ու ճշմարիտ է ներկայացնում պատմական ճշմարտության տրամաբանությունը Սումգայիթ կառուցած հայ բանվորի միամիտ հարցադրումը՝ ի հակադարձումն գորբաչովյան հայակեր քաղաքականության, որ եթերից հնչեց սումգայիթյան վայրագության օրերին. «Այս քաղաքը ես եմ կառուցել, ո՞ւր գնամ իմ կառուցած քաղաքից»:

ԻՆՉՊԵՍ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԴԱՐՁՐԻՆ ԱԴՐԲԵՋԱՆ

Պարսկական տիրապետության հիմնադիր Կյուրոսի ժամանակներից սկսած՝ պարսկա–թուրանական մրցակցությունը 11–րդ դարի սկզբին վերջացավ Պարսկաստանի կատարյալ պարտությամբ և արևելյան խաշնարած ցեղերի առաջ բացեց Արևմուտքի ճանապարհը: Քոչվոր անասնապահ, ռազմունակ այդ ցեղերը, օվկիանոսային հզոր ալիքների պես իրար առաջ մղելով, նվաճեցին Ասիայի ողջ արևմուտքը, Հյուսիսային Աֆրիկան

և Եվրոպայի մեծ մասը: Եվ քանի որ Արևելյան Անդրկովկասը ժողովուրդների մեծ տեղաշարժի սահմանագլուխներից մեկն էր, դիմադրողական կարողությամբ ամենից թույլը Պարսկաստանի ու Ռուսաստանի համեմատությամբ, այստեղ կատարված ավերումները շատ ավելի ծանր ու ճակատագրական էին: Դարեր տևած այդ վայրիվերումների հետևանքով Արևելյան Անդրկովկասի տափաստանային շրջանները վերածվեցին անմարդաբնակ անապատների, իսկ տեղաբնիկները, հարկադրաբար քաշվելով լեռնային շրջանները, ապահովեցին իրենց հարատևումը:

Լինելով քոչվոր անասնապահներ՝ դեպի Արևմուտք շարժվող յուրաքանչյուր նոր նվաճող երկրատարածքից դուրս էր մղում նախորդ նվաճողին և տեղն ինքը զբաղեցնում սեփական հոտերով: Ըստ էության, նվաճման և դուրս մղման այդ գործընթացն ավարտին հասավ Սեփյան Պարսկաստանի տիրապետության հաստատմամբ: Այդ է պատճառը, որ իրար հերթափոխած այդ նվաճող ցեղերը իրենց հետևից չթողեցին ո՛չ էթնիկական և ո՛չ էլ մշակութային նկատելի նստվածք:

Պարսկաստանի ու Թուրքիայի երկուհարյուրամյա հակամարտությունը Անդրկովկասին տիրելու համար, նրանց բորբոքած անընդմեջ պատերազմները նս ավերածություններ գործելուց բացի ուրիշ փոփոխություններ չմտցրին երկրատարածքում, մանավանդ էթնիկական տեղաշարժերի իմաստով: Այնպես որ, մինչև Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը թուրքախոս ցեղերը Արևելյան Անդրկովկասում անշան և ոչ մշտակյաց տարրեր էին:

***

18–րդ դարի 20–ական թվականներին պարսկական տիրապետության դեմ բարձրացված հայ–վրացական ազգային–ազատագրական շարժումը և դրան շաղկապված ռուսական հարավային ներթափանցումը հարկադրեց Պարսկաստանին՝ այդ տարածքների էթնիկական նվաճումը դարձնելու պետական քաղաքականության առաջնահերթ խնդիր: Առաջին օրինակը տվեց Նադիր շահը՝ երկրատարածք տեղափոխելով քոչվոր ցեղերի: Պարսկական իշխանությունները Պարսկաստանի խորքերից, Իրաքից և այլ տեղերից երկրատարածք տեղափոխեցին մի շարք թուրքալեզու քոչվոր ցեղերի, որպեսզի խափանեն հայ–վրացական ազատագրական շարժումները, միաժամանակ պատնեշ ստեղծեն ռուսական հարավային ներթափանցման առաջ: Այդ ցեղերի՝ Պարսկաստանից կատարվող ներհոսքը, ինչպես նաև նրանց նստակեցության

անցնելն ավարտվեց միայն անցած դարի 50–ական թվականներին. ադրբեջանցիների վերջին ներհոսքը եղել է 1954 թ., երբ պարսկական կառավարությունը ճնշեց բուն Ադրբեջանում ծագած ապստամբությունը (տողերիս հեղինակի կույր աղիքը 1958 թ. վիրահատել է Թավրիզից ներգաղթած բժիշկ Ֆառնադը, որն արդեն ռուս կին ուներ): Իսկ 1959 թ. մարդահամարում դեռևս նշվում էր, թե Ադրբեջանի բնակչության որ մասն է նստակյաց, որը՝ քոչվոր:

Ինչքան էլ խոշտանգված ու ավերակված, այնուամենայնիվ, 18–րդ դարի առաջին կեսին Արևելյան Անդրկովկասը, փոքր քանակությամբ թուրքալեզու քոչվոր ցեղերի առկայությամբ, դեռևս մնում էր հայերի և մյուս տեղաբնիկ ժողովուրդների հայրենիք, որի բնակիչները ամրացած էին շատ թե քիչ ապահով լեռնային ու կիսալեռնային շրջաններում:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում այդ հայրենիքը հայկական էթնիկական տարրի առումով: Հարցի պատասխանը տալիս են ժամանակին ստեղծված պատմական վավերագրերը, որոնց հաղորդած տվյալների նկատմամբ կասկածներ լինել չեն կարող, որովհետև այդ դարաշրջանում իրողությունները դեռևս կոչվում էին իրենց անուններով, մանավանդ որ այն ժամանակ նավթի հոտը դեռևս չէր գրգռում աշխարհին իրենց բուռը հավաքել ցանկացող հզոր երկրների ախորժակը, որպեսզի ամեն ինչ շուռ տան գլխիվայր:

Այդպիսի վավերագրերից առաջինը հայ ազգային–ազատագրական շարժման ռահվիրա Իսրայել Օրու 1699 թ. սեպտեմբերի 22–ի թվակիր զեկուցագիրն է Եվրոպայի տիրակալներին՝ նրանց օգնությամբ Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու ծրագրով: Այդ զեկուցագրից պարզ երևում է, թե աշխարհագրական ինչ տարածք էր ընկալվում որպես Հայաստան, և ինչ հարաբերակցության մեջ էին այդ տարածքի հայ և մահմեդական (ընդհանրապես մահմեդական և ոչ ադրբեջանական) էթնիկական միավորները: Այդ փաստաթղթում Օրին տեղեկացնում է, թե Կասպից ծովից «դուրս կգանք մի նավահանգիստ, ուր ամբողջ շրջանում չկան ո՛չ քաղաք և ո՛չ էլ գյուղեր: Այդ տեղը տասը մղոնով է հեռու Բաքվից, ուր կան երկու գեղեցիկ շատրվաններ... Այդտեղ է ահա Հայաստանի սահմանագլուխը»[1]: Այնուհետև առաջ անցնելով՝ շարունակում է. «Հարուստ և առևտրական քաղաք է Շամախին: ...Մենք այնտեղ ունենք յոթը հայ ծխական համայնքներ և քաղաքի բոլոր վաճառականները և առևտրականները հայ են: Հենց որ

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, 1973, 51:

նրանք տեսնեն ծածանելիս ձեր կայսրընտրիչ բարձրության դրոշակները..., անմիջապես դուրս կգան այդ քաղաքից տասը հազար հայ մարդիկ, ամենքն էլ հեծյալ, կազմ ու պատրաստ... Ահա առաջին մուտքը Հայաստան, որ սկսվում է Շամախուց: ... Պարսկաստանի թագավորությունը – դա Հայաստանի թագավորությունն է ներս մտնելիս»[1]:

Ուշագրավ է, որ պարսկական առաքելությունից վերադարձի ճանապարհին Օրին Ղուբայի խանության Նիզաբադի տարածքում երեք կամուրջ է կառուցել և վանքի հիմքեր դրել՝ առաջիկա ռուսական առաջխաղացման ժամանակ նրանց երթուղին դյուրացնելու հեռանկարով: Նիզաբադը փաստորեն Օրու ներկայացրած Հայաստանի հյուսիս–արևելյան ծայրակետն է: Այդտեղ նույն նպատակով վանք կառուցելու հարցը երկրորդ անգամ ցարին է ներկայացրել Օրու զինակից Մինաս վարդապետը 1714 թվականին[2]:

Այնուհետև Օրին ներկայացնում է Արևելյան Հայաստանի նահանգները մինչև Երևան՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով, թե ինչքան զինվոր կարող է տրամադրել ազատագրական պայքարին: Ստացվում է 192 հազար մարդուց կազմված մի բանակ այն դեպքում, երբ նույն տարածքից պարսկական տիրողները կարող էին դուրս բերել ընդամենը 48 հազարանոց մահմեդական զորք: Վիճակագրական ուղղակի տվյալների բացակայության դեպքում թվերի այս հարաբերակցությունն է միակ չափանիշը դրանց կրող տարրերի թվաքանակը որոշելու համար, այսինքն՝ 192 և 48 հարաբերակցությամբ էին հայերն ու մահմեդականները (ժամանակի պարսկական պետական օրենքի համաձայն՝ պատերազմի դեպքում յուրաքանչյուր ծուխ պարտավոր էր տալ մեկ զինվոր):

Ժամանակակից Ադրբեջանի տարածքի հաշվով՝ Շամախի քաղաքը, որ «մեծ է ինչպես Կյոլնը» (Քյոլնը), կարող է տալ տասը հազար զինվոր, չհաշված այն 60 հայկական գյուղերը, որ գտնվում էին Շամախու խանության մեջ: Շաքիի (Նուխու) խանությունը, որտեղ «շատ քիչ են թուրքերը», կարող է տալ «սկզբում տասը հազար զինվոր», Գանձակը՝ 15000, Քաշաթաղը (ժամանակակից Լաչին–Քարվաճառը)՝ 10000, Զանգամը (ժամանակակից Ղազախ–Թովուզի շրջանները)՝ 5000, Վարանդան՝ 6000, Մեծ Ղափանը (ժամանակին այդպես էր կոչվում Ղարաբաղի հիմնական մասը)՝ 60000 զինվոր: Ընդամենը 116000 զինվոր այն դեպքում, երբ նույն տարածքի պարսկական խանություններից միայն Շա-

[1] Նույն տեղը, 53 և հետագա:

[2] Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, 1959, էջ 613–614:

մախու և Գանձակի խանություններն էին պարտավոր կառավարությանը զորք տրամադրելու, ըստ որում, Շամախին՝ 10000, իսկ Գանձակը՝ 5000 զինվոր: Ընդամենը 15000 զինվոր: Թվերի այս հարաբերակցությունը՝ 116 և 15, ցույց է տալիս, որ 18–րդ դարի սկզբին Արևելյան Անդրկովկասը ժամանակակից Ադրբեջանի համապատասխան տարածքով, որն այն ժամանակ ընկալվում էր Հայաստանի մաս, ուներ բնակչության մի կազմ, որի 87%–ը հայեր էին, 13–ը՝ մահմեդականներ:

Որ Օրին չափազանցված թվեր չէր բերում հայերի թվաքանակի հարցում, երևում է հետագա բազմաթիվ վավերագրերից: Այսպես, Եսայի Հասան–Ջալալյան կաթողիկոսի 1722 թ. օգոստոսի 18–ի մի նամակից իմանում ենք, որ միայն ապստամբած Ղարաբաղն ուներ 40000–անոց զինված մարտիկներ և այդքան էլ ընդունակ էր զինելու, եթե Պետրոսի պարսկական արշավանքը իրականանա[1]: Իսկ 1724 թ. Պետերբուրգ ուղարկված ղարաբաղյան պատվիրակությունը ցարին տեղեկացնում էր, որ միայն Ղարաբաղն ունի 100000 ծուխ ազգաբնակչություն[2]:

Եթե իր հաշվարկներում Օրին թույլ է տվել սխալ, ապա սխալվել է մահմեդականների հարցում: Ժամանակի պետական–պաշտոնական փաստաթղթի՝ «Թաղքիրաթ–ալ–մուլուքի» տվյալներով՝ 17–րդ դարի վերջում և 18–րդ դարի սկզբում Անդրկովկասի հայաբնակ գավառներ ունեցող տարածքը բաժանված էր երեք բեկլերբեկությունների, որոնք պատերազմի դեպքում պարտավոր էին տալ հետևյալ քանակով զինվորներ՝ Զուխուր–Սադ (Երևան)՝ 4297, Ղարաբաղ՝ 6084, Շիրվան՝ 5856: Ստացվում է 15,227 զինվոր՝ Օրու հաշվարկով 48 հազարի փոխարեն[3]:

Օրու կազմած վիճակագրությամբ ահա այսպիսին էր իրերի դրությունը Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքից առաջ. ժամանակի ըմբռնումով Պարսկահայաստանում՝ Շամախուց մինչև Երևան 192000 պոտենցիալ հայ զինվոր, 48000 մահմեդական պոտենցիալ զորքի դիմաց, ժամանակակից Ադրբեջանի համապատասխան տարածքի առումով՝ 116000 պոտենցիալ հայ զինվոր, 15000 պոտենցիալ մահմեդական զորքի դիմաց:

Պետրոս Առաջինի Կասպիական արշավանքը աղետալի հետևանքներ ունեցավ Անդրկովկասի և առանձնապես հայության համար: Թուրքիայի հետ պատերազմելուց խուսափելով՝ Պետրոսը պարսկական տիրապետությանը ենթակա Անդրկովկասը, բացի Կասպիականի իր նվաճած ափերից, ճանաչեց թուրքական սեփականություն: Թուրքիան օկուպացրեց Անդրկովկասը: Առաջին հերթին շարքից դուրս եկավ Արևելյան Վրաստանը, որի Վախթանգ թագավորը դարձավ աստանդական՝ ի վերջո ապաստանելով Աստրախանում: Պարսկական տիրապետությունը թոթափած Ղարաբաղն ու Զանգեզուրը մնացին միայնակ թուրքական ագրեսիայի դիմաց:

Խնդիրը միայն ռազմական բախումներին կամ սովորական նվաճումներին չի վերաբերում: Հայերի ազատագրական պայքարն ու Ռուսաստանի հարավային ծավալումը ոտքի հանեցին մահմեդական աշխարհը, և սկիզբ դրվեց մինչ այդ անծանոթ մի քաղաքականության՝ հարցերի լուծում հայերին ֆիզիկապես ոչնչացնելու ճանապարհով: Իրար թշնամի, փոխադարձաբար իրար ոչնչացնող այունի և շիա մահմեդականները՝ խմբավորված իրար թշնամի երկու հզոր պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի մեջ, որ մինչ այդ իրարից խլում էին հայերին որպես իրենց կերակրող և երկիրը շենացնող աշխատավոր մի զանգվածի, հայերին ոչնչացնելով հարցը լուծելու գործում ընդհանուր համաձայնության եկան և այն դարձրին պետական քաղաքականություն:

Ահա մի քանի վկայություններ այդ ժամանակների վավերագրերից:

Արևելյան Անդրկովկաս ռուսների ներթափանցման առնչությամբ Երզրումի փաշան սպառնագիր է ուղարկում հայոց կաթողիկոսին. «Դու էլ շատ մեղավոր ես, որ միացել ես ռուսներին, որոնց օգնելու համար ոտքի ես կանգնեցրել քո հայերին; Ասում են, թե 60000 կատարելապես զինված հայերը քո խոսքով վեր են կացել: Դու էլ շատ նեղություն կքաշես, որովհետև ուզում ես ռուսներին ձեր այդ երկրով բերես մեր երկիրը»: Սա թուրքական կողմը: Իսկ Երևանի Մուհամմեդ–Ղուլի խանը՝ Կախեթի ուրացող Կոստանդին թագավորը, ձերբակալում է կաթողիկոսին նույն մեղադրանքով և շուտով ազատում՝ գրպանելով մեծագումար կաշառք[1]:

Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի մի միավորում պարտություն է կրում Ղարաբաղում: Գերի ընկած թուրք փաշան խոստովանում է. «Մեր թագավորն հրաման է արարյալ, որ պիտի մեք այս երկրներիս հայն և ղզլբաշն փուչացնենք, չուն որ ըռուս թագավորի զորքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. հայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինի, որ մեր ճանապարհն բացուի: Նաև ասաց փաշան, թե դուք չէիք այս միջումս՝ մեք հիմա Դարպանդու և Պաքու վերա էինք գնացել, որ դատիմի մերն է»[2]:

[1] Լեո, նշված աշխատությունը, էջ 131:
[2] Նույն տեղը, էջ162:
[3] Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, 1972, էջ 253:

[1] Լեո, նշված աշխատությունը, էջ 137, 211:
[2] Լեո, նշված աշխատությունը, էջ 166:

Ուղիղ երկու հարյուր տարի հետո՝ 1918 թ., թուրքական մի այլ զինվորական նույն Ղարաբաղում նույն խոսքերն է ասել Բաքվի կոմունայի դեմ արշավող թուրքական զորքերի մասին:

Անդրկովկասը նվաճած թուրքական զորքերն իրենց վասալ կովկասյան ժողովուրդների հետ մեկտեղ աղետալի ավերածության են ենթարկում Կովկասյան լեռների հարավային փեշերից մինչև Քուռ գետը: Դեպքերի ականատես Մարտիրոս վարդապետը այդ ամենի մասին գրում է Աստրախանում ապաստանած Վախթանգ թագավորին՝ նրա միջոցով ակնկալելով ռուսական օգնություն: «Առաջ Շամախին... չափմիշ արարին: ...Ղարասովի գեղերանք թուրքացրին: Շաքուա երկրի գեղերանք ևս թուրքացրին: ...Միայն Մսկուրու երկիր էր մնացել, գնա ևս քանդեցին, ավերեցին... Այս տաճկաց ֆիքրը այլ իմն է... գրում են, թե միավորվեցեք, եկեք դուրս գողմից, մեք մեջ գողմից, այս կեավուրներ վեր առնենք, փուչացնենք, տինը իսլամ դառնայ... Իրյանք մեկն զմեկին ասում են, թէ այս գեղիս կեավուրներ փուչացնենք, որ սարը կեավուր (ռուսները Ա.Հ.) գալիս այս կեավուրներ կու քանդեն մեր երկիր և գեղերանք»[1]:

Իսկ Պարսկաստանում իշխում էր այն մտայնությունը, թե «եթե չլինեին մեր մեջ հայերը, եթե ականատես չլինեին նրանք մեր գործողություններին ու չիմանային մեր լեզուն, մենք վաղուց ջարդած կլինեինք ռուսաց զորքերին»: Ահա թե ինչ է գրում Պետրոս դի Սարգիս Գիլանենցը պարսիկների տրամադրությունների մասին. «Ասում ան թե Հայքն թամամ ջարդրել պիտի, որ էս երկիրն վարթարաֆ արարին. էսպես որ Ըռուստն բերին կոխեցին ղզլբաշի երկիրն, Աղվանն տարան Ըսպահան»:

Եվ այսպես, 18–րդ դարի 20–ական թթ. սկիզբ է դրվում հայերի ցեղասպանությանը Արևելյան Անդրկովկասում, որը դանդաղ գործողությամբ շարունակվում է մինչև հիմա՝ հայության հայրենիքը հետևողականորեն դարձնելով «Ադրբեջան»:

Պատմական երկարատև այս ողբերգության մեջ մեղքի ու պատասխանատվության իր պատկառելի բաժինն ունի նաև ռուսական պետական քաղաքականությունը՝ սկսած Պետրոս Առաջինից մինչև Գորբաչով:

Տրամագծորեն այլ հարց է, որ հայ ժողովրդի օրհասական պահերին ռուսական դեմոկրատիայի լավագույն ներկայացուցիչները՝ սկսած դեկաբրիստներից մինչև Բրյուսով, մինչև մեր օրերի առաջավոր մտավորականները, միշտ էլ կանգնած են եղել մեր կողքին, միշտ էլ իրենց

[1] Նույն տեղը, էջ 214:

արդար ձայնն են բարձրացրել մեր նկատմամբ կատարվող վայրագությունների դեմ: Այլ հարց է նաև հայերի ռուսական կողմնորոշումը, այդ կողմնորոշման պատմականորեն հաստատված անդառնալիությունը այն աստիճանի, որ դեռևս 19–րդ դարի 50–ական թվականներին Ստեփանոս Նազարյանը բանաձևեց, թե հայերը քաղաքականապես ռուս ժողովուրդ են: Այլ հարց է, որ ռուսական կայսրության մեջ հազիվ թե ճարվի մի այլ ժողովուրդ, որ հայերի չափ անձնվիրաբար մասնակցած լինի առաջավոր Ռուսաստանի համար մղվող պայքարին՝ համոզված, որ ինչքան առաջավոր, զարգացած ու դեմոկրատական լինի Ռուսաստանը, այնքան դրանից կշահի նաև հայ ժողովուրդը: Այսօր էլ հայ ժողովուրդը ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում կանգնած է նույն դիրքերում և Ռուսաստանից է սպասում իր ազատության ու անվտանգության երաշխիքը:

Մի կողմ դնենք այն իրողությունը, որ հայերի ռուսական կողմնորոշումը, հայ և ռուս քաղաքական ու զինական մերձակցությունը օբյեկտիվորեն հարվածի տակ էր դնում պարսկական ու թուրքական տիրապետություններին ենթակա հայությանը՝ որպես թշնամական մի տարր այդ պետությունների համար: Դրան գումարվում է նաև կայսերապետական Ռուսաստանի որդեգրած երկդիմի քաղաքականությունը:

Պետրոս Առաջինը ապստամբության մղեց հայերին ու վրացիներին, Անդրկովկասը սեփական մասնակցությամբ ազատագրելու խոստումով հասավ Դերբենդ ու վերադարձավ՝ դուռ բացելով թուրքական ագրեսիայի առաջ՝ իր ծանրագույն հետևանքներով: Պետրոսին զինակցելու հայ–վրացական միացյալ ուժերին զուգահեռ բուն Պարսկաստանից Սարգիս դը Գիլանենցը սեփական ծախսերով կազմակերպեց հայ երիտասարդների մի զորաջոկատ՝ «Հայկական էսկադրոնը», և միացավ ռուսական գործող բանակին: Արդյունքում Անդրկովկասը Ռուսաստանի կողմից ճանաչվեց թուրքական սեփականություն:

Ուղիղ 100 տարի ցարական արքունիքը բոլոր միջոցներով խրախուսում ու հուսադրում էր ազատագրական պայքարի որոշ պարզած Ղարաբաղին, քաղաքական ազատության ու անկախության խոստումներով բարձրացնում նրա հերոսական տրամադրությունը: Բայց երբ 1804 թ. գրավեց Ղարաբաղը, «մոռացավ», որ դրանից վեց տարի առաջ ևս կայսերական հատուկ հրովարտակով մի վերջին անգամ Ղարաբաղը ճանաչել էր մելիքական սեփականություն, և այն հանձնեց մի եկվոր նվաճողի, որի դեմ դարաբաղցին անընդմեջ պայքարել էր, ու այդ պահին էլ հայ մելիքական զորաջոկատները ռուսական զորքերի հետ կռ-

վում էին Ռուսաստանի շահերի համար: Իսկ ի՞նչ էր ստանում 100 տարի ռուսական շահերի համար արյուն թափած ղարաբաղցին: Պատասխանը տալիս է ոչ անհայտ Ցիցիանովը՝ Քյուրուքչայի դաշնագրի առիթով 1805 թ. մայիսի 14-ին Ալեքսանդր կայսեր գրած զեկուցագրում: «Այստեղ ես չեմ կարող... լռության տալ մի անցք, որ տեղի ունեցավ: ...Խանը... ուղարկեց ինձ հիշյալ Մելիք Զումշուդի որդուն, 11 տարեկան և 13 տարեկան թոռանը, որոնք 10 տարի բաժանված էին նրանից: Նրանց ես... հանձնեցի հորը և տեսա, թե ինչպես նա չէր կարողանում շնորհակալության արտասուքից մի բառ անգամ արտասանել, ինչպես և... այս տեսարանի վկաներից ոչ ոք չկարողացավ պահել իր արտասուքները»[1]:

Իրոք ողբերգական իրականություն: Կայսրության շահերի համար, կայսրության հրահրմամբ հարյուրամյա թափած արյան դիմաց երկու երեխայի ազատություն տասնամյա գերությունից, իսկ ազատության համար մարտնչող ժողովրդի վզին թուրք նվաճողի լուծ՝ իր բոլոր հետևանքներով:

Անդրկովկասը վերջնականորեն նվաճած Նիկոլայ Առաջինը Պարսկաստանից ներգաղթեցրած հայերին Պարտավից մինչև Երևան տեղավորելով՝ ընդունեց այդ տարածքների հայկականությունը: Սակայն այնպիսի վարչատարածքային բաժանումներ կատարեց Անդրկովկասում, որ, ըստ էության, Արևելյան Հայաստանը բաժանվեց մի քանի անհավասար մասերի, և պաշտոնապես ուրացվեց միասնական Արևելահայաստանի իրողությունը: Ավելին: Արևելյան Անդրկովկասում մահմեդական տարրը մեծացնելու և ուժեղացնելու նպատակով ցարիզմը ոչ միայն Պարսկաստան փախած մահմեդական զանգվածներին վերադարձրեց նախկին տեղերը, այլև ամեն կերպ սիրաշահում էր նրանց, պայմաններ ստեղծում նոր ներթափանցումների համար: Դրա վկայություններից մեկն էլ Նիկոլայ Առաջինի 1846 թ. դեկտեմբերի 6-ի հայտնի հրովարտակն է, որով երկրատարածք մտցնելով ճորտատիրության ռուսական համակարգը՝ հիմքում դնում էր նաև այսպիսի պահանջ. «Մեր այս հրովարտակով հողատերերի վրա տոհմականորեն հաստատված հողերն իրենց բոլոր պատկանելիքներով ու հողատեսքերով հողատիրոջ լիակատար սեփականությունն են կազմում: ...Նրանք այդ հողերը կարող են ժառանգություն տալ, նվիրել, վաճառել և այլ կերպ օտարել՝ պայմանով սակայն, որ այդ հիմքով կայք ձեռք բերող անձերը Անդրկովկասի մուսուլմանական բարձր դասին պատկանեն: ...Անդրկովկասի մուսուլմանական բարձր դասը՝ ապահովված ապրուստի միջոցներով... միշտ պատրաստ պիտի լինի մեր քաջարի ռազմիկների շարքերն անցնելու և նախանձախնդրությամբ ու եռանդագին կատարելու այդ դասի վրա դրվելիք պարտականությունները»[1]:

Ինչպես տեսնում ենք, երեք հզոր տերությունների հակադիր շահերի խաչաձևումը հիմք դարձավ պատմական իրադարձությունների հետագա զարգացման համար: Մեզ մնում է հետևել իրադարձությունների ընթացքին՝ տեսանելի դարձնելու հայկական մարզերի ադրբեջանականացման պատկերը Արևելյան Անդրկովկասում՝ ըստ ժամանակի վարչատարածքային բաժանումների:

1724 թ. թուրքական արշավանքից ամենից շատ տուժեցին Նուխու (Շաքիի) խանությունն ու հարակից շրջանները: Թուրքերը Նուխու խանության և Ղարասովի շրջանի հայության հիմնական զանգվածներին բռնի մահմեդականացրին՝ հիմք դնելով էթնիկական հարաբերակցության հետագա փոփոխության: Իսկ նրանց կովկասյան վասալները ոչնչացրին Մսկուրի շրջանի 12 հայկական գյուղեր՝ բնակչության մնացորդներին ենթարկելով բռնագաղթի:

Եթե Իսրայել Օրու հաշվումով Նուխու խանությունը հայերի ազատագրական պայքարին կարող էր տալ 10000 զինվոր և ուներ շատ քիչ մահմեդական ազգաբնակչություն, ապա 1916 թ. ցարական վիճակագրական տվյալներով այն ներկայացնում էր հետևյալ պատկերը՝ բաժանված երկու վարչական միավորների՝ Նուխու և Արեշի գավառների: 1916 թ. այդ գավառներում կային 44921 հայեր, 27530 շիա մահմեդականներ և 188523 սյունի մահմեդականներ:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցի հաշվումներով՝ 20-րդ դարի շեմին բռնի մահմեդականացված հայերը կազմում էին 15480 ծուխ: Այս սյունի մահմեդականները բռնի թուրքացված հայերի հետնորդներն են, որոնք 19-րդ դ. կեսերին փորձեցին վերադառնալ իրենց ազգային ակունքներին, բայց արդեն ուշ էր: Եվ եթե փորձենք ճշտել Օրու ժամանակի հայերի ու մահմեդականների էթնիկական հարաբերակցությունը, պետք է վերցնենք հայերի ու սյունի մահմեդականների թվաքանակը և համեմատության մեջ դնենք շիաների հետ, այսինքն՝ 232, 444 և 27530 հարաբերակցությունը՝ տեղափոխված 200 տարի հետ: Ստացվում է, որ 18-րդ դարի սկզբին Նուխու խանության բնակչության 88 %-ը հայեր

[1] Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, 1984, էջ 256:

[1] Խ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Ե., 1959, էջ 66-67:

էին, 12%–ը՝ մահմեդականներ: Իսկ 200 տարի անց հայ–մահմեդական հարաբերակցությունը նույն տարածքում 79 և 21 % էր՝ հօգուտ մահմեդականության: Այսպիսով, Նուխու խանության մեջ հայերի ցեղասպանության առաջին էտապում հիմնովին փոխվեց էթնիկակրոնական հարաբերակցությունը, և հայերը դարձան ազգային փոքրամասնություն: Նույն տարածքում հայերի ցեղասպանության երկրորդ էտապն սկսվեց ցարիզմի հրահրած հայ–թուրքական ընդհարումներով (1905–1906 թթ.) և վերջացավ խորհրդային կարգերի հաստատումով: Այդ ընդհարումների ժամանակ մեծապես տուժեց Արեշի գավառի հայությունը՝ ոչ միայն զրկվելով ունեցվածքից, այլև տալով բավականին մեծաքանակ զոհեր: Իսկ 1918 թ. դեպի Բաքու թուրքական արշավանքի ժամանակ տեղի ունեցավ հայերի երկրորդ մեծ աղետը: Թուրքերը ոչ միայն անխնա ոչնչացնում էին հայերին, այլև խորհրդային կարգերի հաստատումից հետո էլ թուրքական յաթաղանից փախուստով փրկված հայերին արգելվեց վերադառնալ հայրենական օջախներ, և երկրատարածքում մնացին հայերի միայն այն բեկորները, որոնք պատսպարվել էին մոտակա անտառներում ու ձորերում: 1926 թ. մարդահամարով մի տասնամյակ առաջ եղած շուրջ 45000 հայերից արձանագրվում է միայն 4004 մարդ: Այդ վիճակը ևս չբավարարեց Ադրբեջանի բոլշևիկյան կառավարությանը: Եվ նա հիդրոկայանի կառուցման համար ընտրեց հատկապես Սինգեչաուրը, ջրամբարի տակ դրեց հեղափոխությունից առաջ Արեշի գավառի 18 հայկական գյուղերից կանգուն մնացած 5 գյուղերը, որոնք Ղարաբաղի հետ կազմում էին մի միասնական էթնիկական տարածք՝ վերջնականապես լուծելով նախկին Արեշի գավառի ադրբեջանականացման հարցը: Ադրբեջանի ինտերնացիոնալ–շովինիստական քաղաքականության պայմաններում գոյատևող հայության վերջին բեկորներն էլ նախկին Նուխու գավառում վերջնականապես հայրենազրկվեցին գորբաչովյան վարչակարգի հրահրած հայ–ադրբեջանական հակամարտության հետևանքով:

Այսպիսով՝ հայոց երբեմնի Փոքր Հայք գավառը, պարսկական տիրապետության ժամանակներից Նուխու (Շաքիի) խանության վերածված, 18–րդ դարի սկզբին դեռևս 88 %–ով հայկական էր, որը շուրջ 300–ամյա անհավասար մաքառումների արյունոտ ճանապարհին 1988 թ. վերջնականապես հայազրկեցին՝ դարձնելու համար ադրբեջանական հայրենիք:

Շամախին, Քաշաթաղը, Զագամը և Արևելյան Անդրկովկասի մյուս հայկական տարածքները ևս տարբեր ժամանակներում ու տարբեր

ձևերով ենթարկվեցին նույն ճակատագրին: Բավական է նշել, որ թուրքական ավերածություններից ընդամենը 10 տարի հետո Նադիր շահն է ռազմակալում Անդրկովկասը, «իսպառ կործանում Շամախի քաղաքը և 700000 գերի տանում Պարսկաստան Աղվանից երկրի հայերից ու վրացիներից»[1]:

Վերջապես հերթը հասնում է հեռավոր դարերի մշուշում իր պատմությունը թաղած Բաքվին, որը պարսկական տիրապետության տակ ընկնելով՝ վերածվել էր սահմանագլխային ամրոցի՝ հետագայում ռուսների ու հայերի տևական ջանքերով համաշխարհային հնչեղության քաղաք դառնալու համար: Հայտնի է, որ հզորացած Սեֆյան Պարսկաստանի կողմից նվաճվելու հետևանքով տեղի հայերի հիմնական զանգվածները ստիպված փրկություն են գտել Աստրախանում և այլ տեղեր: Այնուամենայնիվ, ռուսական ներթափանցումից առաջ Բաքվի ազգաբնակչության կեսը դեռևս հայերն էին: Ահա թե ինչ է գրում թուրք պատմիչ Զնդեթը՝ ներկայացնելով 17–րդ դարի վերջի վիճակը. «Սալյան և Բաքու քաղաքներում ապրում են 10 հազար տուն շիաներ և 10 հազար տուն հայեր»[2]: Երբ Ցիցիանովը փորձեց նվաճել Բաքուն, իր գլուխը թողեց բերդի պարիսպների տակ: Եվ տեղի հայերն էին, որ նրա անարգված դիակը աղբանոցից հանեցին և պահեցին իրենց Աստվածածին եկեղեցում: Իսկ երբ 1807 թ. ռուսները վերագրավեցին Բաքուն, այնտեղ կար ընդամենը 500 ծուխ ազգաբնակչություն, որից 70–ը հայեր: Ինչ է վկայում մեկ տասնամյակի շրջանակներում մի քաղաքի էթնիկական կազմի այսքան կտրուկ փոփոխությունները: Բանն այն է, որ Զուբովի արշավանքի օրերին Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Արդությանի եռանդուն ջանքերով հայերը դարձել էին պատերազմող կողմ, և Զուբովի ետդարձի ժամանակ նրանք ևս անցել էին Ռուսաստան՝ պարսկական հաշվեհարդարից խուսափելու համար: Իսկ երբ ռուսները վերջնականապես գրավեցին Բաքուն, նույնը կրկնեցին նաև այդտեղ բերված թուրքական տարրերը՝ վերադառնալով իրենց նախկին բնակավայրերը: Բաքվում մնացին միայն տեղում մնացած 70 ծուխ հայերը և տեղաբնիկ մահմեդականները՝ 430 ծուխ թաթերը, որոնք փախչելու տեղ չունեին: Այնպես որ, անհիշելի ժամանակներից մինչև ռուսական տիրապետության հաստատումը Անդրկովկասում, Բաքուն հավասարապես եղել է հայ ազգաբ-

[1] Մակար եպս. Բարխուդարյան, նշված աշխատությունը, Ե., 1999, էջ 56, 87:

[2] Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, 1961, էջ 248:

նակչության հայրենիք, թեկուզ և եկվոր նվաճողները վերջին դարերում հայերին հասցրել էին ազգային փոքրամասնության վիճակին:

Ռուսական տիրապետության ընձեռած կյանքի և գույքի ապահովության բարենպաստ պայմանները, ինչպես նաև Բաքվի տնտեսական նշանակության աննախընթաց բարձրացումը հայերին նորից վերադարձնում են Բաքու, և ռուսների հետ միասին քաղաքը դարձնում են այն, ինչ այսօր կա:

Հայտնի է, որ ցարիզմը, և ոչ միայն ցարիզմը, մարդահամարների և այլ վիճակագրությունների ժամանակ առաջնորդվում էր ոչ թե ազգային, այլ կրոնադավանական ելակետով: Դա անհնար էր դարձնում շիա մեհմեդականների ընդհանրությունից առանձնացնել ազերբուրքերի իրական թվաքանակը: Բայց ահա 1891 թ. Թբիլիսիում հրատարակված «Բաքուն և իր արվարձանները» ռուսերեն գրքույկում բացվում են փակագծերը, և պարզվում է, որ 1889 թ. տվյալներով ազերբուրքերը Բաքվում չորրորդ տեղն են իրենց թվաքանակով: Ահա Բաքվի էթնիկական կազմը 1889 թ.՝ արտահայտված թվերով. թաթեր՝ 29,631, հայ լուսավորչականներ՝ 25,897, ռուսներ և աննշան քանակով վրացիներ՝ 22693, ազերբուրքեր (թաթարներ)՝ 9877, այլ ազգություններ՝ 5520, որի կազմում անհայտ քանակով կաթոլիկ ու բողոքական հայեր:

Թե ինչ դեր են խաղացել ադրբեջանցիները Բաքվի տնտեսական ու կուլտուրական զարգացման գործում, խոսելն անգամ ավելորդ է: Նրանք չեն կարող մատնացույց անել իրար վրա դրված երկու քար, կամ գոնե մի արհեստանոց, էլ չենք խոսում արդյունաբերական ձեռնարկումների մասին, որ իրենց ձեռքի գործը լինի: Նոր ու ժամանակակից Բաքուն հայերի և ռուսների քաղաքն է՝ ինչ-ինչ ուժերի ձեռքով նվիրված ադրբեջանցիներին:

Հայերի ցեղասպանության հետևանքով Բաքուն ադրբեջանականացավ երեք փուլով. 1905 թ. ցարիզմի հրահրած հայ– թուրքական ընդհարումով, 1918 թ. Բաքվի թուրքական օկուպացիայով, որի զոհը դարձավ 30000 հայ, 1988 թ. սկսված վերջնական հայաթափումով՝ բառիս բառարանային իմաստով մարդակերությամբ ուղեկցվող մեթոդներով ու գորբաչովյան վարչակարգի գործուն հրահրմամբ: Եվ եթե այսօր փոխադարձ զիջման հարց կա երկու ժողովուրդների միջև, այն պետք է սկսել Բաքվից և ոչ թե Արցախական աշխարհի բեկորներից:

Ինչ մնում է «Անդրկովկասի մուսուլմանական բարձր դասի» նկատմամբ ունեցած ցարական ակնկալությանը, ապա այդ դասը ամոթով չմնաց ոչ միայն ցարիզմի, այլև բոլշևիզմի առջև:

Հայերի հաշվին մահմեդականներին սիրաշահելու քաղաքականությունը ամեն անգամ պետական մակարդակով վերածել է հայերի ցեղասպանության, երբ կայսրությունը կանգնել է համընդհանուր ճգնաժամի առաջ: Դրա հետևանքով իրենց բնակավայրերից դուրս են մղվել հայերը և այլազգիներ (ռուսներ, գերմանացիներ)՝ հող նախապատրաստելով ադրբեջանցիների միատարրության համար: Եվ քանի որ հայերի ցեղասպանության հերթական ալիքն սկիզբ առավ կայսրության առաջին համընդհանուր ճգնաժամի տարիներից՝ 1905–1906 թվականներից, և ոչնչացման մեթոդների մասնակի լրացումներով շարունակվում է մինչև այսօր, ընթերցողին ենք ներկայացնում այդ օրերի՝ պետականորեն հրահրված վայրագությունների ընդամենը երկու միջադեպ, որոնք պատասխան են տալիս այն հարցին, թե ինչպես Արցախի, Սյունիքի և Գարդմանքի որոշ տարածքներ հայաթափվեցին և այսօր կոչվում են Ադրբեջանի «անկապտելի մաս»:

Բերում ենք ժամանակի բազմաբնույթ վավերագրերից միայն մեկը, որտեղ ներկայացված իրականությունը այնքան նման է մեր օրերին, որ մեկնաբանությունն ավելորդ է դառնում[1]:

«ԿՈՏՈՐԱԾԸ ՄԻՆՔԵՆԴՈՒՄ», 19–22 օգոստոսի, 1905 թ.: Մինքենդի հայերի դրությունը միանգամայն վտանգավոր դարձավ օգոստոսի սկզբներում, երբ Մուղանլու, Խալաճ, Օվշառ կոչվող թարաքյամա քրդերը եկան, իրենց վրանները խփեցին Մինքենդի դաշտում... Օգոստոսի 19–ի երեկոյան գյուղի այն կողմում, ուր սովորաբար գիշերում էին հայերի ոչխարները, հրացաններ պայթեցին, և երեք սուրու ոչխար թուրքերը փախցրին: Հայերը դուրս եկան հավարի, բայց կարողացան ետ բերել միայն երկու սուրու... Օգոստոսի 20–ի երեկոյան գյուղը պաշարվեց թարաքամաներով՝ հրացանների որոտների հետ միաժամանակ:

Առաջին անգամ գյուղը պաշտպանելու համար հայերի հետ միասին փողոց դուրս եկան թե՛ կոզակները և թե՛ ատրաժնիկները, բոլորը միասին 32 հոգի, սակայն այդ մի ստոր խաղ էր պրիստավի կողմից (Սաղըգ բեկ): Մի փոքր այս ու այն կողմը վազվզելով՝ ներս քաշվեցին թե՛ պրիստավը, թե՛ կոզակները և թե՛ ատրաժնիկները: Դավադրությունը կատարյալ էր: Թեև հայերը մի կարճ ժամանակ դիմադրեցին, բայց ապարդյուն: ...Օգոստոսի 21–ի առավոտյան Մինքենդի փողոցներում ընկած էին արդեն 22 դիակ:

Սակայն այդ բոպեին էլ հանգիստ չառավ ոճրագործ պրիստավը: Նա, պատճառ բռնելով խոզնավարում սկսված ընդհարումը, օֆիցերին

[1] Ա–ԴՕ, Հայ–թուրքական ընդհարումները 1905–1906 թթ., Ե., 1907, էջ 256:

կոզակների հետ միասին հաջորդ օրն ուղարկեց Խոզնավար: Երբ հայերն այդ իմացան, մի մասը գյուղից փախան, իսկ մնացյալ մասը պատսպարվեց այսպես կոչված «Զայեժնիյ» տանը: Ահա այդ տան վրա էլ հարձակվեց խուժանը... այս անգամ գրագիր Շամիրի առաջնորդությամբ:

«Զայեժնիյ» տան բակում տեղի ունեցավ մի չտեսնված, չլսված բարբարոս գործողություն: ...Գազանացած խուժանը այդտեղ կատարեց այն բոլոր քստմնելի գործողությունները, որպիսին ընդունակ է երևան հանելու...

Այսպիսով՝ Մինքենդի 696 բնակիչներից 456–ը միայն կարողացան, որը վիրավոր և որն էլ սարսափից մաշված, կմախք դարձած ազատվել, մնացյալ 240–ը չկային:

Մինքենդի նյութական կորստին չափ չկար: Նրանք կորցրել էին ամենը, ամենը... բոլորը ձգեց մինքենդցին և գնաց՝ այլևս չվերադառնալու համար, այլևս չտեսնելու այն տեղը, որը եղել էր նրա հարազատների սպանդանոցը: Նա գնաց տնավեր, քաղցած, բազմաթիվ զոհերով և վշտաբեկ սրտով, բայց նրան տանջում էր ավելի շատ այն հանգամանքը, որ ոճրագործները չեն պատժվում, որ նրանք, ընդհակառակը, խրախուսանքներ էին գտնում պաշտոնյաների կողմից»:

«ԲԱԴԱՔԵՆԴ–ԳԵՏԱԲԵԿԻ ԿԱՄ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ», 19–25 նոյեմբերի, 1905 թ.: Գանձակի առաջին օրվա կոտորածի հետ միաժամանակ, այն է նոյեմբերի 18–ին, թուրքական մի խուժան հարձակվեց Չարդախլվի վրա՝ ավերելու և այդ խոչընդոտը մեջտեղից վերացնելու նպատակով: Վաղուցվա մտադրությունն այս անգամ էլ չիրագործվեց: Չարդախլուն դիմադրեց որպես վահան և մնաց կանգուն ու հպարտ: Հարձակումը կրկնվեց նաև 19–ին, բայց դարձյալ անհաջող, որից հետո խուժանը դարձավ դեպի Բադաքենդ, պղնձահանքերը և Ղազախ (գյուղ Գետաբեկի մոտ – Ա. Հ.):

Նոյեմբերի 19–ին՝ առավոտյան ժամը 7–ին, թուրքերը եկան բռնեցին գյուղի (Բադաքենդ) շրջակա բլուրները, իսկ գյուղից 5 վերստ հեռու գտնվող Ջառչի–բինան կողոպտեցին և եղած–չեղածը տարան: Նոյեմբերի 21–ին խուժանը նորից երևաց, բայց այս անգամ ավելի մեծ չափով... Սկսվեց անհավատար օրհասական կռիվ, որպիսին լինում է հուսահատական րոպեներին: Բադայի փոքրաթիվ կռվողները, մինչև 22–ի երեկոյան քաջաբար դիմադրելով, դիրքերը ձեռքից թողին միայն հերոսաբար ընկնելուց հետո:

Սակայն Բադայի ժողովուրդը հերոսության նոր ապացույցներ տվեց. թուրքերի ներխուժումից հետո մի համառ կռիվ էլ տեղի ունեցավ գյուղի փողոցներում՝ փայտերով, կացիններով և այլ գործիքներով, մինչև վերջին ճիգը, վերջին շունչը, ինչպես գոտեմարտը, որից հետո խուժանը կատարեց իրեն հատուկ բարբարոսությունը մեծի ու փոքրի, կանանց ու երեխաների նկատմամբ: Բադայում ընկել էին մարդ, կին, երեխա՝ 118 հոգի...

Այն ժամանակ, երբ կատարվում էին Բադաքենդի սարսափները, ավելի վատթարագույն սարսափներ տեղի ունեցան պղնձահանքերում, Ղազախում՝ պրիստավի և շրջակա գյուղերի քյոխվաների մասնակցությամբ:

... Բադայի, Գետաբեկի և Ղազախի հետ ամեն բան վերջացնելուց հետո թուրք խուժանը դարձավ դեպի Չարդախլու: Նոյեմբերի 25–ից սկսած մինչև 30–ը պարբերաբար ետ մղվելով և նորանոր թարմացված ուժերով նոր հարձակումներ գործելով՝ նա չհոգնեց: ... Նոյեմբերի 30–ին տեղի ունեցավ վճռական հարձակումը, և այս անգամ խուժանը հետ փախավ մեծ կորուստներով...»[1]:

Եվ այսպես՝ թուրքական ցեղերի վայրենի բնազդները գրգռելով հայերի ունեցվածքին ու նրանց դարավոր հայրենիքին տեր դառնալու հրապուրիչ հեռանկարով՝ ցարիզմը նոր հիմքերի վրա դրեց Արևելյան Անդրկովկասի թուրքացման գործընթացը, որը հետագայում որդեգրեցին բոլշևիկները: Որդեգրեցին ոչ միայն 11–րդ կարմիր բանակի հրանոթները գործի դնելով, այլև Նախիջևանը, Ղարաբաղը, Գանձակը Ադրբեջանին նվիրելուց հետո անգամ, 1928 թվին Նախիջևանի չափ մի տարածք ևս, սկսած Զանգեզանից մինչև Կարմիրի շրջան, խլեցին Հայաստանից ու տվեցին Ադրբեջանին՝ Հայաստանի ու Արցախի միջև ստեղծելով Լաչինի, Քյալբաջարի ու Գետաբեկի արհեստական միջանցքը: Չնայած ցարական–բոլշևիկյան այս քաղաքականությանը՝ հայկական պատկառելի զանգվածները Հյուսիսային Արցախում ու Գարդմանում կարողացան ամուր կառչած մնալ իրենց հայրենի հողին, դիմակայել Ադրբեջանի 70–ամյա անօրինակ գաղութային քաղաքականության ճնշումներին, մինչև որ գորբաչովյան վարչակարգը խորհրդային զորքերով հիմնովին հայաթափեց այդ տարածքները՝ ներկայիս Շամխորի, Գետաբեկի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումյանի շրջանները և Գանձակը:

Այսօր Ադրբեջանը աշխարհով մեկ աղմուկ է բարձրացրել՝ այդ տարածքները իր «սրբազան հայրենիք» ներկայացնելով, և ձգտում է Զանգեզուրն էլ բռնազավթել...

[1] Ա–ՂՕ, հայ–թուրքական ընդհարումները 1905–1906 թթ., Ե., 1907 թ.:

Ինչպես ցույց է տալիս իրադարձությունների զարգացման շղթան, սա պատմություն չէ սովորական իմաստով, այլ տնականորեն շարունակվող մի իրողություն, մի երկարատև պատմական ողբերգություն, որի վերջը դեռևս չի երևում:

Հանրահայտ է, որ շնորհիվ առաջին հերթին իրենց աշխարհագրական դիրքի, ընդհանուր վայրիվերումների մեջ իրենց դիմադրողականությամբ առանձնացան Ղարաբաղն ու Գանձակը՝ դառնալով Արևելյան Անդրկովկասի հայության միջնաբերդը: Ճիշտ է, այդ մարզերի տափաստանային շրջանները դարձան անմարդաբնակ անապատներ, որոնց վերաբնակեցումը դեռևս չի ավարտվել, բայց լեռնային շրջաններում էլ ձևավորվեց խտաբնակ մի զանգված, որն ընդհուպ մինչև 1988 թ. ամուր կանգնած էր հայրենի հողին: Բավական է նշել, որ հետպետրոսյան հարյուրամյակում Պարսկաստանի կողմից կիրառվող էթնիկական նվաճման քաղաքականությունը չկարողացավ այդ հարցը լուծել հօգուտ մահմեդականության: Նույնիսկ խանական կենտրոնում՝ Գանձակում, հասան միայն այն բանին, որ հավասարվեց հայերի ու մահմեդականների թիվը: Երբ 1804 թ. ռուսները նվաճեցին Գանձակը, այնտեղ կային 2232 հայ և 2350 մահմեդական՝ պարսիկներ, քրդեր, թուրքեր և այլն: Նույն պատկերն ենք տեսնում նաև Բաքվում, ուր 18–րդ դարի վերջերին հայերն ու մահմեդականները հավասարվել էին թվաքանակով՝ համաձայն թուրք պատմագիր Զնդեթի վկայության:

Դրությունը խստագույնս ծանրացավ բոլշևիկների տիրապետության օրոք՝ Ադրբեջանի մարտնչող շովինիստական քաղաքականության հետևանքով: Լենին–Աբաթուրք գործարքով Ադրբեջանին նվիրված հայկական այս մարզերը դարձան տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական սանձարձակ հալածանքների թիրախ, որպեսզի հայությանը այստեղից ևս դուրս մղեն: Յոթանասունամյա անլուր հալածանքների շնորհիվ այդ մարզերի հայ բնակչության մի մեծ մասը հարկադրաբար ապաստան գտավ Միության այնպիսի տեղերում, ուր հնարավոր էր ունենալ կայուն աշխատանք և ապահով կյանք:

Պատկերացնելու համար, թե պատմության համար մի կարճ ժամանակահատվածում ինչ չափերի է հասել հայերի ցեղասպանությունը չդադարող հալածանքների պատճառով, հիշատակենք մի փաստ միայն: 1724 թ. Ղարաբաղը ուներ 100000 ծուխ հայ բնակչություն, իսկ 1926 թ. մարդահամարի ժամանակ նույն տարածքում մնացել էր ընդամենը 111000 հայ: Այսինքն՝ աճելու փոխարեն երկու հարյուր տարվա ընթացքում յուրաքանչյուր ծխից մնացել էր միայն մեկ մարդ, իսկ մյուսներն իրենց բնական աճով հարկադրված են եղել ապաստան գտնել Ղարաբաղից դուրս: Այս դժբախտ անհրաժեշտության առաջին օրինակը տվեց Ղարաբաղի ազգային–ազատագրական պայքարի առաջնորդներից մեկը՝ Ավան Յուզբաշին՝ 1729 թ. անցնելով ռուսական տիրապետության սահմանները:

Հայտնի է նաև, որ մինչև 1988 թ. իրադարձությունները միայն Ղարաբաղն ուներ տարբեր ժամանակներ արտագաղթած և ռուսական կայսրության բոլոր հորիզոններում ապաստանած մեկուկես միլիոն հայեր: Դրան գումարվեց 1988 թվականով սկսված շուրջ մեկ միլիոնանոց հայերի բռնագաղթը Ադրբեջանից: (Խորհրդային բոլոր մարդահամարների ժամանակ Հայկական Հանրապետությունից դուրս ապրող հայերի թվաքանակը հետևողականորեն կեղծվել է քաղաքական նկատառումներով: 1916 թ. ցարական վիճակագրությամբ հետագայի «Ադրբեջան» տարածքում արձանագրված է 538,484 հայ, իսկ 1926 թ. խորհրդային մարդահամարով՝ 282,004: Ահա թե ինչու առնվազն կրկնակի պետք է հաշվել հայերի այն թվաքանակը, որ ցույց է տրվում Ադրբեջանում մարդահամարից մարդահամար:

Գորբաչովյան վարչակարգի հրահրած հայ–ադրբեջանական հակամարտությունը եկավ հարցը վերջնականապես լուծելու: Այն սկսվեց ոչ թե Ղարաբաղյան շարժումով, Աղդամով կամ Սումգայիթով, այլ Զարդախլվով, մարզի սահմաններից դուրս թողնված այն հռչակավոր գյուղով, որը պատերազմի ժամանակ տվել էր երկու մարշալ և տասնյակից ավելի գեներալներ: 1987 թ. Զարդախլվին հարկադրեցին հարևան ադրբեջանական գյուղին զիջել 500 հեկտար հող: Մերժմանը հետևեց գյուղի՝ դիմադրող կանանց ծեծը միլիցիայի ջոկատների կողմից՝ մի վերջին անգամ հաստատելով թուրքական սկզբունքը՝ հողը արյունով է նվաճվում:

Պատահական չէ, որ հայկական շրջանների հայաթափումն էլ սկսեցին մարզի կազմից դուրս թողնված հայկական շրջաններից, որոնց մեջ առաջիններից մեկն էր Զարդախլուն, լուծեցին պետական զորքերի ակտիվ մասնակցությամբ՝ հարկ եղած դեպքում գործողության մեջ դնելով զենքի բոլոր տեսակները: Ղարաբաղին փրկեց գորբաչովյան վարչակարգի փլուզումը, որովհետև պետական զորքերն ու ծանր տեխնիկան ռուսական զենքի պատմության մեջ աննախադեպ քստմնելի մեթոդներով, ընդհուպ մինչև անմեղ քաղաքացիներին որսալով ու թուրքերին վաճառելով, սկսել էին նաև Ղարաբաղի հայաթափումը: Չգիտենք քանի դար պետք է անցնի, որ ռուսական զենքին Գորբաչովի ձեռքով քսված այդ ամոթալի սև բիծը մոռացվի:

Այսքանից հետո միայն ղարաբաղցին զենք բարձրացրեց՝ ապացուցելու, թե «այնտեղ է լոկ սխրանքն սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»: Ղարաբաղցին զենք բարձրացրեց իր գոյության իրավունքը հաստատելու համար և հերոսաբար հաստատեց այն ու հաստատում է:

1988 թ. սկսված հերթական ցեղասպանության հետևանքով հայոց հինգհազարամյա հայրենիք, այսօր Ադրբեջան կոչվող երկրատարածքը, բացառությամբ Ղարաբաղի մի հատվածի, վերջնականապես զրկվեց հայությունից, զրկվեց հայերի նկատմամբ ամենավայրենի, ամենաբարբարոսական մեթոդների գործադրմամբ: Այսօր ո՞ւմ բաժին է դարձել հայոց, երեքհազարամյա Բաքուն, ո՞ւմ բաժին է դարձել հռչակավոր Շամախին՝ իր շրջակա 60 հայկական գյուղերով, Նուխին՝ իր ոչ վաղ անցյալի 88% հայ բնակչությամբ, Գանձակը՝ իր 75% հայ բնակչությամբ, Զագամը՝ իր միատարր հայությամբ: Եվ այս ամենը կատարվել է նախ՝ պարսկաթուրքական, ապա՝ ցարաբոլշևիկյան կայսերապետական քաղաքականության շնորհիվ, որոնք հետևողականորեն ադրբեջանականացրին Արևելյան Անդրկովկասը՝ հայերի ու վրացիների ազատագրական ձգտումները ճնշելու համար քոչվորական վայրենի ուժը ծառայեցնելով իրենց շահերին:

•

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽԱՂԱՂ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

1921 թ. Մոսկվայի, ապա Կարսի պայմանագրով գործարքի մեջ մտնելով Աթաթուրքի հետ՝ Լենինը ոչ միայն Կարսը զիջեց Թուրքիային, այլև Նախիջևանի երկրամասը «և այլ շրջաններ» հանձնեց նորաթուխ Ադրբեջանի Հանրապետությանը: Այդ «և այլ շրջաններ» արտահայտությամբ նկատի էր առնվում Արևելյան Հայաստանի մի շարք շրջաններ, որոնցից փրկվեց միայն Զանգեզուրը՝ շնորհիվ Նժդեհի հերոսական ջանքերի: Փաստորեն ԽՍՀՄ կազմավորելուց առաջ Լենինը, հանձին Ադրբեջանի, ստեղծեց մի փոքր կայսրություն և ադրբեջանցիների տրամադրության տակ դրեց ոչ միայն տեղաբնիկ ժողովուրդների՝ հայերի, լեզգիների, թալիշների, թաթերի և այլ փոքրաքանակ ժողովուրդների հայրենիքները, այլև նրանց ստեղծած հազարամյակների մշակույթը, քաղաքակրթությունն ու պատմությունը:

Մեզ հետաքրքրողը հայկական երկրամասերի նկատմամբ Ադրբեջանի կառավարության կիրառած զավթողական քաղաքականությունն է:

Կուրի աջափնյակը զբաղեցնող հայկական մարզերը, հիմնականում իր հայ բնակչությամբ, Լենինից նվեր ստանալու դիմաց ադրբեջանական ղեկավարությունը դիմեց քաղաքական զիջման՝ հանդուրժելով հայկական ինքնավար մարզի ստեղծումը, որը նրանց կողմից միշտ էլ դիտվել է որպես ժամանակավոր զիջում:

Որևէ մեկնաբանության տեղ չի թողնում Կավբյուրոյի հայտնի որոշման 2–րդ կետը, որով Ադրբեջանի կառավարությանն է թողնվում հայկական շրջաններից ինքնավար մարզի ստեղծումը և նրա սահմանների որոշումը: Հայտնի առակի տրամաբանությամբ դա նշանակում էր ոչխարներին հանձնել գայլերի պահպանությանը: Ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը, բայց ինչպե՞ս...

Նախ՝ մարզի կազմից դուրս մնացին չորս հայկական, ժամանակակից անվանումներով՝ Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի ու Շամխորի շրջանները: Ապա՝ այդ շրջանների վարչատերիտորիալ սահմանները այնպես գծեցին, որ ավանդաբար իրենց պատկանող հողատարածքների մի պատկառելի մասը մնաց նրանց սահմաններից դուրս: Այսպես, Գետաշենի և նրա շրջակա հայկական գյուղերի, ինչպես նաև Շահումյանի շրջանի վարելահողերը հասնում էին մինչև Գանձակի ու Պարտավի փեշերը՝ նախկին Գյուլիստանի մելիքության սահմաններով: Սակայն նրանց վարչատարածքային սահմանները գծեցին գյուղամերձ տարածքներով, չնայած այդ սահմաններից դուրս գտնվող հողերը շարունակում էին մշակել հայերը: Օրինակ, Պարտավի մոտ գտնվող Ղարբանդում էին գտնվում Կարաչինար գյուղի վարելահողերը, իսկ Գերանում՝ Գետաշենինը: Իրերի այս դրությունը պահպանվեց մինչև թուրքերի նստակեցության ու հողամշակման անցնելը, որպես ժամանակավոր ու հարկադրական իրողություն, որը հանգիստ չէր տալիս Ադրբեջանի կառավարությանը: Պատերազմից հետո, գործարկելով Վերին ղարաբաղյան ջրանցքը, Ադրբեջանի կառավարությունը Պարտավի և Կուրի մերձակայքի հայապատկան վարելահողերը խլեց այդ շրջաններից և դարձրեց թուրքական սեփականություն: Դա տեղի ունեցավ 1949 թվականին: Եվ երբ հայկական Գերանը դարձրեցին թուրքական, սկսեցին տարփողել, թե դա հին թուրքական բնակավայր է եղել: Իսկ երբ սկսվեց կոլտնտեսությունների ու շրջանների խոշորացումը, այդ միջոցառումը այնպես կազմակերպեցին, որ ստեղծվեց խառն էթնիկական միջավայր, ուր հայերին, տնականորեն ճնշելով, հարկադրում էին լքել պապենա-

կան օջախները, մինչև որ հարցը հիմնովին լուծեցին գորբաչովյան հրանոթների զորությամբ:

Վարչատարածքային սահմանագծման նույն սկզբունքով կազմավորվեց նաև Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: Նրա սահմաններից դուրս թողեցին վարելահողերն ու անասունների ձմեռանոցները, որ ձգվում էին մինչև արաքսամերձ տափաստանները: Եվ որպեսզի հետագայում հեշտ լինի այդ տարածքները մարզից պոկելը, սկզբից նեթ դրանք հայտարարեցին պետական ֆոնդի հողեր՝ ժամանակավորապես տրամադրված մարզին (հետաքրքիր է, հսկայածավալ պետության ուրիշ ո՛ր մասում է պետական ֆոնդի հողերի հարց եղել):

* * *

20–ական թթ. Ադրբեջանի տնտեսական կյանքի զարգացման համար ամենապատրաստ միջավայրերից մեկը, Բաքվի և Գանձակի հետ միասին, Լեռնային Ղարաբաղն էր՝ ժամանակի պահանջները բավարարող իր կադրերով ու աշխատուժով, իր բնական ռեսուրսներով: Հավանաբար այդ հանգամանքի հաշվառումով կենտրոնական կառավարությունը 1925 թ. առաջադրեց Թարթառ գետի վրա հիդրոկայանի կառուցման հարցը, որի իրականացումը մի հարված կլիներ ադրբեջանական ազգային կլանողական քաղաքականությանը: Ադրբեջանի ղեկավարությունը դրա դեմ գործի դրեց նման դեպքերի համար իր փորձված զենքը՝ հարցի լուծման ձգձգումը: Նա կարողացավ մինչև 1931 թվականը համարյա ոչինչ չձեռնարկել, կենտրոնի ճնշմամբ 1931 թ. հարկադրված եղավ ձեռնարկել տեղանքի հետազոտության ու շինարարության նախագծման աշխատանքները, 1934 թ.՝ շինարարությունը: Սակայն 1941 թ. հաջողացրեց կանգնեցնել «Թարթառհէկի» շինարարությունը և աշխատուժն ու շինարարական սարքավորումները տեղափոխել Մինգեչաուր:

Իսկ թե ինչու Ադրբեջանի կառավարությունը հատկապես Մինգեչաուրը ընտրեց հիդրոկայանի վայր և ոչ մի ուրիշ տեղ, դարձյալ պայմանավորված էր նրա ազգային հեռահար քաղաքականությամբ: Բանն այն է, որ Քուռի ծախափնյակը զբաղեցնող նախկին Արեշի գավառը դեռևս լրիվ ադրբեջանականացված չէր, իսկ նրա ու Հյուսիսային Արցախի հողատարածքները սահմանակից էին իրար և կազմում էին մի միասնական էթնիկական տարածք:

Հայտնի է, որ վերջին ծանրագույն հարվածը Նուխու և Արեշի հայության գլխին իջնում է 1918–20 թվականներին, երբ թուրքական զորքերը նորից են անցնում այդ տարածքով: Երկրամասի հայության այն մասը, որ կարողանում է փրկվել թուրքական յաթաղանից, փրկվում է միայն փախուստի միջոցով: Իսկ երբ Ադրբեջանը դառնում է խորհրդային, փախստականների մեծ մասը, որ մինչ այդ չէր վերադարձել հայրենի օջախներ, այդպես էլ մնում է փախստական, որովհետև Ադրբեջանի բոլշևիկյան կառավարությունը այստեղ ևս, ինչպես նաև Նախիջևանում, արգելեց նրանց վերադարձը: Փախստականների մի մասը ապաստան է գտնում Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում, մի մասն էլ Երևանին կից հիմնում է Նոր Արեշ թաղամասը:

Չնայած այս ամենին՝ երկրամասը իսպառ չի դատարկվում հայերից: Բնակչության մի մասը հեռուն չէր փախել և թուրքական զորքերի ետ քաշվելուց հետո վերադարձել էր հայրենի բնակավայրերը: Վերադարձել էին նաև Քուռի ծախափնյակը զբաղեցնող հայկական գյուղերի բնակիչները, գյուղեր, որոնք, ըստ էության, Հյուսիսային Արցախի հետ կազմում էին մի միասնական էթնիկական տարածք, որովհետև նրանց արանքում թուրքական բնակավայրեր չկային և այսօր էլ չկան:

Եվ այսպես, «Թարթառհէկի» շինարարությունը խափանելով և հատկապես Մինգեչաուրը հիդրոկայանի տեղ ընտրելով՝ Ադրբեջանի կառավարությունն առաջ էր տանում իր ազգային կլանողական քաղաքականությունը: «Թարթառհէկի» խափանումով Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղին զրկեց տնտեսական զարգացման հեռանկարից (հիշենք, որ փակեցին նաև Ստեփանակերտի գործող ջրակայանը): Հատկապես Մինգեչաուրը ընտրելով հիդրոկայանի վայր՝ ջրի տակ գցեցին Կուրի ծախափնյա հայկական գյուղախումբն իր տարածքներով՝ մեկընդմիշտ լուծելով Արեշի գավառի վերջնական ադրբեջանականացման հարցը: Իսկ այդ մարսելուց հետո, ինչպես արդեն ասվել է, սեփականացրին նաև Կուրի ու Պարտավի մերձակայքում գտնվող Հյուսիսային Արցախի հողատարածքները՝ օղակը սեղմելով Արցախական աշխարհի միջնաբերդի՝ ԼՂԻՄ–ի վզին:

***

Արևելյան վայրենի ցեղերի հազարամյա ասպատակությունները Միջին Ասիայից մինչև արաբական թերակղզի, Եվրոպա և Հյուսիսային Աֆրիկա, որոնք հսկայական աշխարհատարածքներ կոտորածների ու ավերածությունների հովիտ դարձրին, այնպես էլ չկարողացան փոխել Արցախի էթնիկական կազմն ու տարածքային ամբողջականությունը:

Ճիշտ է, նրանք հայաթափեցին Արցախի և Ուտիքի դաշտավայրային շրջանները, ոչնչացրին հազարամյակների ընթացքում ստեղծված բարձր քաղաքակրթությունը, բայց յուրացնել այդ տարածքները այդպես էլ չկարողացան ընդհուպ մինչև վերջին պատերազմը:

Առանձնապես անմարդաբնակ անապատի էր վերածվել Արաքսի ձախափնյա մասը, որտեղից մնացել են պատմական հուշի որոշ բեկորներ միայն: Այսպես՝ հայոց երբեմնի Բայլականից հուշի ձևով մնացել է միայն ավերակը՝ Օրան դալա (Քանդված բերդ) անվանումով, անհիշելի ժամանակներից Արաքսից հանված ոռոգման ջրանցքից մնացել է Գյավուր արխ (Անհավատի առու) անվանումը, ջրանցքի ձախափնյա անջրդի տարածքներից մեզ է հասել Հարամի (Արամի՞) տեղանունը և այլն:

Երեք աշխարհամասեր ոտնատակ տված թուրքալեզու վայրենի ցեղերի կատարած ավերածությունները մերձարաքսյան հարթավայրում կարող է համեմատվել միայն Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից հայտնի միջինասիական քաղաքակրթության ոչնչացման հետ: Եվ եթե Միջին Ասիան հետագայում կարողացան շատ թե քիչ յուրացնել և դարձնել հայրենիք, այստեղ նրանք այնպես հիմնովին էին ավերել, որ անգամ իրենց ոչխարների համար պիտանի չէին որպես արոտավայրեր: Նույնիսկ ցարիզմը ի զորու չեղավ մարդաբնակ դարձնելու այդ տարածքները: Ցարիզմը Արցախի նախալեռնային գոտին աղեղնաձև դարձրեց ռուսական գաղթօջախներ՝ Շամխորի կողմերից մինչև Կարյագինո–Ֆիզուլի, իսկ Արցախի մերձարաքսյան գոտին փոխանցեց բոլշևիկներին՝ որպես անցյալի տխուր ժառանգություն:

Աչքի առաջ ունենալով այն հավանականությունը, որ արցախահայությունը օրերից մի օր կդնի մարզի շարունակությունը կազմող մերձարաքսյան անմարդաբնակ տարածքների յուրացման հարցը, մի գիշերվա մեջ բոլշևիկ դարձած Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը 20–ական թվականներին ծրագրեց այդ տարածքների էթնիկական յուրացման խնդիրը: Եվ քանի որ նրանք չէին կարող ցեղակից քոչվորների միջոցով նման միջոցառում իրագործել, 1928 թ. պարտադրեցին մարզի ղեկավարությանը, որ Ղարաբաղի աշխատավորության ուժերով իրականացնեն այդ գործը: Մարզի բոլոր շրջաններից անհրաժեշտ քանակությամբ աշխատուժ տեղափոխեցին Արաքսի ափամերձ տարածքները, որոնք վերաբացեցին հազարամյակներ առաջ հայերի կողմից Արաքսից հանված, բայց ժամանակին արևելյան հորդաների ձեռքով հիմնովին ավերված ջրանցքը՝ Գյավուր արխը, ստեղծեցին առաջին կոմունաները, որոնց հիմքի վրա էլ հիմնադրեցին 13 սովխոզ:

Տասը տարվա ընթացքում այդ սովխոզները տնտեսական այնպիսի վերելք ապրեցին բամբակագործության, հացահատիկային կուլտուրաների ու անասնապահության բնագավառներում, որ առաջացավ ինքնուրույն շրջան ստեղծելու հնարավորություն: 1938 թ. այդ սովխոզները հանեցին մարզի վարչատարածքային ենթակայությունից, դարձրին հանրապետական ենթակայության շրջան և այն կնքեցին Ժդանովի անունով: Դրանով նրանք լուծեցին ռազմավարական կարևորության մի հարց, մարզը կտրեցին արտաքին աշխարհից, այն այլևս հարևան պետության հետ սահման չուներ: Եվ որպեսզի դա առավել հիմնովին լինի, ջրանցքից վերև գտնվող անջրդի տարածքներն էլ, որպես «չեզոք գոտի», հայտարարվեցին պետական ֆոնդի հողեր, որոնք ժամանակավորապես տրամադրվում են մարզին, և մարզի կոլտնտեսությունները իրավունք ունեին միայն այն օգտագործելու որպես ոչխարների ձմեռանոց: 60–ական թվականներին ծրագրվեց այդ տարածքները ևս ոռոգելի դարձնել Կուր գետից բերվելիք ջրանցքով՝ նոր ժդանովներ ստեղծելու հեռանկարով, սակայն Միության տնտեսական կյանքի շեշտակի անկումը հնարավորություն չտվեց հերթական հնգամյա պլան մտցված այդ ծրագիրն իրականացնել:

Քանի որ նորաստեղծ շրջանը հայկական էթնիկական կազմով էր, շրջանի ղեկավարությունն էլ հանձնեցին հայերին: Շրջանի կուսշրջկոմի առաջին երկու առաջին քարտուղարն էին հայեր Ջավադովը, ապա՝ Վանունցը: 40–ական թվականների վերջերից մեթոդիկ հետևողականությամբ շրջան են ներմուծում ադրբեջանական տարր՝ Մուղանի դաշտավայրում քոչվորական կենցաղով ապրող ազգակիցներին ընտելացնելով նստակեցության առավելություններին: Դրան ուղեկցում է շրջանի ղեկավարության էթնիկական պատկանելության փոփոխությունը: Երրորդ առաջին քարտուղարն արդեն թուրք Օրուջովն էր, երկրորդ քարտուղարը՝ հայ Հարությունովը, իսկ վերջերում հայերին բաժին էր մնացել շրջկոմի ընդամենը երկու երկրորդական հրահանգչի հաստիք: Ավելորդ է ասել, որ շրջանի աշխատանքների պատկառելի մասը, առանձնապես բերքահավաքը, կոռի ձևով դրված էր Ղարաբաղի աշխատավորության, ինչպես նաև ուսանողության ու աշակերտության ուսերին:

Ինչքան բազմամարդ էին դարձնում ադրբեջանական տարրը շրջանում, այնքան էլ ադրբեջանական իշխանություններն ուժեղացնում էին ճնշումները հայերի նկատմամբ: Արդյունքը... Դանդաղ, բայց աննահանջ հետևողականությամբ ադրբեջանցիները ներթափանցում են բոլոր տեղերը, դառնում դրության տերեր: Սովխոզներից մեկը՝ Նորագյու-

ղը, որի միջնակարգ դպրոցն ուներ 700 և ավելի հայ աշակերտներ, որը պատերազմի ժամանակ տվել էր 146 զոհ, 80–ական թվականների կեսերին դարձել էր խառը բնակավայր՝ թուրքերի մեծամասնությամբ: Նույն ճակատագիրն են բաժանել նաև մյուս սովխոզները:

Ինչպես ամենուր, այստեղ ևս թուրքական ներթափանցմանը հաջորդեց յուրացումն այն ամենի, ինչ ստեղծել էին ուրիշները: Բանը հասավ այնտեղ, որ պատերազմի զոհերի հիշատակին կանգնեցված հուշարձանի վրայից ջնջեցին հայերի ազգանունները՝ տեղը գրելով թուրքերի չեղյալ ազգանուններ:

Երբ գորբաչովյան վարչակարգն իրականացրեց սումգայիթյան ոճրագործությունը, Սումգայիթի հայությանը դեռևս չբռնագաղթեցրած, ադրբեջանական իշխանությունները այդ ակտը իրականացրին Ժդանովի շրջանում: Այն օրերի գործելակերպի ոճով թուրքական խառնամբոխը մտցրեցին բնակավայրերը՝ հայերին կոտորելու սպառնալիքով, իսկ իշխանության ներկայացուցիչները հանդես եկան փրկարարի դերով և հարկադրեցին հայերին՝ գլուխներն ազատել ու փախչել սեփական բնակավայրերից: Վերջին ընտանիքը 90 տարեկան մի պառավ էր՝ իր երեք աղջիկներով, որոնցից երկուսը՝ հաշմանդամ և ի վիճակի չէին փախչելու: Թուրք խուժանը ծաղրուծանակով նրանց «լցրեց» ինքնաթափ մեքենա, բերեց Հայաստանի սահմանագլխին «թափեց»:

Ահա այս ակտից է սկսվել Արցախական աշխարհի հայության վերջին բռնագաղթը, որը հետագայում տարածվեց Չարդախլվից մինչև Գետաշեն, Բերդաձորից մինչև Հադրութի շրջան:

Ահա այսպես են 70 տարում քայլ առ քայլ ստեղծել Ադրբեջան՝ բռնազավթելով երկրամասի հինգ հիմնական ժողովուրդների հայրենիքը, նյութական և հոգևոր ժառանգությունը: Ժդանովի շրջանի պատմությունը ցուցադրում է երեկ թուրքմեն, թուրք, թաթար, նորից թուրք, այսօր ութ միլիոնանոց ադրբեջանցի կոչվող ժողովրդի «սրբազան հայրենիքի» ձևավորման մեխանիզմը:

***

Այնուամենայնիվ. ամենից հետևողական, դաժան ու տևական խտրականությունն ու հալածանքը մարզի բնակչությանը բաժին հասավ: Քանի դեռ գործում էր Անդրֆեդերացիան, մարզի տնտեսական ու հոգևոր զարգացման համար ինչ–ինչ հնարավորություններ էին ստեղծվում: Անդրֆեդերացիայի լուծարումից հետո (1936 թ.) ադրբեջանական մարտնչող շովինիզմի, ազգային խտրականության, «հայ ժողովրդի քոքը» Ադրբեջանի ենթակայության տարածքներից կտրելու քաղաքականությունը հետևողականորեն ընդունեց այնպիսի սանձարձակ չափեր, որ գաղութատիրության 500–ամյա պատմության մեջ արձանագրեց աննախադեպ իրողություններ: Կբավարարվենք սակավաթիվ փաստերով միայն:

Ինչպես ասվեց, Անդրֆեդերացիայի հովանավորությամբ կառուցվող «Թարթառիկի» խափանմամբ կառուցվեց Մինգեչաուրը, Ժդանովի շրջանը պոկվեց մարզի ենթակայությունից: Համաձայն 1939 թ. մարդահամարի՝ մարզն ուներ 125 հազար բնակիչ, որից 45 հազարը տարան պատերազմ՝ տնտեսությունը թողնելով ծերունիների, կանանց ու երեխաների հույսին: 10 տարեկանից բարձր ողջ բնակչությունն աշխատում էր հատուկ ռեժիմով: Այդ տարիներին սովորող աշակերտությունը չգիտեր՝ ինչ է ֆիզկուլտուրայի, երգի, գծագրության դաս, այդ ժամերի հաշվին էլ պետք է լիներ դաշտում՝ ուսուցչի գլխավորությամբ: Բերքը դաշտից էին հանձնում պետությանը, և հաց արտադրող ղարաբաղցին տան ունեցած–չունեցածը, ընդհուպ մինչև տան ծածկի թիթեղը կիսաքոչվոր հարևանների հետ հացահատիկով փոխարինելու գնով փրկվեց մասսայական սովամահությունից, չնայած շատ–շատերը սովից մահացան:

Պատերազմը վերջացավ հաղթանակով. «Մեր սուրը փառքով դրեցինք պատյան»: Բայց բանաստեղծի բանաձևած այդ փառքից բաժին չհասավ ղարաբաղցուն: Դեռևս պատերազմի վերքերը չբուժած՝ 1949 թ. վերադասի մի կարգադրությամբ գյուղացիական Ղարաբաղի աշխատավորությունը զրկվեց չորքոտանի պահելու իրավունքից: Ամեն ինչ պետք է կենտրոնանար կոլտնտեսային ֆերմաներում, որպեսզի եկամուտն անմնացորդ հանձնվեր պետությանը: Մի տարի հետո բրդամթերման արտապլանային պարտավորությունը կատարելու նշանաբանով, միլիցիայի մասնակցությամբ, հատուկ հանձնաժողովներ կազմած քանդեցին ժողովրդի վերմակ–ներքնակները, տարան 200 տոննա բուրդ, որպեսզի... թափեն որպես անպետքություն: Ղարաբաղցուն մի բան էր թույլատրվում միայն՝ բարիքներ արտադրել՝ առանց դրանցից օգտվելու իրավունքի: Ահավասիկ: «Մարտակերտի խորհրդային տնտեսությունն ամեն տարի պետությանն էր հանձնում 20–25 հազար տոննա խաղող, 1200–1500 տ հացահատիկ, 1300 տ կաթ, 200–250 տ միս, 2000 տ բանջարեղեն, 20–25 տ բուրդ, 10 տ բոժոժ, 600 հազար ձու»[1]: Սակայն տնտեսությունն իրավունք չուներ իր եկամուտներից հատկացում կատա-

[1] Շ. Մկրտչյան, Արցախյան գրառումներ, Երևան, 2001 էջ 104:

ռել բնակավայրը ջրով ապահովելու համար: 1971 թ. Մարտակերտի շրջանը պետությանն է հանձնել 3000 տ միս, որից ընդամենը 6 տ է թույլատրվել վաճառել 46 հազար բնակիչ ունեցող շրջանում: Այսինքն՝ յուրաքանչյուր շնչին՝ 6,5 կգ միս այն դեպքում, երբ նույն տարին միութենական միջինը եղել է 38 կգ:

1949 թ. սկսեցին ջարդի տակ դնել նաև մարզի արդյունաբերությունը: «Փակեցին տեղական արդյունաբերության 18 արտելները (որտեղ աշխատում էր 1045 բանվոր), շինանյութերի 6 կոմբինատները (317 բանվոր), գյուղերում գործող 5 մետաքսակարժական ֆաբրիկաները (926 բանվոր), ... փակեցին պետական և կոլխոզային 6 էլեկտրակայանները, Ստեփանակերտի հայկական ուսուցչական ինստիտուտը, Հադրութի հայկական մանկավարժական տեխնիկումը: Ավերեցին Եվլախ–Ստեփանակերտ 116 կմ երկարությամբ երկաթուղին, կտրատեցին շուրջ 1200 հեկտարի չափ թթենու դարավոր այգիներ, լրիվ վերացման եզրին կանգնեցրեցին մեղվաբուծությունը, պտղատու այգեգործությունը: ...Իբրև «սոցիալիստական հզոր երկրին պատիվ չբերող ձեռնարկություններ», ավերեցին նույնիսկ կրի, կղմինդրի, փայտամշակման, ատաղձագործական, լուցկու, կտավատի յուղի արտադրության տեղամասերը»[1]:

Այս բարբարոսական միջոցառումների հետևանքով 1949–1956 թթ. մարզից շուրջ 30 հազար հայ աշխատավորներ թողեցին տուն–տեղ ու դարձան պանդուխտ: Հետագայում այդ թիվը 75 հազարից անցավ: Բայց որ ամենից սանձարձակն է, Ադրբեջանի քարոզչական մեքենան Ղարաբաղի տնտեսական, առանձնապես արդյունաբերական զարգացման ցուցանիշները ներկայացնում էր աստղաբաշխական թվերով, հրապարակումից հրապարակում հասցնում մինչև 912 անգամ աճի, կեղծ ու պատիր թվերով «ապացուցում», որ Ղարաբաղը միայն Ադրբեջանի հայրական հոգատարության շնորհիվ է «ծաղկել, ազգային արժանապատվություն ձեռք բերել, կենսամակարդակի ու հոգևոր կուլտուրայի չտեսնված բարձունքների հասել»[2]: Աշխարհով մեկ թմբկահարում են Ստեփանակերտում կառուցվելիք գործարանների մասին, բայց պարզվում է, որ մարզի կապիտալ ներդրումների հաշվին ու հայ շինարարների ձեռքով այդ գործարանները կառուցվում են մարզից դուրս՝ միկրոշարժիչները՝ Աղդամում ու Լենքորանում, ավտովերանորոգման գործարանը՝ Բաքվում, գյուղմեքենաշինականը՝ Գանձակում:

[1] Շ. Սկրտչյան, Արցախյան գրառումներ, Երևան, էջ 29, 102:
[2] Проблема мира и социализма, 1977, № 6, стр. 12:

Տնտեսական, քաղաքական, մշակութային տեռորին ու ավերածություններին զուգահեռ, իշխանությունները գործողության մեջ էին պահում միանգամայն անմեղ մարդկանց թուրքամեթոդ ոչնչացնելու պրակտիկան՝ բնակչությանը սարսափի մեջ պահելու քաղաքական նկատառումով: Դարձյալ որոշ փաստեր: Գյուղացին գիշերավար է կատարում կոլտնտեսային դաշտում: Առավոտը հերթափոխը գնում է տեսնում սպանված: Երեք հայ շինարարներ հասնում են Իմիշլի շրջկենտրոն՝ վաստակի: Երեքին էլ կապում են երկաթյա մահճակալին, միացնում էլեկտրական հոսանքը, սպանում՝ գրպանելով նրանց վաստակը: Բանակից տուն վերադարձող երեք զինվոր հասնում են Եվլախ կայարան: Երկուսին սպանում են, մեկը հրաշքով փրկվում է փախուստով: 15 տարեկան աղջկան օրը ցերեկով փախցնում են Ստեփանակերտից, 6 հոգով հերթով բռնաբարում, թուրքավարի այլանդակում դիակը, բերում գցում պատերազմի զոհերի հուշարձանի տարածքը: Եվ խմբով կատարվող նման վայրենի բարբարոսությունների համար ոչ մի հետաքննություն, դատ ու դատաստան:

Վերջապես նման բարբարոսության մի դեպք իշխանությունները անհետևանք թողնել չեն կարողանում: Տոհմիկ բանդիտ, կուսանդամ և դպրոցի տնօրեն Արշադը, որը տասնամյակներ շարունակ լրացնում էր բանդիտ հոր գործը, որի արյունարբու գործերը տասնյակներով են հաշվվում, բռնվում է հերթական ոճրագործության ժամանակ: Մարդկային դեմքից զուրկ այդ ճիվաղը 9 տարեկան երեխային ուղղակի հոշոտում է: Սպանելուց առաջ իր հանցակիցներով բռնաբարում են, դեռ կենդանի մեխ ու սեպ խրում ականջները, ձեռքերը թիակներից անջատում, աղիքները ցրիվ տալիս, առնանդամը կտրում, բերանը դնում: Մի խոսքով, կատարում են այն ամենը, ինչ որևէ գազան, թուրքից բացի, չի կարող անել:

Ադրբեջանական իշխանությունները դատը շրջկենտրոնից տեղափոխում են մարզկենտրոն, դատական պրոցեսը վարում այնպիսի գրգռիչ լկտիությամբ, որ «պատիվ» կարող է բերել միայն փողոցի խուժաններին: Եվ երբ դատավճռից հետո էլ գլխավոր ոճրագործի կինը հպարտորեն հայտարարում է՝ «Մի վախեցեք, ոսկու զորությամբ Ձեզ փրկել եմ գնդակահարությունից, նույն ոսկու զորությամբ ամիսներ հետո ազատ եք արձակվելու», ափերից դուրս եկած ժողովուրդը դիմում է ինքնադատաստանի: Արդյունքում մեկ տասնյակի չափ հայեր են սպանվում նախաքննության ժամանակ, 20–ից ավելի հայեր դատապարտվում են գնդակահարության կամ տարբեր ժամկետներով բանտարկու-

թյան, և դարձյալ շարունակվում են անմեղ հայերի սպանությունները: Իսկ ճիվաղ հանցագործի թաղումը կատարում են հանրապետության վարչապետի ու հոգևոր պետի մասնակցությամբ, գերեզմանին արձան կանգնեցնում:

Միջնադարյան վանդալիզմը գերազանցող այս իրականության դեմ է 70 տարի պայքարել Ղարաբաղի ազգաբնակչությունը:

***

Անդրերկրկոմի 1921 թ. հունիսի 5–ի տխրահռչակ որոշումից հետո Ադրբեջանի կոմունիստ ղեկավարները փորձեցին գյուղացիական համագումարների տեսքով դեմոկրատականության շապիկ հագցնել այդ խաղաղ բռնազավթմանը: Նման մի համագումար տեղի ունեցավ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, ոչ անհայտ կոմունիստներ Ասադ Կարանի և Լևոն Միրզոյանի գլխավորությամբ: Դա այն Ասադ Կարանն է, որը գաղտնի գրություններով հրահանգավորում էր իր ցեղակիցներին՝ միջոցների մեջ խտրություն չդնել հայերի «քոքը» կտրելու գործում: Համագումարը վճռականորեն դրսևորեց իր կամքը՝ «Ամեն մարդու համար հարազատ է իր տունը, իսկ մեր տունը Հայաստանն է» ձևակերպումով և մերժեց Ադրբեջանի կազմի մեջ մտնելու պահանջը: Հրապարակայնորեն անհաջողության մատնվելուց հետո հարկադրում են համագումարի քարտուղարներ Արամ Բաղդասարյանին (Սոս գյուղից) և Սամվել Գրիգորյանին (Գիշի գյուղից), որ գրեն տրամագծորեն հակառակ որոշում: Երբ վերջինները հրաժարվում են՝ պատճառաբանելով, որ ժողովրդի վստահությունը ոտնահարել չեն կարող, ձերբակալվում են, տարվում Շուշի, ապա՝ Բաքու: Սամվել Գրիգորյանը հաշվեհարդարից փրկվում է պատահաբար. Խարկովի գյուղինստիտուտում սովորելու տարիներից նախածանոթ չեկիստը ազատում է նրան՝ պատվիրելով մի տնական ժամանակ Ղարաբաղում չերևալ:

Ահա այս կետից սկսած՝ ղարաբաղցին 70 տարի շարունակ չի համակերպվել իր համար ստեղծված դժոխային պայմաններին, անընդհատ բողոքել է, պահանջել, ամեն 4–5 տարին մեկ իր լավագույն գավակներին զոհասեղան բարձրացրել՝ գործողության մեջ դնելով միայն մի զենք՝ Լենին–Ստալինի գրածները ազգային հարցի մասին՝ դիմացը լեռնացնելով ադրբեջանական մարտնչող շովինիզմի ու ռասայական խտրականության արդյունքները: Կրեմլի արխիվները պայթում են այդ կարգի բողոքագրերից:

Պարզ է, որ ղարաբաղցին չէր կարող անտարբեր մնալ գորբաչովյան պերեստրոյկայի և գլասնոստի նկատմամբ և միամիտ հավատով հրապարակ դուրս եկավ՝ «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսը դրոշակ դարձրած, սովետական ողջ ժողովրդի հետ միասին չպատկերացնելով, թե այդ «պերեստրոյկան» դեպի ուր է տանում երկիրը:

Բայց այստեղ պետք է մի հարկադրական կանգառ կատարել, որովհետև ղարաբաղյան հակամարտությունը, անկախ ղարաբաղցիների և ընդհանրապես հայ ժողովրդի ցանկություններից, վաղուց արդեն պլանավորվել էր մեզ համար անմատչելի ոլորտներում: Ղարաբաղյան հակամարտության տասնվեցամյա հետագիծը ցույց է տալիս, որ եթե ողջ հայ ժողովուրդը նույնիսկ հավաքված լիներ մի բունկերում՝ աշխարհի իրադարձություններին չմասնակցելու վճռով, դարձյալ աշխարհը կլանել ձգտող հզոր ուժերը դուրս էին բերելու նրան, կանգնեցնելու շիկացած հակամարտությունների կենտրոնում: Մեզ այսօր մատչելի է այդ պլանի շորշոփները միայն, որը հայ ժողովրդի նկատմամբ հզոր տերությունների երեքհարյուրամյա քաղաքականության շարունակությունն է:

Դեռևս չկար ղարաբաղյան որևէ շարժում, «ինտերնացիոնալ» Բաքվում անց է կացվում հայ գրականության ու մշակույթի «եղբայրական» տասնօրյակ: Եվ ահա կուսակցության բերան «Բակինսկի ռաբոչիյ» պաշտոնաթերթը երկու անգամ հրապարակում է Հայաստանի գերբը՝ Մասիսի նկարը գերբից հանած: Դրան հաջորդում է Ղարաբաղի հայ բնակչության որսորդական հրացանները հավաքելու հրահանգը: Մի քանի օր հետո երկու մարշալ, մեկ տասնյակից ավելի գեներալներ տված հայկական Չարդախլու գյուղին հարկադրում են 500 հեկտար հողատարածք զիջել հարևան թուրքերին: Մերժվելուց հետո Շամխորի շրջկոմի քարտուղարը ռեգիոնի միլիցիայի ջոկատով մտնում է գյուղ: Արյունահեղությունից խուսափելու հույսով գյուղի կանայք են դուրս գալիս պատասխանելու և ընկնում վայրենի ջարդի տակ: Գորբաչովյան վարչակարգն իր հովանավորության տակ է վերցնում ջարդարարներին: Նույն օրերին Գորբաչովի օգնական Աղամբեկյանին հանձնարարվում է «Յումանիտե» թերթի միջոցով հայտարարել, թե վերակառուցումը լուծելու է նաև Ղարաբաղի ու Նախիջևանի հարցերը:

Վերակառուցման խաբկանքով մոլորված ղարաբաղցին, արդարության վերականգնման ժամանակը եկած կարծելով, առաջին քայլերն է անում Կրեմլի տրամադրությունը շոշափելու ուղղությամբ: Մի ամսվա մեջ երեք պատվիրակություն է մեկնում Մոսկվա: Առաջինի կազմում էին տրակտորիստ, անասնապահ ու հողագործ, վերջինը «բարձր» մտավո-

ռականությունն էր՝ ի դեմս «Ծիտիկ» երգող մանկագրի: Կրեմլի դռները, որ 70 տարի պարսպապատված էին հասարակ մահկանացուների առաջ, հանկարծ լայնորեն բացվեցին ղարաբաղյան պատվիրակների համար: Երկդիմի խոստումներով ու «կարմիր հույսերով» այնպես ոգևորեցին ժողովրդին, որ վերջինս դուրս եկավ հրապարակ:

Ղարաբաղյան շարժումն ու դրա արդյունքում մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20–ի պատմական որոշումը երկնքից ընկած մանանայի դեր խաղաց Ադրբեջանի հայության դեմ վայրենի բռնությունների, լենկթեմուրյան ժամանակները վերադարձնող սանձարձակ ագրեսիա ծավալելու համար: Դեռևս մարզխորհրդի սեսիայի ամբիոնից Ադրբեջանի կուսկենտկոմի քարտուղարն սպառնաց ադրբեջանական հարյուրհազարանոց գաղտնի բանակով, որ մոխիր կդարձնի Ղարաբաղը (70 տարի հայերի դեմ գործել է այդ գաղտնի բանակը): Արդյունքի չհասնելով՝ նա իրեն նետեց Աղդամ քաղաքը և կազմակերպեց աղդամցիների հայտնի արշավանքը Ղարաբաղի դեմ: Բայց քանի որ արշավողները իրենց դիմաց կանգնած ուժ տեսան, մեջտեղ հանեցին կնոջ լաչակը, և ընդհարում չեղավ: Չնայած դրան՝ Կատուսևը հեռուստատեսությամբ հաղորդեց, թե ընդհարման ժամանակ երկու ադրբեջանցի է զոհվել:

Գորբաչովը էմիսարներ ուղարկեց Հայաստան ու Ադրբեջան: Հայաստանում Լուկիանովը հանդիպեց Մասիսի շրջանի թուրքերի հոգևոր առաջնորդին և տվեց անհրաժեշտ հրահանգներ: Դեմիչևը, Ռազումովսկին, Կատուսևը Ադրբեջանի ղեկավարության հետ ամեն ինչ նախապատրաստեցին, ընդհուպ մինչև Սումգայիթում հայ վարպետ բանվորների ձեռքով երկաթածողեր սրելը, և Գորբաչովի «անկանխատեսնելի հետևանքներ» ազդարարող հրահանգով իրականացրին սումգայիթյան նախճիրը՝ Հայաստանից ու Ադրբեջանի զանազան շրջաններից, առանձնապես Աղդամից հավաքագրած ու հաշիշով հարբեցրած երիտասարդության ձեռքով: Հայը երկրում գործող օրենքների, սահմանադրությամբ տրված իրավունքների տրամաբանությամբ Ղարաբաղում արդարություն և իրավունք է պահանջում, 400 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթում արյունահեղություն են սարքում, որովհետև այնտեղ հայը զրկված է հավաքական ինքնապաշտպանության հնարավորությունից: Լկտի սուտ է Գորբաչովի հայտարարությունն այն մասին, թե իբր զորքերը ուշացել են 3 ժամով: Զորքը կանգնած է եղել այնտեղ՝ պատրաստ անհրաժեշտության դեպքում միանալու ջարդարարներին, եթե հայերի կողմից դիմադրություն լիներ: Գորբաչովն անսքող իր պաշտպանության տակ վերցրեց ջարդարարներին, դատական կոմեդիաներով նրանց դարձրեց ազգային հերոսներ՝ ադրբեջանական ժողովրդին տալով անպատժելիության երաշխիքներ: Բնութագրական է, որ Սումգայիթում թափված արյունը դեռ չչորացած՝ Մոսկվան 1988 թ. մայիսին Սումգայիթն ու Աղդամը հռչակեց որպես սոցիալիստական մրցության հաղթողներ երիտասարդության ինտերնացիոնալ դաստիարակության բնագավառում:

Իսկ սանձազերծված քարոզչական մեքենա՞ն, որը քաղաքական պոռնկության համաշխարհային պրակտիկայում արձանագրում է չգերազանցված ռեկորդներ: Սումգայիթի թուրքական բարաքների ցուցադրումով Մոսկվան արդարացրեց ոճրագործությունը: Լկտիությունը հասցրին այնտեղ, որ աշխարհով մեկ դատափետեցին Մելքումովներին այն բանի համար, որ հանդգնել էին դիմադրել սեփական բնակարանում իրենց կոտորող մարդակերներին:

Մարդկային երևակայությանն անգամ անհարիր ու քստմնելի ոճրագործության որևէ ձև եղե՞լ է, որ իշխողների լուռ թողտվությամբ չիրականացնեին ազերթուրք ջարդարար ոհմակները. ծերանոցում ապաստանած խեղճերին բռնաբարել, երեխային էլեկտրասալիկի վրա վառել ծնողների աչքի առաջ, կենդանի մարդուն մաշկել, երիտասարդ հղի կանանց մերկացնել ու մտրակի հարվածների տակ պտտեցնել փողոցներով, ապա՝ գազանաբար սպանել, կանանց խմբովի բռնաբարելուց հետո կրակը նետել ու վառել, էլ որ մեկը թվես: Եվ այդ ամենը հակամարտությունը նախօրոք պլանավորած մարդակեր ուժերի հայացքի առաջ, հակամարտությունը հաղթական ավարտին հասցնելու վճռականությամբ: Այդպիսի վայրենի խրախճանքների ուղեկցությամբ հայաթափեցին Սումգայիթն ու Բաքուն, Մինգեչաուրն ու Գանձակը, Ղազախն ու Թովուզը, Շաքին ու Շամախին, նրանց շրջակայքի հայկական բնակավայրերը՝ երեկվա հայ հայրենիքի այդ բաղադրամասերը վերջնականապես դարձնելով թուրքական, դրանց վրա կրկին անգամ դաջելով Ադրբեջան կեղծանունը:

Երբ հերթը հասավ մարզի կազմից դուրս թողնված արցախյան շրջաններին, այստեղ արդեն առանց պետական զորքերի օգնության արդյունքի հասնել չէին կարող: Եվ Գորբաչովը պետական զորքերով ու «Կոլցո» օպերացիաներով թուրքերի համար բռնազավթեց այդ շրջանները ևս: Զուգահեռաբար Գորբաչովյան վարչակարգը վերացրեց սովետական իշխանությունը մարզում, մտցրեց օկուպացիոն իշխանություն և պարետային ժամ՝ գործադրելով ընդհուպ մինչև մարդորսություն: Սաֆոնովյան բանդիտները որսում էին անմեղ հայերին ու վաճառում թուր-

քերին: Պարետային ժամը խախտելու մեղադրանքով պարետատուն էին քարշ տալիս տան բակը դուրս եկած քաղաքացուն, որպես օրինախախտ ի ցույց դնում ողջ երկրով մեկ, իսկ մի քանի կիլոմետր հեռվում, հզոր լուսարձակների տակ, գիշերներն անգամ շենքեր կառուցում, որպեսզի Միջին Ասիայից բռնագաղթեցված մեսխեթ թուրքերով շրջափակման օղակ ստեղծեն Ստեփանակերտ մարզկենտրոնի շուրջը: Արդեն պետական զորքերով հայաթափել էին նաև մարզի երկու տասնյակից ավել գյուղեր նս, երբ վրա հասավ գորբաչովյան վարչակարգի կրախը: Վերջին պահին անգամ պետական զորքերը գյուղական ներկայացումների մակարդակով «զինաթափվեցին» ադրբեջանական օմոնի կողմից: Սադիզմի ու վայրենի բռնկումների քառամյա այս ժամանակահատվածում Հայաստանում, թե Ադրբեջանում հայ ժողովրդի կողմից համարժեք գործողության որևէ փաստ չի արձանագրվել: Ճիշտ է, Հայաստանի թուրքերին էլ տարան Ադրբեջան, բայց դա կշեռքի թաթերը հավասարակշռելու քաղաքական ակտ էր միայն: Մի կողմից գալիս էին ջարդված ու արյունլվա, շատ դեպքերում միայն տնային հագուստներով՝ կորցրած տուն–տեղ, ունեցվածք, մյուս կողմից տանում էին շարժական ամբողջ ունեցվածքը՝ ընդհուպ մինչև հավերի ջրամանը՝ բարձած զինվորական մեքենաներին:

Եվ ո՞վ զարմանք, ո՞վ մարդիկ ու ժամանակներ, այդ ամենը «արդարության և իրավունքի պաշտպան» հզորները ընդունեցին և ընդունում են որպես բնական ու օրինաչափ երևույթ, որևէ մեկը դուրս չեկավ՝ ասելու, թե այդ ինչ եք անում: Հետաքրքիր է, ուրիշ էլ ինչպե՞ս է լինում ցեղասպանությունն ու բռնազավթումը: Թե՞ Բաքվից սպասվելիք նավթի հոտից մթագնվել էր աշխարհը կլանել ձգտող հզոր ուժերի միտքը:

Փոխարենն այդ ուժերը ինչպե՞ս էին քարեքար գցում մեզ, հետևողականորեն աղ լցնում մեր ազգային վերքերին, ինչպիսի՞ համաշխարհային աղմուկ էին սարքել Ղարաբաղյան շարժման պաշտպանությամբ, ինչպե՞ս էին Ղարաբաղյան շարժման ալիքին վերագրում Բեռլինի պատի փլուզումը, ինչպե՞ս էին իրենց երկրների պատվավոր քաղաքացիներ դարձնում շարժման մեջ անուն հանածներին (իրականում իրենց գործակալներին), ինչե՞ր էին խոստանում, ընդհուպ մինչև Եվրոպոլիս, այն էլ, ոչ ավել, ոչ պակաս, Նախիջևանի սահմանագլխին: Բայց ոչ մի խոսք Ադրբեջանի ողջ տարածքով մեկ սփռված Հայոց Գողգոթայի մասին, ոչ մի խոսք անշեղորեն իրականացվող ցեղասպանության դեմ:

Իսկ երբ մեզ համար նախասահմանված դերն արդեն կատարել էինք, երբ արդեն փաստ էր դարձել ԽՍՀՄ փլուզումը, երբ սեփական գոյության իրավունքը պաշտպանելու բոլոր քաղաքակիրթ միջոցներն սպառած ղարաբաղցին իրեն պարտադրված պատերազմի ժամանակ ստիպված եղավ զենք վերցնել և ոչ միայն կարողացավ չվաստակած հաղթանակներով լկտիացած հակառակորդի հաղթարշավը կանգնեցնել, այլև որոշ փշրանքներ էլ ետ բերեց նախկինում իրենից բռնազավթվածներից, նույն այդ «իրավունքի, արդարության պաշտպան» արևմտյան «բարեկամները» պոչների վրա կանգնեցին, Ղարաբաղի ամեն մի հաջողություն որակեցին ագրեսիա և ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի որոշումներով սպառնալիքներ տեղացին նրա գլխին: Արդեն 10 տարի է, որ պոչները չեն հանում Ղարաբաղի լեռների ճեղքերից, զենք են դարձրել Շուշին՝ անգիտանալով, որ հայերից էլ խլել են Բաքու և Շամախի, Շաքի ու Գանձակ, և այսօր էլ զինում են Ադրբեջանին՝ նոր պատերազմ սանձազերծելու հեռանկարով, որովհետև իբր թե «չեն կարողանում» հիմնահարցի «հարմար» լուծում գտնել:

Իրականում աշխարհը կլանել ձգտող հզոր ուժերը «տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքի» գաղափարները շղթայել են իրար ու ձգձգում են՝ ճշտելու համար, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որի նժարին կանգնելով ավելի մեծ օգուտ կստանան իրենք: Նրանց բնավ էլ չի հետաքրքրում հակամարտող կողմերի ճակատագիրը: Մենք չենք հավատում, թե այդ ուժերի դերակատարները չեն կարողանում գտնել իրար փոխադարձաբար ժխտող այդ սկզբունքների ջրբաժան կետը: Մինչդեռ տարածքային ամբողջականություն ասելով հասկացվում է, ասենք, Չեխիա՝ իր տարածքով և ոչ թե Չեխոսլովակիա՝մահացնող շղթայով իրար միացրած երկու կամ ավելի ժողովուրդներ: Ղարաբաղյան հիմնահարցի լուծման նախօրինակը Չեխոսլովակիան է: Այդ ելակետից պետք է մոտենալ նաև Աբխազիային ու Հարավային Օսեթիային, իսկ Կոսովոյի ու Մերձդնեստրի հարցում հարգել տերիտորիալ ամբողջականությունը՝ այդտեղ ապրող ժողովուրդներին տալով լայն ինքնավարություն: Առաջին դեպքում սեփական հարենիքում ինքնագլուխ ապրելու իրավունքն է լուծվում, երկրորդ դեպքում՝ հյուրընկալվող երկրում ինքնավար ապրելու իրավունքը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԶԻՋՈՒՄԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղարաբաղ–ադրբեջանական ներկա հակամարտության նախապատրաստողները և այն երկու ժողովուրդների համար արյունահեղ պատերազմի վերածողները այն գլխից Գորբաչովի բերանով բանաձևել են, թե հաղթողներ ու պարտվողներ չպետք է լինեն: Դա ինքնին ենթադրում է մի լուծում, որը բացառում է պատմության հազարամյակների փորձը, երբ հաղթող կողմը պարտադրում էր իր պայմանները, իսկ պարտվողը հարկադրաբար ընդունում էր այն: Բայց քանի որ առկա է հիմնահարցը և այն էլ՝ վերածված արյունահեղ պատերազմի, անխուսափելիորեն պետք է ունենա և իր լուծումը, ինչքան էլ այն հավասարապես չբավարարի հակամարտող կողմերից որևէ մեկին: Դա կարող է լինել և պետք է լինի մի լուծում, որը բխում է կոնֆլիկտի բուն էությունից, կոնֆլիկտ, որը բովանդակավորվել է շուրջ 300–ամյա մի ժամանակահատվածում և այսօր հասել իր գերլարված հանգուցալուծմանը: Դա կարող է և պետք է լինի մի լուծում, որը կիրառելի է միայն ղարաբաղյան հիմնահարցի համար, ինչքան էլ այդ հիմնահարցը նմանության եզրեր ունի աշխարհի այլ տարածքներում առկա նման հակամարտությունների հետ:

Այստեղ ամբողջ հասակով կանգնում է այն իրողությունը, որ պատմության մեջ չի եղել և հնարավոր էլ չէ, որ լինի որևէ գաղափար, կնճռոտ հարցերի լուծման որևէ դեղատոմս, որ կիրառելի լինի ամենուր: Ապացույցը կրոնական տարբեր ուսմունքներն ու միևնույն կրոնի շրջանակներում առկա և մեկը մյուսին ժխտող հոսանքներն են, սոցիալական բազմաթիվ ու բազմաբնույթ ուսմունքները, ապացույցը կրախի մատնված մարքսիզմ–լենինիզմն է, նրան փոխարինելու եկած «նոր աշխարհակարգ» կառուցելու մասին ամերիկյան ժամանակակից կարգախոսները, որոնք ամեն քայլափոխի հակասել ու հակասում են իրենք իրենց՝ պայմանավորված այն հանգամանքով, թե տվյալ գաղափարի կրող հզոր ժողովրդի ծավալապաշտական շահը տվյալ պահին ինչ է ուզում պարտադրել աշխարհին:

Հզոր է՝ կարող է: Ահա միակ իրավունքը, որ ամեն անգամ ներկվում է մի որևէ նոր գույնով: Իրականում հրապարակ նետված «նոր աշխարհակարգի» մասին ամպագոռգոռ կարգախոսները աստառը շուռ տված լենինիզմն է, որը կոչված է քողարկելու համաշխարհային տիրապետության ձգտող ամերիկյան նկրտումները: Վերջին հաշվով ո՞րն է բոլշևիզմի և ԱՄՆ–ի առաջ քաշած «նոր աշխարհակարգի» տարբերությունը: Բոլշևիկները սվիններով էին իրականացնում իրենց գաղափարները՝ լաթի կտորի վրա ժողովուրդներին դեմ անելով ապագա երջանկության խոստումներ, իսկ «նոր աշխարհակարգի» ասպետները ոչնչացնող զրահատեխնիկայի հետևից քարշ են տալիս սննդամթերքի ու դեղորայքի բեռներ՝ տեղնուտեղը թմրեցնելու համար դիմադրող ուժերին:

Կրախի մատնվեց մարքսիզմ–լենինիզմը, վաղը նույն ճակատագիրը սպասում է ԱՄՆ–ից «ճառագող արևին», որքան էլ ԱՄՆ–ն իր հզորությամբ միջազգային ժանդարմի դեր կատարի երկրագնդի ցանկացած անկյունում: Պատմության հազարամյակների փորձը ցույց է տվել, որ հնարավոր չէ աշխարհին հագցնել «մի համընդհանուր կախարդիչ հանդերձ»: Հետևապես այն մոտեցումները, որ այսօր կիրառելի են Ամերիկայի կամ Եվրոպայի համար, քննություն չեն բռնում Ասիայում կամ Աֆրիկայում: Եվ այն անտեսումն ու արհամարհանքը, որ այսօր ցուցաբերում են պատմության նկատմամբ, փոխարենը բացարձականացնում առկա պետական սահմանների անձեռնմխելիությունը, որ, կիրառելի լինելով Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի համար, չպետք է տարածվեն բոլոր այն ժողովուրդների վրա, որոնք թոթափում են գաղութատիրության լուծը՝ ստեղծելով կամ վերականգնելով իրենց հայրենիք–պետությունը: Այս դեպքում պետք է հաշվի առնել ամեն ինչ՝ և՛ պատմությունը, և՛ ժամանակակից ռեալ իրավիճակը, և՛ հարևան ու հակամարտող կողմերի փոխադարձ հարաբերությունների ու միմյանց նկատմամբ մշակված վարվելակերպի դարավոր նստվածքները: Պետք է հաշվի առնել ճնշված ու գաղութացված ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարի մասին ստեղծված միջազգային իրավական նորմերը, որոնք շատ ավելի առաջնային են, քան «բաժանիր, որ տիրես» կայսերապետական ելակետով կամայականորեն գծված ինչ–որ սահմաններ:

Երբ այս ելակետից մոտենում ենք «Ադրբեջանի Հանրապետությանը», տեսնում ենք, որ գործ ունենք անունից սկսած կեղծ, հակապատմական ու հակաօրինական մի պետական կառուցվածքի հետ, ուր իսպառ անտեսվել է ու ոտնահարվել մի շարք ժողովուրդների ազգային շահեր, ժողովուրդներ, որոնք իրենց հազարամյակների հայրենիքում դարձել են ոչ վաղ անցյալում երկրատարածք թափանցած և դեռևս քոչվորական կյանքը չմոռացած եկվորների ագրեսիվ քաղաքականության զոհեր:

Ստալինի հանձնարարությամբ և հրեաների ձեռքով այդ եկամուտ ժողովրդի համար թխվեց հազարամյակների խորքը թափանցող մի

պատմություն, որում ամեն ինչ կա, բացի այդ ժողովրդի պատմությունից: Իրականում ադրբեջանցի կոչվող ժողովրդի պատմությունը Արևելյան Անդրկովկասում սկսվում է Նադիր Շահի օրերից: Բոլոր վերագրումներն այդ թխված պատմության մեջ հոդս են ցնդում, երբ մոտենում ենք պատմական իրողություններին, երբ առնչվում ենք սկզբնաղբյուրներին:

Նորաթուխ Ադրբեջանի շովինիստական կառավարությունը անարգել իրենցը հռչակեց մահմեդական այն ամբողջ քաղաքակրթությունը, որ այդ տարածքում ստեղծել էին պարսիկներն ու տեղաբնիկ ժողովուրդները, այդ ժողովուրդներին կրոնական հիմքի վրա արդեն ծուլված էին համարում և հետևողականորեն, մարդահամարից մարդահամար, քայլ առ քայլ փոքրացնում էին նրանց թվաքանակը՝ ընդհուպ մինչև ուրանալով որոշ ժողովուրդների գոյության փաստն անգամ: Նրանց կոկորդում մնացած ոսկորը հայերն էին, որոնց հարցը նս պետք է լուծեին և «լուծում» էին՝ փորձելով սեփականել անգամ հայոց խաչքարերը: Չնայած այդ համառ ու հետևողական ջանքերին՝ այսօր Ադրբեջանի Հանրապետություն կոչվածը դեռևս մնում է մի երկրատարածք, որը դարերի հոլովույթով ձևավորվել է որպես ընդհանուր տուն ինչպես տեղաբնիկ, այնպես էլ եկվոր ժողովուրդների համար: Եվ այնտեղ ծագող ազգային–ազատագրական շարժումներին ինչ–որ լուծում տալու համար պետք է ելակետ ունենալ ընդհանուր տան գաղափարը, որը հավասարապես պատկանում է տան բոլոր անդամներին, և այդ ընդհանուր տնից իրենց անկողոպտելի բաժինն ունեն ինչպես ադրբեջանցիները, այնպես էլ լեզգիներն ու թալիշները, թաթերն ու հայերը, մյուսները: Ահա թե ինչու ղարաբաղյան արյունոտ կնճիռը պետք է լուծվի ընդհանուր տան բաժանման հիմքի վրա՝ անպայմանորեն հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 300 տարի դանդաղ գործողությամբ ցեղասպանություն է կիրառվել հայերի նկատմամբ և դրա համար, միջազգային առկա օրենքների համաձայն, հայերը պետք է հատուցում ստանան՝ սկսած Բաքվի նավթի իրենց մասնաբաժնից:

Արդեն տասնամյա իրողություն է, որ Ղարաբաղը հիմնովին լուծել է իր հիմնահարցը՝ անհավասար ու անձնազոհ պայքարում նվաճելով իր ազատությունն ու անկախությունը և վերակերտում է սեփական անկախ պետականությունը: Անկախ Ղարաբաղի պետականությունն արդեն հասել է ինքնահաստատման այնպիսի հանգրվանի, որ այլևս չի կարելի նրա գլխին սարքել Բեռլինի վեհաժողով, Սևր ու Լոզան, Բրեստ ու Ղարս...

Բայց քանի որ այդ ամենն իրականացել է պատերազմի արդյունքում, իսկ բոլոր պատերազմները վերջանում են հաշտությամբ,

հետևապես հաշտությունն էլ պետք է ձեռք բերվի փոխզիջումների ճանապարհով: Փոխզիջումների հարցում պետք է ելակետ ունենալ երկու անշրջանցելի իրողություն:

1. Ադրբեջան կեղծանունով Արևելյան Անդրկովկասի համապատասխան տարածքները հայ ժողովրդի բնական հայրենիքն է նախապատմական ժամանակներից: Հազարամյակներ շարունակ ինչպիսի բռնազավթումների էլ ենթարկվել է այն, սկսած Ալեքսանդր Մակեդոնացուց, մինչև 18–րդ դարի սկիզբը, էթնիկապես մնացել է հայ ժողովրդի հայրենիք՝ պահպանելով 87 % հայ ազգաբնակչություն:

2. 18–րդ դարի 20–ական թվականներից ծավալված հայերի ազգային–ազատագրական պայքարը պատճառ է դարձել հայերի 300–ամյա շարունակվող ցեղասպանության: Երկրատարածքով շահագրգիռ հզոր պետությունները, իրենց քաղաքական շահախնդրություններից ելնելով, տնական հետևողականությամբ երկրատարածք են բերել թուրքախոս քոչվորական ցեղեր՝ նրանց վայրենի ուժը գործադրելու հայերի ազատագրական ձգտումները ճզմված պահելու համար:

Չնայած այդ հետևողական, հայերի համար ողբերգական քաղաքականությանը՝ Արևելյան Անդրկովկասը մինչև 1988 թ. հայրենիք էր մնացել նաև հայերի համար՝ սկսած Կովկասյան լեռների փեշերից մինչև Արաքս, Բաքվից մինչև Ղազախ, այս դեպքում արդեն որպես ընդհանուր հայրենիք՝ թուրքական տարրի թվական գերակշռությամբ: Միայն գորբաչովյան վարչակարգի հրահրած հակամարտության արդյունքում էր, որ նույն գորբաչովյան զորքերի ակտիվ դերակատարմամբ ու «Կոլցո» օպերացիաներով հայ ժողովուրդը զրկվեց հազարամյակների իր հայրենական տարածքներից՝ կարողանալով փրկել միայն մի փոքրիկ բեկոր: Ի դեպ, Պարսկաստանը Ռուսաստանին է հանձնել 14 հազար քառակուսի կմ տարածք ունեցող մի Ղարաբաղ, որը բոլշևիկները դարձրին 4,4 հազար:

Հետևապես, փոխադարձ զիջումների սեղանին հարցը պետք է դնել հետևյալ ձևով.

Անդրկովկասով շահագրգիռ տերությունների երեքհարյուրամյա հակամարտության արդյունքում հայ հայրենիքի հաշվին ադրբեջանցիների համար նոր հայրենիք է ստեղծվել: Երբ ազերբուրքերը դեռևս ոչխար էին արածեցնում, հայերը իրենց երեքհազարամյա հնությունից վերածնված Բաքուն հարյուրերեսնամյա մի ժամանակահատվածում դարձրին համաշխարհային հնչեղության քաղաք, որը մնում է նրանց: Դրան հակակշիռ, կշեռքի մյուս նժարին է դրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր ներկա դրությամբ, և Բաքուն ճանաչում է նրա անկախությունը:

երկրամասի մյուս տարածքներից ԼՂՀ–ի նժարին են դրվում այն շրջանները միայն, որոնք վերջին երեքհարյուրամյակում թուրքերը զենքով նվաճել չեն կարողացել, և բռնազավթվել են միայն գորբաչովյան զորքերի դերակատարմամբ: Խոսքը օսմանյան թուրքերին է վերաբերում, որոնք և՛ 1724, և՛ 1918 թթ. չկարողացան նվաճել այդ շրջանները:

Ղարաբաղն անկախ Ադրբեջանի մաս չի կազմել ո՛չ 1918–20 թթ. և ո՛չ էլ 1991 թ. հետո: Այն բոլշևիկյան ռազմակալմամբ է միայն բռնակցվել Ադրբեջանին: Ադրբեջանը հրաժարվել է խորհրդային կարգերի իրավահաջորդը լինելուց և Ղարաբաղի հետ միաժամանակ, իրար զուգահեռ հռչակել են իրենց անկախությունը:

Պատմաքաղաքական 300–ամյա վայրիվերումների տրամաբանությունը թելադրում է փոխզիջման հետևյալ տարբերակը.

Գորբաչովյան վարչակարգի կազմակերպած ցեղասպանությունը վերջնականապես լուծել է հայության հայրենիքի նախկին 4 մարզերի՝ Բաքվի, Շամախու, Շաքիի ու Գանձակի հարցը հօգուտ ազերթուրքերի:

Դիմակայելով ագրեսիային, չհաշտվելով ոչնչացման մտքի հետ՝ Ղարաբաղը ոչ միայն հաստատեց իր գոյության իրավունքը, այլև իրենից բռնազավթվածներից որոշ մաս էլ ետ վերցրեց՝ չնայած նրա հինավուրց մայրաքաղաք Պարտավը մնաց գերության մեջ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրք–բոլշևիկյան կամայականությամբ է երկատվել միասնական Լեռնային Ղարաբաղը, որ 1988–1991 թթ. հակամարտության ժամանակ մի շարք շրջաններ բռնազավթվեցին խորհրդային պետական զորքերի «Կոլցո» օպերացիայով՝ իրականացնելով կրկնաշերտ ագրեսիա՝ ցեղասպանություն և ուրիշի տարածքը մի ուրիշին նվիրելու գործողություն, ԼՂՀ–ին են վերադարձվում նրա օրգանական մաս կազմող Շամխորի, Դաշքեսանի, Գետաշենի, Շահումյանի, ինչպես նաև նախկին ԼՂԻՄ–ի տարածքում հայերի հիմնած, բայց կամայականորեն մարզից պոկված Ժդանովի շրջանները:

Որպես ՓՈԽՋԻՋՈՒՄ, Ղարաբաղը չի դառնում ո՛չ Ադրբեջանի, ո՛չ էլ Հայաստանի մաս: Ղարաբաղը հաստատել է ինքնուրույն պետություն լինելու իրավունքը, պատմության մեջ երրորդ անգամ վերականգնել կորցրած պետականությունը և այդ կարգավիճակով մտնում է անկախ պետությունների ընտանիքը:

Այդ են պահանջում արդարությունն ու իրավունքը:

Ո՞ՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ ԱՅՍ ԸՆԹԱՑՔՈՎ, ՊԱՐՈՆՆԵ՛Ր

I

Ոչ լրիվ մի հարյուրամյակի ընթացքում մեր ժողովուրդն իր մեջ ուժ գտավ կատարելու երկու աննախադեպ ու մեծագույն սխրագործություն: Առաջինը հազարամյա կորստից հետո ազգային պետականության վերականգնումն էր: Թող որ երբեմնի ծովից ծով հայրենիքի մի գավառի կեսի տարածքով միայն, բայց պատմական մի այնպիսի ճակատագրական պահի, երբ միջազգային գիշատիչ ուժերը հայ ժողովրդի հարցն արդեն լուծված էին համարում՝ նրան վերջնականապես հայրենազրկելու ճանապարհով: Մի կողմ թողնելով անվերադարձ պատմություն դարձած, բայց նրանից դասեր քաղելու առումով կենսական այն հարցերը, թե ինչ ճակատագիր ունեցավ մեր ժողովրդի առաջին աննախադեպ սխրանքը, թե ինչ ծանրածանր կորուստներ ու անուրանալի նվաճումներ ունեցանք, արձանագրենք միայն, որ Ղարաբաղյան շարժման սկզբում ունեինք մի Հայաստան, որը արդյունաբերական զարգացման մակարդակով եվրոպական պետությունների ցանկում զբաղեցնում էր 8–րդ տեղը, 132 երկրի մատակարարում իր թողարկած արտադրանքը: Այդպիսի Հայաստան ժառանգեցինք փլուզվող ԽՍՀՄ–ից:

Երկրորդ մեծ սխրանքը Ղարաբաղյան շարժումն էր, որի ելման կետում հայ ժողովուրդը համազգային ընդգրկումով ապրեց իր աստեղային ժամը: Ոչ մի դարաշրջանում հայ ժողովուրդը չի ապրել համազգային միասնության ու միակամության այն գերագույն զգացումը, որ սկսվեց 1988 թ. փետրվարյան դեպքերով, մինչև այն պահը, երբ ծերբակալման ծխածածկույթով քողարկված, իրականում արտաքին ուժերի գործակալությունների հատուկ կենտրոնում վերապատրաստման դասընթացներ անցած, որպես քաղաքականապես հալածվածների այլ պետությունների պատվավոր քաղաքացիներ հռչակված ՀՀՇ–ական հանցախումբը միամիտ ժողովրդի ուսերի վրայով բարձրացավ իշխանության գլուխ, և առաջին քայլն այն եղավ, որ սպանել տվեցին երկու պատգամավորի, որպեսզի հանցագործությունը ջարդեն ՀԱԲ–ի գլխին՝ հիմք ունենալով պետական տեռորի ու մարդասպանության քաղաքականությանը:

Համազգային այդ վերելքի, միակամության ու վճռականության շնորհիվ ու իներցիայով էր, որ ոչ միայն կարողացանք դիմագրավել գորբաչովյան հայակեր քաղաքականությանը, ոչ միայն կարողացանք դաս տալ չվաստակած հաղթանակներով լկտիացած ազերբուրքական ագրեսորներին, այլև հաղթեցինք նաև իշխանությամբ օժտված ՀՀՇ–ական հանցախմբին, որը պատերազմի ողջ ընթացքում կանգնած է եղել պայքարի ազերբուրքական դիրքերում:

Բայց, դժբախտաբար, մենք հաղթեցինք միայն պատերազմի դաշտում: Մեզ պարտադրված պատերազմից, նույնչափ պարտադրված զինադադարից հետո ազգովի անզոր գտնվեցինք երկրի սոցիալ–տնտեսական, բարոյահոգեբանական փլուզման դեմն առնել: Այո, ազգովի անզոր գտնվեցինք աշխարհը կլանել ձգտող հզոր տերությունների քաղաքական խարդավանքների հանդիման և երեխայական միամտությամբ հանդուրժեցինք, որ դրածո ղեկավարները կործանեն մեր հզոր տնտեսությունը, երկիրը կանգնեցնեն անդունդի եզրին, հարյուրհազարավոր զանգվածների դարձնեն անհայրենիք թափառականներ:

Դժբախտաբար, պետական մտածողության հազարամյա կորուստը, պարտադրված 70–ամյա պատմաքաղաքական անգրագիտացումը (գումարած մեր ստրկամտության հասնող օտարամոլությունը) արտաքին ուժերի հետևողական, նպատակամղված դերակատարմամբ երկրում ստեղծեց քաղաքական մի վիճակ, որը հայրենիքի հետագա գոյատևման առումով շատ ավելի վտանգավոր է, քան մեզ պարտադրված պատերազմի օրերին արտաքին վտանգն էր: Քաղաքական կուսակցությունների պիտակով հանդես եկող 100–ից ավելի խմբավորումները, իշխանավոր, թե ընդդիմադիր, երկրի թալանով ուռճացած՝ տասնամյա հակազգային, հակաժողովրդական քաղաքականությամբ ու գզվռտոցներով երկիրը կանգնեցրել են անդունդի եզրին, ստեղծել մի վիճակ, որ ժողովուրդը, հող հայրենին թողած, ստիպված ազատ ու անկախ հայրենիքից փախչում է՝ օտար ափերում իր գոյությունը քարշ տալու համար: Քաղաքական կոչվող այդ ուժերը բոլոր առումներով երկիրը դուրս են բերել վաճառքի:

Քաղաքակրթության ողջ պատմության ընթացքում ԻՐԱՎՈՒՆՔԸ միշտ էլ պայմանավորված է եղել ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՒԹՅԱՄԲ: Իշխանության հասնելով՝ ՀՀՇ–ական ոճրագործները երբեմնի հզոր տնտեսությունը թալանեցին, արտասահմանյան բանկերում միլիարդներ պահեստավորեցին, կործանեցին տնտեսական կյանքը՝ թողնելով միայն առևտրով զբաղվելու ճեղքը: Զուգահեռաբար սկիզբ դրեցին երկրի

ռազմավարական նշանակության տնտեսական օբյեկտների վաճառքին, որն անկասելի թափով առաջ է գնում: Որևէ մեկնաբանության տե՞ղ է մնում, երբ բաշխիչ ցանցերի վաճառքն արդարացնելու համար նույն համակարգի նախարարը հայտարարում է, թե վաճառում են, որովհետև տարեկան 50 մլն դոլարի էներգիա է գողացվում: Կարծես գողն իրենք չեն, այլ մենք, կամ ազգովի այնքան ենք անճարացել, որ ուրիշը պետք է գա ու մեր գողի ձեռքը բռնի:

Աններելի սխալ կլինի նման մեկնաբանությունը բացատրել իշխանության հասածների մտքի տափակությամբ: Դա միջազգային հզոր կառույցների պլանավորած քաղաքականության դրսևորումն է: Այդ կառույցներն արդեն հասցրել են ամեն ինչ վերցնել իրենց ձեռքը, մեզ «լուսավորում» են, «քաղաքակրթում», օգնության դրոշով պարտքեր դիզում վզներիս, պայմանով, սակայն, որ երկրի ողջ ունեցվածքը հանձնենք իրենց ողորմածությանը, որպեսզի մեր կենսապահովման համար պայմաններ «ստեղծեն»: Նման ընթացքով՝ երկրի ունեցվածքի վաճառքը շարունակելու պարագայում, եթե նույնիսկ վաղը Հայաստան անունը մնա մեր հայրենիքի այս փոքրիկ հատվածի վրա, դա լինելու է մի Հայաստան, ուր հայը շատ ավելի իրավազուրկ ու ստրկական վիճակում է հայտնվելու, քան այսօր մեր ազգի ճնշող մեծամասնության վիճակն է աշխարհի բոլոր հորիզոնականներում: Էլ ի՞նչ հայրենիքի մասին կարող է խոսք լինել, եթե նրա իրական սեփականատերն օտարն է լինելու:

Ոչ պակաս տագնապալի է վիճակը հայրենիքի տարածքների հարցում:

Ոչ ոք չի կարող մոռանալ, թե վերակառուցման խաբկանքով հրապարակ դուրս եկած մեր ժողովրդին ինչպես էին քարեքար գցում աշխարհը կլանել ձգտող հզոր տերությունները: Մի կողմից աղ էին լցնում մեր չսպիացող ազգային վերքերին, բոլոր մակարդակներով ազդարարում ղարաբաղյան պահանջատիրության արդարացիությունը, Ղարաբաղյան շարժման բարձրացրած ալիքին վերագրում Բեռլինյան պատի փլուզումը, մեզ համար Եվրոպոլիս «կառուցում», այն էլ՝ ոչ ավել, ոչ պակաս, Նախիջևանի սահմանագլխին, իսկ մյուս կողմից՝ ոչ միայն չնկատելուն էին տալիս հայերի զանգվածային ցեղասպանությունը Ադրբեջանի ողջ տարածքով մեկ, ոչ միայն իրենց «չեզոքությամբ» ավելի էին բորբոքում մեր հակառակորդի վայրենի կրքերը, այլև որոշակի հետևողականությամբ խաղարկում էին, այսպես կոչված, Գոբլի ծրագիրը: Իսկ դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Թուրքիայի պանթուրանական ծրագրի ամերիկանացված տարբերակ:

Դեռևս 1918 թ. Բաթումի բանակցությունների օրերին թուրքական զորահրամանատար Վեհիբ փաշան է մանրել այդ քաղաքականության էությունը: Դիմելով Խատիսյանին՝ նա ասել է. «Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային արևմուտքից քշում է արևելք: Մենք պետք է ծավալվենք դեպի արևելք: Այնտեղ է մեր արյունը, մեր կրոնը և մեր լեզուն: Եվ դա տարերային ձգողություն է: Մենք պետք է ճամփա ունենանք դեպի այնտեղ: Եվ դուք՝ հայերդ, կանգնած եք մեր այդ ճանապարհի վրա: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճանապարհ տաք: Ահա թե որտեղ է մեր հիմնական վեճը»:

Պանթուրանական այս ծրագիրը 99 տոկոսով իրականացավ Լենին–Աթաթուրք գործարքով, որի հետևանքով նախկին Ռուսահայաստանը բաժան–բաժան արվեց Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի միջև՝ հանդուրժելով մի բզկտված ու անկլավային Հայաստանի գոյություն, այն էլ ոչ անհայտ բոլշևիկ Ռադեկի ձևակերպմամբ՝ ժամանակավոր գոյություն: «Ռադեկն ասում է, որ մինչև անգլիացիների ոտնձգություններից ազատվելն անհրաժեշտ է ժամանակավորապես պահել Հայաստանը: ... Մանավանդ որ նույն Ռադեկն ասում է. «Եթե դուք ցանկություն ունեք լուծել այդ Հայկական հարցը, մենք նույնպես կօժանդակենք ձեզ այդ խնդրում»,– վկայում է Ջեմալ փաշան:

Լենին–Աթաթուրք գործարքը 1 տոկոսով ծախողվեց շնորհիվ Զանգեզուրի գյուղացիության հերոսական սխրանքի: Զանգեզուրի համարյա անզեն գյուղացիությունը, փառապանծ Նժդեհի գլխավորությամբ, պարտիզանական հնարամտությամբ կարմիր զորագնդերից զենք բռնագրավելով ու նրանց դեմ գործադրելով, կարողացավ թուրք–բոլշևիկյան զավթիչներից փրկել հայրենիքի մի փոքրիկ բեկոր՝ 42 կմ երկարություն ունեցող մի հատված, որով և խափանվեց Հայաստանը լիակատար անկլավ դարձնելու թուրք–բոլշևիկյան ծրագիրը:

Ահա այդ մեկ տոկոսի հարցը ևս լուծելուն է ուղղված Գոբլի ծրագիրը, որով այս անգամ արդեն ԱՄՆ–ն է փորձում սիրաշահել իր ռազմավարական դաշնակից Թուրքիային:

Իսկ ինչո՞վ են զբաղված մեր պետական այրերը և ոչ պակաս հավակնոտ կուսակցություն կոչվածները: Հավատարիմ իր զավթողական քաղաքականությանը՝ Թուրքիան ռազմական բազա է կառուցում Սադախլվում: Կարծես քիչ է մի քանի հարյուր կմ սահմանը Հայաստանի հարավ–արևմուտքից թուրքական վաղվա ագրեսիայի համար, հյուսիսային սահմանն էլ են հենակետ դարձնում: Իսկ մերոնք, իշխանավոր թե ընդդիմադիր, համերաշխ հարազատությամբ չնկատելու են տալիս այդ,

փոխանակ համաշխարհային աղմուկ բարձրացնելու այդ սպառնալիքի դեմ, սկզբունքորեն պատասխան պահանջելու, թե ում դեմ է կառուցվում Սադախլվի ռազմական բազան: Փոխանակ դրա մերձավոր հայաթափվող շրջաններում տնտեսական միջոցառումներով մարդկային զանգված ապահովելու, որպեսզի վաղվա ագրեսիայի դեպքում հայրենիքը պաշտպանող ունենանք, սփյուռքի մեր հայրենակիցների բազմաբնույթ օգնությունը 14 տարի է իրենց դանայան կարասների կեր են դարձնում կամ եկեղեցաշինության հիվանդություն բուժում:

Լրատվության մատչելի բոլոր միջոցները ծանրաբեռնված են միայն մի գերխնդրով, հայրենիքի այս կամ այն հատվածը օտարին տալու–չտալու ձևերն ու չափերը ճշտելով, բայց ոչ պաշտպանությամբ: Զբաղված են միայն ժողովրդին թևաթափ անող պարտվողական տրամադրությունների սփռմամբ: Վերջին բացահայտումները շատ բան են ասում իրենց մասին: Նրանց համար չկա և չի էլ լինելու երեքհազարամյա հայոց Բաքվի կորստի ցավը, նրանք չգիտեն և չեն էլ ուզում իմանալ, որ շահագրգիռ տերությունների հրահրած երեքհարյուրամյա շարունակվող ցեղասպանության ճանապարհով Արևելյան Հայաստանից վերակերտեցին Ադրբեջան, որ չնայած այդ ողբերգական իրողությանը, մինչև 1988 թ. ազերթուրքերին հավասար հայի հայրենիք է եղել նաև Շաքին ու Շամախին, Սումգայիթն ու Մինգեչաուրը, Բաքուն ու Գանձակը: Նրանք չեն ուզում տեսնել, որ Արցախի ուղիղ կեսը դեռևս բռնազավթված է ազերթուրքերի համար, որ Շամխորի ու Քարհատի, Գետաշենի ու Շահումյանի շրջանները հայակեր Գորբաչովի վերջին նվերն էին ազերթուրքերին՝ «Կոլցո» օպերացիաներով իրականացված: Նույնիսկ ազատագրված տարածքները նրանց աչքին օկուպացված տարածքներ են երևում՝ ենթակա վերադարձման:

Փոխանակ բանակցային գործընթացներում մեր բաժին Բաքվի ու Շամախու, Շաքիի ու Մինգեչաուրի, Գանձակի ու Սումգայիթի դիմաց փոխհատուցում պահանջելու (իսկ դա Արցախի բռնազավթված շրջանների վերադարձման պահանջն է), ազգի «փրկիչները» 10 տարի շահարկում են այսպես կոչված Լաչինի միջանցքի ու Մեղրու տարածքի փոխանակման հարցը, զբաղվում փուլային ու փաթեթային լարախաղացությամբ: Չգիտենք՝ այդ ո՞վ պետք է հանդգնի Մեղրու վրա դրած նժդեհյան տաբուն ոտնատակ տալ, կենդանի օրգանիզմի մի մասը փոխանակել մյուսով՝ Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապող այդ վերջին ու միակ հատվածն էլ տալով թուրքերին:

Չհաշվելով անգամ քաղաքական–պետական, դիվանագիտական

աշխարհի մարդկանց՝ ո՞ւմ հայտնի չէ, թե ինչ գործարքի գոհ է հայոց Նախիջևանը, ողբերգական ճակատագրի տեր այն երկրամասը, որտեղից հայ ժողովուրդը հազարամյակներ շարունակ իր հոգու ջերմությունն ու լույսն է տվել աշխարհին: Իսկ այսօր այն ոչ միայն ազերբուրքական են դարձրել, այլև նոր հնարներով ու ձևերով շարունակում են մեզ պարտադրել. «Մի կողմ քաշվեցեք մեր ճանապարհից, Նախիջևանն ուղիղ գծով պետք է կապվի Բաքվի հետ»:

Նախ՝ Նախիջևանը կապ ունի Բաքվի հետ Ջուլֆա դարձրած հայոց Ջուղայի կամրջով ու Արաքսի աջափնյակով: Այդ կապը մոտեցնելու համար Ղարաբաղի հայության կառուցած և մեր զավակների արյան գնով երկու անգամ ազատագրված Հորադիզի կամուրջն ու ճանապարհը ՀՀՇ–ական հայրենադավները երկու անգամ էլ հանձնեցին ազերբուրքերին՝ ապացուցելով հարազատությունը նրանց հետ: Դժբախտաբար դեռևս չի ստեղծվել հայոց Նյուրնբերգը, որ այդ գործարքի գլխավոր դերակատարները պատասխան տան իրենց արածի համար:

Ապա՝ անհրաժե՞շտ է ըստ ամենայնի գործող, տնտեսական լուրջ գործառնություններ ապահովող կապ: Նման կապ կարող է դառնալ Նախիջևան–Երևան–Ղազախ երկաթգիծը, պայմանով, սակայն, որ Հայաստանի համար էլ բացվում է Ղազախ–Բաքու–Դաղստան գիծը: Երկու կողմերի համար հավասար երկարություն ունեցող ճանապարհ՝ երկու կողմերի անվտանգության ապահովման հավասար պատասխանատվությամբ:

Հայրենիքի տնտեսության ու տարածքային վաճառքով ինչի՞ կարող ենք հասնել: Ո՞ւր ենք քշում այս ընթացքով: «Զարթե՛ք, վե՛ր ելեք, կենդանի՛ ուժեր...»

II

ԼՂՀ արտաքին գործերի նախարարության «Բանբերի» 2001 թ. հունվար–հունիս ամիսների համարից մի հերթական անգամ տեղեկանում ենք, որ Ադրբեջանի քարոզչական մեքենան շարունակում է իր հաղթարշավը՝ հայերիս Անդրկովկաս մտցնելով 19–րդ դարի սկզբից, որով և սկիզբ է դրվում խեղճ ու կրակ ազերբուրքերի բռնագաղթին ու ցեղասպանությանը: «Ադրբեջանցիների գենոցիդը իրագործվում է 19–րդ դարի սկզբից, այն ժամանակվանից, երբ Ռուսաստանի ու Իրանի միջև կնքվեց Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերը, երբ հայերին Իրանից ու Մերձավոր Արևելքի տարբեր երկրներից վերաբնակեցրին Ադրբեջանում, մասնավորապես Ղարաբաղում, Իրևանում և Նախիջևանում»,– ազդարարում է Ադրբեջանի Միլլի մեջլիսի նախագահ Ալեսկերովը 2001 թ. ապրիլի մեկին:

Շատ էլ լավ է անում Ալեսկերովը, հանում էլ է մեր բոլորիս աչքերը՝ վերից վար, քանի որ արժանապատվությունից ցածր ենք համարում նման «մանրուքներով» զբաղվելը: Մինչդեռ չենք ցանկանում հաշվի առնել, որ հանձինս ազերբուրքերի՝ գործ ունենք մի ժողովրդի հետ, որի առաջին քոչը Արաքսով անց է կացրել Նադիր Շահը 18–րդ դ. առաջին կեսին, իսկ վերջին քոչը Արաքսն անցել է 1954 թ., որ այդ ժողովրդի մասին 1959 թ. մարդահամարում դեռևս հստակ նշվել է, թե որ տոկոսն է արդեն անցել նստակեցության, որը մնացել քոչվոր: Դժբախտաբար, չնկատելու ենք տալիս այն իրողությունը, որ այդ ժողովրդի քաղաքական ղեկավարները մի հարյուրամյակում չորս անգամ «դիվանագիտորեն» փոխել են սեփական ժողովրդի անվանումը՝ կովկասյան թաթարներ, թուրքեր, ազերիներ, նորից՝ թուրքեր, չնայած այդ ժողովուրդը ինքն իրեն անվանում է մուսուլման: Մի հարյուրամյակում չորս անգամ «դիվանագիտորեն» փոխել են իրենց այբուբենը՝ արաբական, լատինական, ռուսական, նորից՝ լատինական: Խրախուսված Ստալինի հովանավորությամբ՝ թուրքամեթոդ ճկունությամբ՝ նրանք որդեգրեցին մի գաղափարախոսություն, որը նախադեպը չուներ քաղաքակրթության պատմության մեջ: Նրանք ոչ միայն հետևողականորեն իրենցը հռչակեցին մահմեդական այն ամբողջ քաղաքակրթությունը, որ գոյություն ունի Անդրկովկասում, այլև յամպոլսկիների, բունյաթովների և նմանների ձեռքով անարգել «դարձան» գոյություն չունեցած աղվան, ինչպես նաև երեք հազար տարի առաջ պատմությունից դուրս մնացած իրանական մանանի ցեղի ժառանգորդներ: Հիմա էլ աչքները չռած սպասում են, թե հնագիտությունն ուրիշ ի՞նչ հայտնություն կանի, որ տեր կանգնեն՝ գերազանցելու համար նույնիսկ շումերներին՝ Նոյ նահապետին իրենցը հռչակելու անհեթեթությունից հետո: Եվ քանի որ հանուն Բաքվի նավթի աշխարհը կլանել ձգտող հզոր ուժերին չի վնասում ազերբուրքերի պատմաքաղաքական այդ լարախաղացությունը, նրանք հանդուրժում են այն, փոխանակ լռեցնելու, ազերբուրքերն էլ կարծում են, թե իրենք այնքան են առաջադիմել, որ կարող են մարդկությանը խաղացնել իրենց մատների վրա: Ոգևորված այդ ամենով՝ Ալիևը «ճանապարհ է բացում» իրենց ապագա սերունդների համար՝ իրականության ենթագիտակցությունն ու սուտը դարձնելով պետական քաղաքականություն: «Եվ

հետագայում պետք է ստեղծել այնպիսի աշխատություններ, որոնք մշտապես, հերթական ձևով ապացուցեն, որ այն հողերը, որտեղ հիմա գտնվում է Հայաստանը, պատկանում են Ադրբեջանին: Մենք պիտի դա անենք: Մենք պիտի ճանապարհ բացենք մեր հետագա սերունդների համար»[1]:

Մեր քաղաքական մտքի «կորիֆեյների» մտքով անցնո՞ւմ է, որ ալիևյան ինքնավստահությունը սնունդ է առնում Բեռլինի վեհաժողովով բացված հայկական ողբերգությունից, որի շարունակման համար պայքարում է նա՝ շահարկելով Բաքվի նավթը:

Ազերթուրքերին պսակազերծելու միակ շահագրգիռ կողմը մենք ենք, որ պարտավոր ենք իրերն իրենց անունով կոչելու, վերականգնելու պատմական ճշմարտությունները, մանավանդ որ հարկադրում են այդ անելու: Բայց բավական էր, որ մի շահագրգիռ օտար պաշտոնյա հայտարարեր, թե պատմությունը հաշվի չենք առնում, որպեսզի բոլորս մի կողմ կանգնենք՝ ճանապարհ բացելով պատմության ազերթուրքական կողոպուտի առաջ: Կարծես թե ԼՂՀ արտգործնախարարությունը, թեկուզ բավական ուշացումով, փորձում է դրությունը շտկել մի «Հուշագրով»: Բայց ինչպե՞ս: Փոխանակ հարգարժան նախարարի «Ուղերձը» եզրափակեն մեր ճշմարտությանը պատշաճող մի արժանապատիվ պարբերությամբ հակառակորդին իր տեղը ցույց տալով՝ ուղերձին կցել են մի անգրագետ ու ստորաքարշ «Հուշագիր»:

Մի՞թե այդպիսի հուշագիրն է արժանի մեր ժողովրդի վերջին հերոսական մեծագործությունը, աննախադեպ այն փայլատակումը, որ զարմացրեց աշխարհին: Մեզ չի մտահոգում այն հանգամանքը, թե հասցեատերերը ինչպես ընդունեցին այդ «Հուշագիրը», մանավանդ որ այդ հասցեատերերը մեզնից տասնապատիկ լավ գիտեն, թե ինչն ինչոց է, և ընդամենը ներողամիտ քմծիծաղով պետք է թերթեին այն: Ցավալին այն է, որ նման տեղեկատվությամբ ոտնահարվում է բուն ճշմարտությունը, ազատագրվածը «դառնում» է օկուպացված՝ թևաթափ անելով կրակի դեմ մաքառող հանրությանը: Անդրադառնալով այդ հուշագրում տեղ գտած պատմական իրականության աղավաղումներին՝ գտնում ենք, որ պետք է հայ հանրությանը հասցնել իրական, պատմական ճշմարտությունը մեր հազարամյա մաքառումների մասին: Այն ոգորումների, որի արդյունքում բազում ծանրածանր կորուստների գնով հասել ենք այս հանգրվանին և մասնակից ենք լինելու դարերի երթին: Անդրադառնալով այդ աղաղակող անգիտությանը՝ մեր նպատակն է երկրի միակ քաղաքական ուժի՝ հայրենի հող ու քարի համար կռիվ տվող լայն զանգվածների պատմական հիշողությունն ամրապնդել նրա անցած ճանապարհի անհամեմատելի հերոսականությամբ:

«Անտիկ հեղինակների՝ Հերոդոտի (V դար, մ.թ.ա.), Ստրաբոնի (I դար, մ.թ.ա.) և ուրիշների վկայությամբ Հայաստանի հյուսիսարևելյան սահմանը եղել է Կուր գետը»,– այսպես են բացվում «Հուշագրի» առաջին խումբ «փաստերի» փաստարկումները: Բարեբախտաբար այստեղ ինքնապաշտպանության համար օգնության է կանչվում նաև բազմիցս չարչրկված Ստրաբոնը, այլապես Կուրի մասին տեղեկություն չունեցող, Աքեմենյան պետության 18–րդ սատրապությունում հայերի գոյությունը չիմացող Հերոդոտի երեսից կարող էինք խեղդվել Կուր գետում: Հերոդոտը ոչ միայն գաղափար չուներ Կուր գետի մասին, այլև Արաքս գետն էլ տեղադրում էր Միջին Ասիայի արևելյան սահմաններում, որտեղից սկիզբ է առնում նաև հնդկական Գանգես գետը: «Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը»[1]: Հազարամյակների պատմության համար միակ ու եզակի սկզբնաղբյուր ունենալով ազերթուրքական ակադեմիկոսների հակապատմությունը՝ «Հուշագրի» հեղինակները որտեղի՞ց իմանան, որ Ստրաբոնից հազարավոր տարիներ առաջ հայ ժողովուրդն իր բնական հայրենիքում, իր Արատտա պետականությամբ, հանդես էր գալիս որպես շումերների ախոյան, որ նրանից դարեր հետո Հայասան ճակատ էր տալիս Խեթական պետության հետ, որ երեք հազար տարի առաջ Վանի Արարատյան թագավորության տիրակալները, մի միասնական պետության մեջ համախմբելով հայկական ցեղերին, երկրի արևելյան սահմանը դարձրին Կասպից ծովը:

Ի՞նչ է կորցրել հայ ժողովուրդը Կուրի՝ այդ անանցանելի Չինական պարսպի ձախ ափին: Ի՞նչ անենք, որ պատմագիտության մեջ շահարկվող բուն Աղվանքի՝ ազերթուրքերի այդ «հինավուրց հայրենիքի» հնագույն տեղանուններն ու աշխարհագրական անունները հայերեն են՝ կազմված հայոց լեզվի բառակազմական օրենքներով՝ սկսած նրանց հնագույն մայրաքաղաք Կապաղակից: Թերևս հանդգնություն չհամարվի, եթե հիշենք որոշ անուններ: Կապ+աղ+ակ– զուգահեռը՝ փակ+աղ+ակ, մակաղել, հապաղել, նվաղել, սվաղել և այլն: Կախավան, Արջկան, Դուրկան, Մովկան, Ոստան, Քաղաբերդ, Քաղաղաշտ, Քաղաձոր, Մուխանց, Քանդակ, Դաշտակ, Գետառու, Կամբեճան, Բա-

[1] «Բակինսկի ռաբոչիյ», 11 փետրվարի, 1999 թ.:

[1] Հերոդոտ, Ե., 1986, էջ 83:

դասական, Վատնյան, Հաբանդ, Գարդման, Բագավան, Բագինք, Բագու, Գիշ և այլն:

Է՞, այս ամենն ի՞նչ կապ ունի հայ ժողովրդի ու նրա պատմության հետ: Չէ՞ որ Ստրաբոնից առաջ Աստված Նույնիսկ Ադամին չէր ստեղծել, էլ ո՞ւր մնաց հայերին: Եվ ահա Ստրաբոնի ձեռքով Կուրը պատնեշ դարձնելուց հետո մի ահագին ոստյունով հայտնվում ենք Պետրոս Մեծի արխիվներում՝ անգիտանալով, որ Ստրաբոնից հարյուրամյակներ անց, Հայոց միասնական պետականության վերացումից հետո, Հայոց Արևելից կողմանց հայերը մի քանի անգամ վերականգնել են իրենց կորցրած պետականությունը ոչ միայն Արցախում, այլև այսպես կոչված բուն Աղվանքում, որ այդ պետականության ինչ–ինչ հատկանիշներ, մելիքական ինքնավարության տեսքով, հարատևել են մինչև 19–րդ դար, մինչև որ ցարիզմը վերացրեց այն: Բայց քանի որ պատմության իրենց վարժապետները՝ ազերբուրք ակադեմիկոսները, այնպես են լղոզել պատմությունը, որ իրական պատմության հետք անգամ չի մնացել, մեր «քաղաքագետ» հեղինակները որտեղի՞ց իմանային, որ V դարի վերջերից ունենք Վաչագան Բարեպաշտի սահմանադրական միապետությունը, որ արաբական լուծը թոթափելուց հետո Համամ Արևելցին Բագրատունիներին զուգահեռ վերականգնեց Հայոց Արևելից կողմանց պետականությունը, որին հաջորդեցին Փառիսոսի, Կամբեջանի ու Դերբենտի գավառական թագավորությունները:

Պատմական իրականությանն անտեղյակ լինելու հետևանք է նաև ժամանակակից ազերբուրքերին Արևելյան Անդրկովկաս մտցնելը 11–րդ դարից:

«Իսկ թուրքական ցեղերը, որոնց մեջ է մտնում ժամանակակից ադրբեջանական էթնոսը, սկսել են մուտք գործել Անդրկովկաս մեր էրայի 11–13–րդ դարերում»,– շրխկացնում են մեր ամենիմաց քաղաքագետները՝ հրապարակում ցցելով «Ադրբեջանի պատմության» ակադեմիական հրատարակությունը: Գոնե այստեղ հասկանային այդ հրատարակության ուղղվածությունը, թերևս կողմնակիորեն, միջնորդավորված ձևով մոտենային պատմական ճշմարտությանը: Հանրահայտ է, որ միանգամայն այլ էր ազերբուրք պատմաբաններին տրված քաղաքական հանձնարարականը 30–50–ական թթ.: Նրանք պետք է ապացուցեին, որ ոչ մի առնչություն չունեն թուրքերի ու թուրքականության հետ: Դրա համար էլ հետևողականորեն «ապացուցել» են, որ դարեր շարունակ եղել են սելջուկ թուրքերի ու մոնղոլների, կարա– ու աղգոյունլուների զոհերը, որ Արևելքից եկած այդ բարբարոս ցեղերը դարեր շարունակ ճզմել,

պատուհասել են իրենց՝ մանի–աղվանների ժառանգորդ ադրբեջանցիներին, դարավոր տիրապետության արդյունքում պարտադրել անգամ, որ մոռանան իրենց երբեմնի ծոխ լեզուն ու դառնան թուրքախոս: Գոնե թերթեին 7–8–րդ դասարանցիների համար նրանց մոգոնած «Ադրբեջանի պատմություն» դասագիրքը: Ի՞նչ իմանային խեղճերը, որ 40 տարի հետո ստիպված պետք է լինեն հերքելու այդ ամենը՝ քաղաքական հակադիր հանձնարարություն կատարելու առաջադրանքով:

Ճիշտ է, 11–րդ դարից սկսած Անդրկովկաս են թափանցել թուրքալեզու բազմաթիվ ցեղեր, բայց բոլորն էլ եղել են քոչվոր անասնապահներ: Հերթական նվաճող ցեղը դուրս է քշել նախորդին՝ իր ոչխարների համար ապահովելով արոտավայրեր: Արոտավայրեր ձեռք բերելու թելադրանքով նրանք միմյանց նկատմամբ ավելի թշնամական ու անգիջում են եղել, քան տեղաբնակ նստակյաց ժողովուրդների նկատմամբ, որոնց հաճախ հովանավորում էին որպես իրենց կերակրողի: Ահա թե ինչու այդ ցեղերն իրենց հետևից չեն թողել էթնիկական կամ մշակութային որևէ հետք, նստվածք: Ցույց տվեք ժամանակակից Ադրբեջան կոչվող տարածքում սելջուկներից կամ մոնղոլներից, կարա– կամ աղգոյունլուներից մնացած որևէ տեղանուն, մշակույթի որևէ հետք, էթնիկական որևէ հատված: Չեք գտնի:

Ազերիները ոչ թե եկել, այլ ներմուծվել են Արևելյան Անդրկովկաս՝ պայմանավորված քաղաքական հանգամանքներով: Ռուսաստանի հարավային ծավալումը ոտքի հանեց մահմեդական աշխարհը: Դրա դեմ պատնեշ ստեղծելու միջոց Թուրքիան համարեց տեղաբնիկ քրիստոնեական զանգվածի ոչնչացումն ու կովկասյան հավատակից ցեղերի համախմբումը Ռուսաստանի դեմ, որն անշեղորեն շարունակվում է մինչև այսօր: 1724 թ. ռազմակալելով Անդրկովկասը՝ Թուրքիան կա՛մ մասսայաբար ոչնչացնում էր հայերին ռուսական կողմնորոշման պատճառով, կա՛մ բռնի մահմեդականացնում էր նրանց՝ իր համար հենարան ստեղծելու նպատակով: Իրանը որդեգրեց ավելի հեռահար քաղաքականություն: 1734 թ. թուրքերին քշելով Անդրկովկասից՝ Նադիր Շահը մի կողմից օգտագործեց Ղարաբաղի ու Զանգեզուրի զինական ուժերը թուրքերի դեմ, մյուս կողմից՝ Կուրի ձախափնյակից, Թբիլիսիից մինչև Կասպից ծով, 700 հազար քրիստոնյաների գերեվարեց Իրանի խորքերը՝ այդ տարածքները մահմեդականացնելու հեռանկարով: Շամախի քաղաքն այնպես ավերեց, որ այնտեղ այլևս բնակվող չլինի: Իսկ այդ քաղաքում միայն հայերը 100 հազարի էին հասնում: Միաժամանակ Իրանի խորքերից ու Իրաքից տեղափոխեցին ժամա-

նակակից ազերիների նախկին ցեղերի՝ քոչվորական վայրենի ուժը Ռուսաստանի առաջխաղացման դեմ օգտագործելու նպատակով: Հետագայում այդ նույն քաղաքականությունը որդեգրեց ցարիզմը, այս դեպքում արդեն այդ ուժը հայերի ազատագրական նկրտումների դեմ օգտագործելու հեռանկարով:

Հանրահայտ է, որ մինչև Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, հայ ազատագրական մտքի նշանակետը եղել է Ռուսաստանի օգնությամբ ու հովանավորությամբ կորցրած պետականության վերականգնման խնդիրը: Ցարիզմն իր կիսախոստումներով հայերիս պատրանքները վառ էր պահում՝ այն հասցնելով մինչև Ներսես Աշտարակեցի: Բայց ցարիզմը երբեք էլ չէր մտածում գրավյալ երկրներում նոր պետություններ վերականգնելու մասին: Նրան հարկավոր էր հպատակների գորշ մասսա՝ բացառելով ամեն մի ազգային գործոն: Երբ 1804 թ. ռուսական զորքը հասավ Գանձակ, Կուր–Արաքսի միջագետք բերված քոչվորները մի մարդու պես փախան Իրան: Ցարական կարգադրությամբ գեներալ Մադաթովը նրանց հետևից հասավ Մակու և համոզելով վերադարձրեց: Ավելին: 100 տարի իրենց ազատագրման, որ նույնն է, թե ռուսական շահերի համար պայքարած հայ մելիքները զանազան պատրվակներով աքսորվեցին Սիբիր, իսկ Ղարաբաղը ճանաչվեց երեկվա նվաճողի սեփականություն՝ հայերի բաժին թողնելով 10 և 13 տարեկան երկու երեխայի ազատումը տասնամյա գերությունից: Պատահակա՞ն է, որ ազերթուրքերի հիմնական ներհոսքը երկրատարածք տեղի ունեցավ 19–րդ դարի վերջին, երբ հայ ժողովուրդը դուրս էր եկել հերթական ազատագրական պայքարի, թեկուզ դեռ բարձրացնում էր Արևմտահայաստանի ազատագրման հարցը:

Անդրկովկասի հարյուրամյա տիրակալության ժամանակաընթացքում ցարիզմի քաղաքականության հիմնական առանցքը եղել է հայերին ճզմված պահելու խնդիրը՝ սկսած Ներսես Աշտարակեցուն դիվանագիտորեն աքսորելուց մինչև 1912 թ. աղմկալից դատավարությունը դաշնակցության դեմ: Եվ օգտագործվել են պետական մեխանիզմի բոլոր միջոցներն անխտիր:

Հանրահայտ բանաստեղծ Ռափայել Պատկանյանը հրաժարվեց իր ազգանվանը «ով» ավելացնելուց: Երրորդ բաժանմունքը անմիջապես, նրա բանաստեղծական մի արտահայտությունը շահարկելով, մոգոնեց «Մանուկ Հայաստան» գաղտնի կազմակերպության գոյություն, որն իբր թե ձգտում է Հայաստանը անջատել Ռուսաստանից: Ցարական կառավարությունը մասնագետներ է գործուղել Ալժիր, որ հետազոտեն, պարզեն, թե ինչպես է Ֆրանսիան արգելակում տեղական ժողովուրդների մտավոր–կուլտուրական զարգացումը, որ նույնը կիրառեն մեր նկատմամբ: Բայց քանի որ դիմադրության հանդիպեցին, հաջորդեց հայոց դպրոցների փակումը:

Դրան հակակշիռ, ցարիզմը ամեն կերպ խրախուսում, պայմաններ էր ստեղծում, որ ազերիները մասսայաբար ներթափանցեն Անդրկովկաս: Հիշենք միայն 1846 թ. ցարական հրովարտակը, որով Արևելյան Անդրկովկասում կալվածքի տեր կարող է դառնալ միայն մուսուլմանական բարձր դասը, որի դիմաց «միշտ պատրաստ պիտի լինեն մեր քաջարի ռազմիկների շարքերն անցնելու և նախանձախնդրությամբ ու եռանդագին կատարելու այդ դասի վրա դրվելիք պարտականությունները»[1]: Հանրահայտ է, որ այդ դասը «նախանձախնդրությամբ ու եռանդագին» իր պարտականությունները կատարեց 1905–1906 թթ.:

Քաղաքական այս «մանրուքներից» անցում կատարելով Յուդենիչի հայտնի հեռագրին՝ հիշենք, որ գեներալը պահանջում էր ցարից հայ գաղթականներին տանել Ռուսաստանի խորքերը, որպեսզի Ալաշկերտի հովիտը դառնա կազակական երկրամաս: Դրանից մի քայլ է մնում միայն՝ անցնելու համար Լենին–Աթաթուրք հայակեր քաղաքականությանը: Բայց քանի որ անտեղյակությունը, պատմական իրականության աղաղակող լղոզումը ավելի խայտառակ դրսևորում է ստացել «Հուշագրի» երկրորդ պատասխանում, այն կներկայացնենք առանձին:

III

Ղարաբաղա–ադրբեջանական հակամարտությունը հայ–թուրքական հակամարտության մի օղակն է միայն՝ պանթուրքիզմի քաղաքական նկրտումներով: Նրա էությունը անհասկանալի կմնա, եթե այն առանձնացնենք ընդհանուր շղթայից, դիտարկենք մեկուսի: Ներկա հակամարտությունն ուղղակի շարունակությունն է դարասկզբի Հայոց ցեղասպանության, որը «մեծ եղբոր» գլխավորությամբ իրականացրել են օրերի ու ամիսների հաջորդականությամբ: Տարբերությունն այն է միայն, որ այժմ սկսել են Արևելքից, իսկ Արևմուտքը սպասում է հարմար պահի: Բայց ազերթուրքերը ամեն ինչ ներկայացնում են գլխիվայր՝ չդավաճանելով իրենց էությանը: Քանի որ ազերթուրքերի ամենածանր մե-

[1] Տես Խ. Ավդալբեգյան, նշված աշխատությունը, Ե., 1959, էջ 66–67:

դադրանքը երկրորդ «վերսիան» է, նրա պատասխանը՝ ամենառդորմելին, ստիպված դիմում ենք տարրական ճշմարտությունների՝ սահմանափակվելով մի աղբյուրով միայն, որ գոնե այդ չափով իրազեկվի հանրությունը: Եվ քանի որ բարեխղճությունը պահանջում է արժանին մատուցել սկզբնաղբյուրի հեղինակին, ավելացնում ենք ենթավերնագիր՝

ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂՎԱԾՔ ՀՐ. ՍԻՄՈՆՅԱՆԻ ԳՐՔԻՑ

19–րդ դարի 60–ական թվականներին ճնշված ժողովուրդների ազգային–ազատագրական պայքարի և եվրոպական միջամտության հետևանքով փլուզում ապրող թուրքական կայսրությունը փրկելու համար ձևավորվեցին մի շարք ուսմունքներ՝ օսմանիզմ, պանիսլամիզմ, թուրքիզմ, պանթուրքիզմ: Մեկը մյուսից ռեակցիոն, ծայրահեղ նացիոնալիստական ու ռասիստական այդ ուսմունքների մեջ վերջնական հաղթանակը վերապահված էր պանթուրքիզմին, որը տեսական հիմնավորում ստացավ թուրքալեզու մտավորականության ինտերնացիոնալ ջանքերի շնորհիվ: Դարասկզբին արդեն պանթուրքիզմի գաղափարական առաջնորդները Կազանից, Ղրիմից, Բաքվից և այլ տեղերից անցել էին Ստամբուլ, կարճ ժամանակաընթացքում դարձել Թուրքիայի քաղաքական կյանքի աչքի ընկնող դեմքեր: Պանթուրքիստները առաջ էին քաշում թուրքալեզու ժողովուրդների ու ցեղերի միավորումը մի միասնական պետության մեջ, ծրագրում Թուրանի վերականգնում «ավագ եղբոր»՝ փոքրասիական թուրքերի գլխավորությամբ:

«Առավել ծայրահեղ պանթուրանականները առաջ էին քաշում առավելագույն ծրագիր, այն է՝ ստեղծել Մեծ Թուրան, որի սահմանները պետք է տարածվեին ճապոնական ջրերից մինչև Սկանդինավյան լեռները, բևեռային օվկիանոսից մինչև Տիբեթի բարձրավանդակը: ... Ծայրահեղ հիվանդ երևակայության տեր պանթուրքականների համար Մեծ Թուրանը Մարոկկոյից ձգվում է մինչև Կորեա: «Մերն է այն երկիրն ընդարձակ, որ երեք աշխարհներ է ընդգրկում,— գրում է թուրք ազգային բանաստեղծ Մեհմեդ Էմինը: Ավելին, նրանցից ոմանք արյունակից ժողովուրդներ համարեցին բուլղարներին, հնագույն ֆիններ–ուգրերին, հատկապես ֆիններին, էստոնացիներին, հունգարներին և այլն: «Չկա ավելի դժվար գործ, քան որոշել աներևակայելի չափերով ընդարձակ ու հպարտ թուրքական աշխարհի իսկական սահմանները»,— գրում է բաքվեցի Ահմեդ Աղաևը:

Պանթուրքականների մյուս, այսպես կոչված, իրատես մասը քննադատաբար էր մոտենում ծայրահեղ թուրանականների պահանջներին, աշխատում էր ներկայանալ գիտականության թիկնոցով: Իրատես պանթուրքականները հանդես էին գալիս «Փոքր կամ Նոր Թուրան» ստեղծելու պահանջով՝ «մեծահոգաբար» թուրանյան կամ ուրալ–ալթայան «մեծ» ընտանիքը սահմանափակելով զուտ թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքներով:

«Փոքր Թուրանի» սահմանները «իրատես» պանթուրանականները տարածում են Կ. Պոլսից մինչև Բայկալ լիճ և Մոնղոլիայից մինչև Կազան: Այս սահմանների մեջ նրանք ներառնում էին Բալկանները, Փոքր Ասիան, Ղրիմը, Կովկասը, Աստրախանը, Սիբիրը, Միջին Ասիան, Կասպիականի բոլոր եզերքները, Հյուսիսային և Հարավային Ադրբեջանները»[1]:

Այս ծայրահեղ ծրագիրն իրականացնելու համար պանթուրքիստները բոլոր թուրքալեզու ժողովուրդներին «սրբազան պատերազմի» էին նախապատրաստում Ռուսաստանի դեմ: Բայց քանի որ դրան հասնելու ճանապարհին առաջին խոչընդոտը Թուրքիայի ու «ցեղակից եղբայրների» արանքում կանգնած հայ ժողովուրդն էր, ամենայն բծախնդրությամբ մշակեցին ու իրականացրեցին հայ ժողովրդի ցեղասպանության ծրագիր:

Դեռևս 1877–78 թթ. ռուս–թուրքական պատերազմից հետո թուրք քաղաքական գործիչ Քյամիլ փաշան էր ձևակերպել հայերի բնաջնջման ծրագիրը. «Եթե Եվրոպան մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ,որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ. խելոքությունը ջնջել, վերացնելն է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանել և օտարին ձեռնմխության առիթ ու գործիք լինել: Հիմա, այսօր, գոնե Անկլիո շահերն կպահանջին, որ Փոքր Ասիո (մենք և Անկլիան Հայաստան բառը ոչ միայն չենք ճանաչեր, այլև այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք), մեր ունեցած երկրները ազատ մնան օտարի միջամտութենեն, միջամտութեան ամեն առիթներեն, ուստի այդ սուրբ նպատակի համար պետք է և պետական իրավունքը կպահանջե որևիցե կասկածելի տարր անհետ ընենք, որպեսզի ապագան ապահովենք: Ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակասիր մեզ, ամեն գործիք պատրաստում ենք, քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան,

[1] Հր. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 248–250:

ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրոնական պատերազմ մը կհրապարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ զենք ունի, ո՛չ զինվորություն և ո՛չ պաշտպան: Երբ ընդհակառակը, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերությանց մեկը և ամենեն հարուստը մեզ զինակից է և մեր Ասիական աշխարհին երաշխավոր: Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպան կրոնակից մը փնտրե և չգտնի տաճկական Ասիո մեջ, կթողու զմեզ հանգիստ»: Զարգացնելով իր միտքը՝ նա ասում է՝ որպեսզի Հայաստանից չստեղծեն երկրորդ Բուլղարիա, «մենք պետք է մեր հողի երեսից ջնջենք հայոց ազգը»:

Պանթուրքականները հայերի բնաջնջման հարցը ավելի մեծ պլանով էին ներկայացնում՝ ընդգրկելով նաև Ռուսաստանի կազմի մեջ մտնող Հայաստանը: 1906 թ. նոյեմբերի 23–ին Բեհաեդդին Շաքիրը Կովկասի պանթուրքիստ պարագլուխներին գրած նամակ–հանձնարարականում շեշտում է, որ «մեր թշնամին հանդիսացող և ձեզ ռուսների լծից ազատելու դեմ ամենամեծ արգելքներից մեկը հայերն են: Մշակեցեք մի կանոնավոր ծրագիր՝ նրանց ջնջելու համար»[1]:

Իսկ 1910 թ. կայացած իթթիհադ կառավարող կուսակցության հերթական համագումարից սկսած պանթուրքիզմը բարձրացավ պետական քաղաքականության մակարդակի, որի առաջին խնդիրը հայկական հարցի լուծումն էր: Ահա ինչպես էր հարցը դնում կուսակցության լիդերներից մեկը՝ բժ. Նազիմը: «Հավատում եմ, որ բոլորդ համաձայն կլինեք, եթե հայտարարեմ, որ այդ քաղաքական ծրագրի (թուրքական կայսրության ստեղծման) իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է... Մի պահ երևակայեցեք արևելյան նահանգների վրա մի հայ պետության կազմությունը: Նման պետությունը թուրանական ծրագրի տապանաքարը կլինի: Ոչ միայն պարտավոր պիտի լինենք ամբողջապես հրաժարվել թուրք ցեղի միացման ծրագրից, այլև պատրաստ լինենք սեղմվելու Անատոլիայի մեջ միայն, Կոնիայի, նախկին սելջուկյան սուլթանների նեղ հողամասերի վրա: Այն ժամանակ դա կնշանակի մահացում: ... Մնում է միակ ու մի վերջին կարելիություն... պետք է բնաջինջ անել հայերին մեր կայսրության մեջ... Կա՛մ կհամաձայնենք հայերի ամբողջական ու արմատական բնաջնջման ծրագրին՝ ապահովելով մեր ներկան ու ապագան, պատրաստելով մեր զարգացման ու զորացման ուղին, և կա՛մ, մերժելով այս ծրագիրը, կշարունակենք մնալ արդի կացության մեջ, մեր ոտքի տակի հողը փորելով մեր երկրի մեջ իսկ, բռնելով քայքայման ու անհետացման ճամփան: Ուրիշ ելք գոյություն չունի մեզ համար: ... Այդ ամենից հետո՝ ամենամեծ խոչընդոտի անհետացումով կհարթվի ճամփան այն մեծ իդեալի՝ համաթուրանականության գաղափարի իրականացման համար, որին կառչած ենք մեր ամբողջ էությամբ»[1]:

Այս արյունածոր ծրագիրը ամենադաժան, ամենավայրենի մեթոդներով իրականացվեց 1915–23 թթ., որի զոհը դարձավ հայ ժողովրդի մեծ մասը Թուրքիայի արևմտյան սահմաններից մինչև Շուշի ու Բաքու:

Թուրանական գաղափարով սնվող պանթուրքիզմը ամուր արմատներ ձգեց ցարական կայսրության տարածքում գտնվող թուրքալեզու ցեղերի ու ժողովուրդների մեջ: Ամենուր ծնավորվեցին գաղտնի կազմակերպություններ, որոնք հետևողականորեն պայքարում էին «մեծ եղբոր» օսմանյան թուրքերի գլխավորությամբ մի միասնական թուրանական պետության մեջ համախմբվելու համար: Դեռևս 1916 թ. Լոզանում հրավիրվեց Ռուսաստանից անջատվել ձգտող պանթուրանական գործիչների համագումար, և ԱՄՆ–ի պրեզիդենտ Վիլսոնին հղեցին ուղերձ, որով խնդրում էին նպաստել «ռուսական երդվյալ անհաշտ ու հավիտենական թշնամուց Ռուսաստանի մահմեդականների ազատագրմանը»: 1917 թ. ապրիլին Բաքվում գումարվեց Կովկասի մահմեդականների առաջին կոնգրեսը, ուր մուսավաթականները առաջադրեցին Ռուսաստանի մահմեդականների գործուն կենտրոն ստեղծելու պահանջը, որը ենթակա լիներ թուրքական կառավարությանը: Նույն պահանջն առաջադրեցին նրանք նաև երկրորդ ու երրորդ կոնգրեսներում: 1918 թ. Բաքվում հռչակվեց կոմունա: Մարտի 30–ին մուսավաթականները զինված պայքարի դուրս եկան կոմունայի դեմ, գրավեցին քաղաքի զգալի մասը, եռօրյա պայքարում պարտվելով՝ կենտրոնացան Գանձակում և օգնության կանչեցին թուրքական միլիտարիստներին: Դրանով մուսավաթականները բանվոր դասակարգի վերազգային պայքարը փոխադրեցին հայ–թուրքական հակամարտության դաշտ: Նույն օրերին Անդրկովկասյան սեյմում մուսավաթականները պահանջում էին Թուրքիային միացնել Անդրկովկասի մուսուլմանական մարզերը: Նրանց պարագլուխներից Ուսուբբանը սեյմում հայտարարում է. «Անդրկովկասի ողջ

[1] Հր. Սիմոնյան, նշված աշխատությունը, էջ 49.

[1] Հր. Սիմոնյան, նույն տեղը, էջ 292–294:

տարածքում անարխիան այնպիսի վիթխարի չափեր է ընդունել, որ այլևս անհնարին է այն ճնշել մեր սեփական ուժերով: Դրությունն էլ ավելի է վատթարանում նրանով, որ արևելքից՝ Բաքվից, հարձակվում են բոլշևիկները՝ դաշնակցած մեր դարավոր թշնամիների (հայերի) հետ, իրենց հետ ավերածություն և վերջնական կործանում բերելով թուրք ժողովրդին: Իրերի այսպիսի դրության մեջ մենք ուրիշ ելք չունենք, քան դիմել օտարերկրյա միջամտությանը... Մեզ համար բարեկամական ու եղբայրական այդ ուժը Թուրքիան է: Եկել է ժամանակը, երբ մեր պատվիրակությունը պետք է գնա Բաքում և Արևելյան Անդրկովկասի թուրքերի անունից օգնություն խնդրի օսմանյան կայսրությունից»: 1918 թ. մայիսի 6–ին մուսուլմանական պատվիրակությունը նորից հայտարարեց սեյմին, որ «ստիպված է պաշտոնապես դիմելու Թուրքիային՝ Բաքվի և Շամախու շրջանների մուսուլմաններին փրկելու համար»: Նույն մուսավաթականների ճնշմամբ սեյմը ցրվեց, և երկրամասը բաժանվեց երեք հանրապետությունների (մայիսի 26, 27 և 28–ին):

Դա այն օրերին էր, երբ ռուսական զորքերը հեռացել էին Կովկասյան ճակատից, և թուրքերը հաղթականորեն արշավում էին դեպի արևելք: 1918 թ. թուրքական այդ արշավանքների հետևանքով նախկին Ռուսական կայսրության կազմում գտնվող Հայաստանից թուրքերը նվաճեցին 28 հազ. ք. կմ տարածք՝ 500 հազար հայերի հարկադրելով սփռվել Ռուսաստանից մինչև Չինաստան: Դա այն օրերին էր, երբ հայ ժողովրդի քաղաքական ղեկավարությունը հարկադրված էր ստորագրել Բաթումի նվաստացուցիչ պայմանագիրը՝ գոնե հայրենիքի մի բեկոր՝ 9 հազ. ք. կմ տարածքով, փրկելու համար: 1918 թ. հունիսի սկզբներին թուրքական զորքերը Նուրի փաշայի գլխավորությամբ մտան Գանձակ, և Նուրի փաշան այնտեղ ստեղծեց «ադրբեջանական կառավարություն»՝ Խան Խոյուսկու գլխավորությամբ: 1918 թ. ապրիլի վերջերին մուսավաթ պարագլուխներից Ուսուբբայլը սեյմում ունեցած ելույթում երկրատարածքը անվանում էր Արևելյան Անդրկովկաս, մայիսին «Պրավդայի» էջերից նույնը հաստատում էր Ստալինը, հունիսին այն դառնում է Ադրբեջան: Իսկ ինչո՞ւ նման անակնկալ անվանափոխություն: Բանն այն է, որ նախատեսվում էր, որ իրանական Ադրբեջան–Ատրպատականի հետ պետք է ստեղծվեր մի միասնական քաղաքական միավոր: Ահա ինչ է վկայում իրանցի հեղինակ Էնաթուլլահ Ռեզան՝ խորհրդային ակադեմիկոս Բարտոլդից կատարելով բառացի մեջբերում. «Ազերբայջան անունը Ազերբայջանի Հանրապետության համար այն նպատակով ընտրվեց, որ կարծվում էր, թե Ադրբեջանի Հանրապետության հաստատումով Իրանի Ազերբայջանն ու Ազերբայջանի Հանրապետությունը կմիաձուլվին»[1]: Եվ այսպես, երբեմնի Ալբանիա–Աղվանք, Առան, վերջերում՝ Արևելյան Անդրկովկաս երկրաանվանը կպցվեց Ադրբեջան կեղծանունը, որպեսզի այն հռչակվի ազերթուրքերի «վաստակած հայրենիք»:

1918 թ. հունիսին օսմանյան զորքերը, միացած մուսավաթական բանդաների հետ, Գանձակից արշավեցին դեպի Բաքու: Նրանք 1724 թ. հետո երկրորդ անգամ ռազմակալելով Կուրի ձախափնյակը՝ իրականացրեցին հայերի երկրորդ մասսայական կոտորածը, և Շաքիից մինչև Շամախի ընկած տարածքում դեռևս մնացած 73,526 հազար հայերից 1921 թ. փրկվել էր ընդամենը 12 716 մարդ՝ ըստ «Սովետական մեծ հանրագիտարանի»: Սեպտեմբերի 15–ին գրավելով Բաքուն՝ թուրքերը այդտեղ էլ ոչնչացրեցին 30 հազար հայի: Այսպիսով՝ 1918 թ. թուրքական արշավանքը Արևելյան Անդրկովկաս միայն Կուրի ձախափնյակի տարածքներում արժեցավ 100 հազար հայի կյանք և պատմական թատերաբեմ իջած «Ադրբեջանական Հանրապետություն»: Շուտով Թուրքիան պարտվեց Առաջին աշխարհամարտում, և Անդրկովկասում նրան փոխարինեցին անգլիական օկուպացիոն զորքերը: «Ավագ եղբոր սվիններով պետականության հասած ազերթուրքերի ախորժակն այնպես էր բացվել, որ այս անգամ էլ իրենք էին ծրագրել «Հայոց հարցի» լուծումը: Դեռևս Բաքուի բանակցությունների օրերին մուսավաթականները պնդում էին՝ իրենց հանձնել Երևանը որպես ազերթուրքական տարածք, իսկ Հայաստանի մայրաքաղաք դարձնել Էջմիածինը: Չնայած անգլիական օկուպացիոն ուժերի հովանավորությամբ նրանք շատ աղետներ հասցրեցին հայերիս, բայց և այնպես Արցախական աշխարհը 1918–1991 թթ. ազատամարտով չափ դրեց նրանց ախորժակին: Մենք չենք անդրադառնում դրան, որովհետև այն ծանոթ է հանրությանը:

Համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիայում 1919 թ. գարնանից սկսվեց միլիական շարժումը: Նրա ղեկավարները առաջին իսկ քայլերից ազդարարեցին. «Արևելյան Անատոլիայի բնակչությունը պատրաստ է մինչև մահ դիմադրելու հայ պետությանը»: 1919 թ. հոկտեմբերին կնքվեց թուրք–ադրբեջանական գաղտնի դաշնագիրը: Թուրքիան պարտավորվում էր ադրբեջանական բանակը մարզել թուրք սպաների միջոցով: 1920 թ. սկզբին Քեմալի գլխավորած կառավարությունն ընդունեց որոշում. «Արևելյան ռազմաճակատում անցկացնել

[1] Էնաթուլլահ Ռեզա, Ազերբայջան և Առան, Ե., 1994 թ. էջ 152:

պաշտոնական զորահավաք և սկսել զորքերի կենտրոնացումը՝ կովկասյան խոչընդոտը թիկունքից վերացնելու համար»: Արևելյան բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը տեղ հասնելուն պես հեռագրեց Քեմալին՝ «Մոտակա օրերը ես կկարողանամ տեղեկացնել այն մասին, որ Հայաստանը ջնջված է աշխարհի քարտեզից»:

1920 թ. ապրիլի 26–ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը դիմեց Լենինին՝ խնդրելով դրամական և ռազմական օգնություն և երկուսն էլ ստացավ: Միաժամանակ «Նոր Թուրքիայի» կառավարողները առաջարկում էին. «Եթե սովետական ուժերը մտադիր են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ... թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում ռազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ»: 1920 թ. սեպտեմբերի 1–8–ը Բաքվում գումարվեց Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, որին մասնակցում էին 37 ազգերի ու ազգությունների պատվիրակություններ՝ Թուրքիայից մինչև Չինաստան ու Ճապոնիա: Համագումարում Թուրքիային համարեցին «Արևելքի հեղափոխական շարժման առաջամարտիկ»: Թուրքիայի պատվիրակ Վաղարդին Շաքիրը իր ելույթում առաջ էր քաշում «հայկական իմպերիալիզմը» խեղդելու պահանջը, որպեսզի «կարմիր թուրքերը» կարողանային անմիջականորեն միանալ «հեղափոխական» Արևելքի հետ», իսկ Էնվեր փաշան էլ իր ներկայացրած դեկլարացիայով պահանջում էր Արևելքում մղվելիք այդ «սրբազան պատերազմում» մահմեդական բանակի հրամանատարությունը հանձնել իրեն:

Բայց որ ամենաողբերգականն է, համագումարին մասնակից 157 հայ բոլշևիկներից ոչ ոք չհասկացավ, որ այդ ամենն ուղղված է առաջին հերթին «իմպերիալիստական Հայաստանի» դեմ, և դաշնակյան վարչակարգը օր առաջ տապալելու մոլուցքով կուրացած՝ նրանք այն աստիճանի քայքայիչ աշխատանք ծավալեցին հայկական զորքերի շարքերում, որ զորքերը հրաժարվեցին «կռվել եղբայր» թուրքերի դեմ: Իսկ երբ մեծ ողբերգությունից հետո նույն բոլշևիկները բողոքեցին Ալեքսանդրապոլում հայերին անխնա կոտորող ու բռնաբարող Քյազիմ Կարաբեքիրին, վերջինս նրանց պատասխանեց. «Օղո՛ւլ, հայ է, պիտի կոտորենք, ճակատներին գրվա՞ծ է, թե ով է բոլշևիկ, ով՝ դաշնակ»:

1920 թ. սեպտեմբերի 23–ին Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմի արդյունքում և 1921 թ. մարտի 16–ին Մոսկվայում կնքված սովետա–թուրքական պայմանագրի հետևանքով, Հայաստանի հանրապետությունը մի կրկին անգամ բաժան–բաժան արվեց: 28 հազար ք. կմ տարածք բռնազավթեց Թուրքիան, Ջավախքը նվիրվեց Վրաստանին,

Նախիջևանն ու Արևելյան Հայաստանի մի շարք մարզեր դրվեցին Ադրբեջանի պանթուրքական կառավարության տրամադրության տակ՝ տևականորեն շարունակելու համար հայերի ցեղասպանությունն ու բռնագաղթը: Հրեշի երախից փրկվեց միայն մի Զանգեզուր՝ Գարեգին Նժդեհի անձնազոհ հերոսականության շնորհիվ: Մնում է Լենին–Աթաթուրք բարեկամության վերջին արարը՝ 1921 թ. հունիսի 5–ը, երբ 95 % հայ բնակչություն ունեցող Արցախն էլ նվիրեցին Ադրբեջանին՝ իր 70–ամյա հետևանքներով: Այս տևական վայրիվերումների հետևանքով ժամանակակից Ադրբեջանի տարածքի հայ բնակչությունը 1916 թ. 538484–ից 1926 թ. մարդահամարի համաձայն իջել էր 282004–ի՝ տալով 256480 զոհ ու բռնագաղթված:

Եվ մինչև այսօր էլ շարունակվող այս աննահանջ քաղաքականության, այս ողբերգականորեն հերոսական իրականության մասին արժանապատիվ տեղեկանք ներկայացնելու փոխարեն, սեփական ժողովրդին ու նրա պատմությանն անգիտակ մեր վայ–քաղաքագետները «հայտնագործում» են մի հանրագիտարան և «պարզում», որ այդ ժամանակաշրջանում Հայկական Հանրապետությունը ազգային հատկանիշով ավելի միատարր է եղել, քան Վրաստանն ու Ադրբեջանը, որ հայերը քաղաքներում 91,7 % էին, գյուղերում՝ 84,7 %, որ 1917 թթ. «քաղաքացիական պատերազմը» բարդացրել է ազգային փոքրամասնությունների վիճակը Ադրբեջանում, որի հետևանքով մասսայական տեղաշարժ է նկատվել նաև հայ բնակչության մեջ:

Մի՞թե մեր բարձրակարգ քաղաքագետները չկարողացան Ղարաբաղում ճարել, չասենք պատմաբան, գոնե պատմության մի վարժապետի, որ բացատրեր քաղաքացիական պատերազմի և ազգամիջյան ընդհարումների ու հաշվեհարդարի տարբերությունները, որ ավելի քան 256 հազար հայերի բնաջնջումն ու բռնագաղթեցումը ոչ թե «ազգային փոքրամասնության տեղաշարժ» է, այլ հաշվեհարդար ու ցեղասպանություն՝ հայրենի տարածքների վերջնական բռնազավթման ու յուրացման գործողություն: Վերջապես ե՞րբ պետք է աչքով տեսած սկզբնաղբյուրների պատճենահանմանը գումարեն նաև ուղեղի մասնակցությունը, կարողանան հասկանալ արտագրվող սկզբնաղբյուրի էությունն ու ուղվածությունը, որպեսզի տեսանելի դառնա երևույթի իրական բովանդակությունը: «Սովետական մեծ հանրագիտարանը» 1926 թ. միագամայն ճիշտ է արձանագրում, երբ ազգային փոքրամասնության տեղաշարժ է համարում 80 հազար ռուսների վերադարձը հայրենիք՝ Ռուսաստան: Հիրելով Անդրկովկասին՝ ցարիզմը ստեղծել է գաղթօջախների մի պատ-

կառելի ցանց: Բավական է հիշել Վարանդայի ու Դիզակի հարավարևելյան մասերը զբաղեցրած գաղթօջախները՝ Կուրապատկինո, Խոնաշեն (Մարտունի), Գևորգավան, Կարյագինո (Ֆիզուլի) և այլն, որոնց բնակիչները ցարական վարչակարգի տապալումից հետո հիմնովին վերադարձան հայրենիք: Ճիշտ այդպես վարվեցին նաև թուրքական այն ցեղերը, որոնց Նադիր Շահն էր մտցրել Գանձակի ու Ղարաբաղի խանություններ: Երբ 1804 թ. սեպտեմբերին ռուսական զորքերը մտան Գանձակ, այդ ցեղերը փախան Արաքսի մյուս ափը: Ցարական կարգադրությամբ գեներալ Մադաթովը հասավ մինչև Մակու և համոզելով ետ բերեց: Այո՛, այս կարգի երևույթները կարելի է որակել տեղաշարժեր, բայց ի՞նչ տեղաշարժի մասին կարող է խոսք լինել մի ժողովրդի վերաբերյալ, որը հազարամյակներ շարունակ մաքառել ու գոյատևել է իր բնական հայրենիքում, ի վերջո դարձել ցեղասպանության զոհ, ոչ վաղ անցյալում 87 % ազգային կազմից վերածվել 0 %–ի: Ինչ մնում է նրան, որ հանրագիտարանում հայերին էլ են մտցրել այդ կարգի մեջ, պետք է մխիթարվել, որ իսպառ չեն ուրացել հայերի գոյությունը, ինչպես ուրանում էին՝ սկսած Քյուրուքչայի պայմանագրից՝ մեկ–մեկ հիշելով նեղն ընկած ժամանակ:

Այսպե՞ս ենք պաշտպանում մեր արդար իրավունքը, մեր զավակների արյան գնով նվաճած ազատությունը մի այնպիսի գերլարված ժամանակահատվածում, երբ աշխարհը կլանել ձգտող հզոր ուժերը ճուտ որսացող ուրուրների պես փռփռում են մեր գլխավերևը, երբ սպասելի է, որ հանուն Բաքվի նավթի՝ «տարածքային ամբողջության» խրտվիլակը միջոց դարձնեն հերթական բռնազավթման ու ցեղասպանության համար:

IV

Վերջապես Ստրասբուրգում մեր բաժին դատավճռից հանեցին «և այլ տարածքներ» ձևակերպումը:

Ավելին սպասել չէինք էլ կարող: Երեկ մեր բռնազավթված բնական հայրենիքում՝ Բաքվից մինչև Ղազախ, Կովկասի փեշերից մինչև Արաքս, մեզ անարգել կոտորող ու բնավեր դարձնող, մեր վզին իրենց ագրեսիվ պատերազմը փաթաթած, բայց պատերազմի դաշտում պարտված թշնամին իր աննահանջ, սանձարձակ ու լկտի քարոզարշավով աշխարհի առաջ մեզ դարձրել է ուրիշի հողերը բռնազավթող ագրեսոր, պահանջում է իրենց «սրբազան» տարածքների ու բռնագաղթվածների վերադարձ:

Իրենց աթոռակալից այն կողմ ոչինչ չտեսնող հայոց քաղաքական էլիտա կոչվածների, լինի դիմություն, թե *Անդիմություն*, միջից դո՞ւրս է եկել գոնե մեկը, որ այդ պահանջին հակադարձի:

– Իսկ ինչ եք մտածում հայոց երեքհազարամյա Բաքվից բռնագաղթված կես միլիոնի հասնող հայության ճակատագրի մասին: Էլ չենք խոսում հայկական մյուս պատմական տարածքներից բռնագաղթված հարյուր հազարների մասին:

Հակառակը, պետական մակարդակով օկուպացիա է դառնում մեր զավակների կյանքի գնով ազատագրված հայրենական հողը, և տասը տարի շահարկում են այն վերադարձնելու հարցը՝ առանց մի օտարի չափ անգամ ճանաչելու իրենց հայրենիքը: Իսկ թե ինչ օկուպացված տարածքների մասին է խոսքը, թող բարի լինեն հազարավորների միջից գոնե մի սկզբնաղբյուրի ծանոթանալ, ասենք, Ա–ՂՕի «Հայ–թուրքական ընդհարումները Կովկասում 1905–06 թթ» (Երևան, 1907 թ.) գիրքը:

Հակառակորդի քարոզչական մեքենան, չբավարարվելով մեր Արևելյան Հայաստանից իրենց համար ստեղծած արհեստական «Ադրբեջանը» իրենց հազարամյակների հայրենիք հռչակելուց, բոլոր միջոցներով «ապացուցում» են, որ ժամանակակից ՀՀ տարածքը ևս Ադրբեջան է: Անպատասխան քարոզարշավում նրանք այնտեղ են հասել, որ կազմակերպում են միջազգային գիտական կոնֆերանս, հրավիրում են աշխարհի տարբեր երկրների գիտնականներին և նրանց առաջ «ապացուցում», որ հայերը հեռավոր Կիլիկիայում պետություն ստեղծել չէին կարող, եթե չլինեին իրենք, եթե չօգտագործեին իրենց փառապանծ զավակ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Նրանք, մեր հազարամյակների հայրենիքը, պատմությունը, մշակույթը, տարբեր դարերում դերակատարում ունեցած մեր քաղաքական ու մտավոր գործիչներին սեփականաշնորհած ու իրենց ձեռքին զենք դարձրած, աննահանջ պայքար են ծավալել և սանձարձակ ստի ու կեղծիքի օգնությամբ շահագրգիռ հզորներին տրամադրում են մեր դեմ:

Ո՞վ կարող է ասել, թե, ասենք, Թաիլանդում կամ Տիբեթում քանի՞ ցեղ կամ ժողովուրդ կա, և ի՞նչ հոգս ու հակամարտությունների մեջ են նրանք, մինչև որ այն չներկայացվի աշխարհին: Նախահարձակ ազերբուրքերը օգտվում են հենց այդ պատեհությունից՝ գլխիվայր շուռ տալով ամեն ինչ:

Իսկ մենք... եթե մեր կողմից եզակի դեպքերում հակադարձության

փորձ էլ կատարվում է, այն դառնում է ազերբուրքական քարոզարշավի պոչը: Ծանոթացեք ԼՂՀ ԱԳՆ–ի 2001 թ. ապրիլի 25–ին ՄԱԿ–ին հասցեագրված «Մեմորանդումին»: Պատմական իրականությանը ճչացող անտեղյակությունը և պատասխանները ողբալի տպավորություն են թողնում:

Բայց թե ի՞նչ վերաբերմունքի են արժանանում նման անգիտությունն ու անտեղյակությունը կանխել փորձող «կողմնակի մարդիկ», երևում է ՀՀ արտգործնախարարին հղած իմ մի նամակի պատմությունից:

ՀՀ արտաքին գործերի նախարար պրն Վ. Օսկանյանին

Հարգարժան պարոն նախարար.

Ադրբեջանի քարոզչական մեքենան այնքան է «առաջադիմել», որ հարյուրավոր հուշարձանների ցուցակ է ափռել աշխարհով մեկ՝ աղմուկ բարձրացնելով, թե հայերը բարբարոսաբար ոչնչացնում են իրենց հուշարձանները «գրավյալ» տարածքներում: Մինչդեռ նրանք ոչ միայն վերաբնակներ էին, այլև չունեին նույնիսկ որոշակի գերեզմանոցներ, որովհետև քոչի ժամանակ որտեղ մեռնում, այնտեղ թաղվում էին: Նույնիսկ մինչև 1920–ական թթ. Շուշի քաղաքում թուրքերը գերեզմանոց չունեին: Կա՞ մարդու մտքով անցնելու ենթակա որևէ արգահատելի բան, որ նրանք չշպրտեն մեր հասցեին՝ սկսած մազոխիզմից մինչև Բեն Լադենին Ղարաբաղում թաքցնելը: Եվ այդ ամենը պետական մակարդակով, քարոզչության բոլոր միջոցների օգտագործմամբ:

Իսկ մենք «ալարում» ենք մեր ճշմարտությունները, իրական, տեսանելի ու շոշափելի, անժխտելի ճշմարտությունները աշխարհին ներկայացնել և ագրեսիայի թիրախ լինելով, հայրենի տարածքները կորցնելով հանդերձ, դառնում ենք ուրիշների հայրենիքը բռնազավթող «ագրեսորներ»: Քարոզչական պայքարում մենք գտնվում ենք այն ծեծվողի վիճակում, որ, ձեռքերը գլխին դրած, աշխատում է գոնե գլուխը փրկել վնասվելուց: Իսկ եթե առանձին անհատներ էլ իրենց քաղաքացիական պարտքի մղումով դիմում են ամեն մի ինքնազոհության, աշխատում առարկայորեն պաշտպանել մեր արդար իրավունքը, որն այլ բան չէ, քան ճշմարտության ցուցադրում, մնում են անպաշտպան ու թնաթափ այնքան ժամանակ, մինչև ճարում են մի բարերար, որ նրանց աշխատանքը լույս աշխարհ հանի: Ազերբուրքերը աշխարհով մեկ բղավում են՝ տարփողելով «Ադրբեջանական սրբազան հայրենիք»: Մեր պատ-

մաքաղաքական միտքը երբևէ անդրադարձե՞լ է այն հարցին, թե իրենից ի՞նչ է ներկայացնում Ադրբեջանը: Լավագույն դեպքում, որպես գերագույն հերոսություն, անընդհատ բղավել է՝ «Ղարաբաղը մերն է»:

Մենք որոշակի նկատառումներով ամենասեղմ՝ ընդամենը 34 էջի սահմաններում, փորձել ենք պատասխանել, թե ինչ է իրենից ներկայացնում այդ Ադրբեջանը, և ինչ շրջանակներում պետք է դիտարկել ղարաբաղյան հիմնահարցը:

Բայց քանի որ 5000 դրամ թոշակի զորությամբ չենք կարող այն հասցնել աշխարհի դատին, դիմում ենք Ձեզ, որ այդ աշխատանքի անգլերեն թարգմանության գործն իրականացնեք պետական միջոցներով:

Արտաշես Հակոբջանյան
1.02.2002 թ.

Նախարարությունից մերժման թուղթը ստացանք այն պահին, երբ երկու աշխատակից, թուղթ ու գրիչ վերցրած, հաշվարկներ էին կատարում, թե ինչքան պետք է վճարեն ինչ–որ դահլիճում կազմակերպվելիք համերգի նվագողներին՝ հազա՞ր, թե՞ հազար հինգ հարյուր դոլար:

Իհարկե, չի կարելի ասել, թե մեր պետական այրերը պարապ նստել են: Քի՞չ բան է, որ տարիներ շարունակ կուզեկուզ են անում թուրքի առաջ, որ սահմանը բացեն, որպեսզի... Պարոնները չգիտե՞ն, թե՞ այստեղ էլ են ոտնատակ տալիս դարերի փորձությունների ստուգված ճշմարտությունը. թուրքի հետ կարելի է առևտուր անել միայն սահմանագլխին, ինչպես այսօր Սադախլվում: Բավական է թույլ տաս, որ թուրքը նույնիսկ ոտքի թաթի կես մասով անցնի սահմանը, և այնուհետև ոչ մի բանի տերը չես: Ոչ անհայտ Բոգդան Կնունյանցի հայրը, տեղափոխվելով Շուշի, երեք թուրք է վարձել որպես իր կալվածքների պահապան: Մի կարճ ժամանակ հետո այդ երեք թուրքի շնորհիվ ձևավորվեց մի ահռելի գյուղ, դարձավ շրջակա հայկական գյուղերի պատուհաս:

Ետգինադադարյան մի ամբողջ տասնամյակ մեր պետական գործիչներն ու քաղաքական այլ խմբակցություններ հանցավոր անտարբերություն են դրսևորել քարոզչական պատերազմի ճակատում: Ինչո՞ւ, ինչո՞ւ մենք, առաջվա պես խոսքերս մեկ արած, լռում ենք հայության դեմ Ադրբեջանում իրականացված վայրագությունների, պերմանենտ ցեղասպանությունների մասին: Ինչո՞ւ խորհրդային ժամանակների իներցիայով դեռևս շարունակվում է իշխանությունների վախկոտ, հանցավոր հանդուրժողականությունը մեր հայրենիքի պատմության ու մշա-

կույթի կողոպուտի և յուրացման նկատմամբ: Անմիջապես ասենք, որ այս հարցում, ինչքան էլ ցավալի է, Հայաստանի ազգային ակադեմիայի դիրքորոշումը եղել է և դեռ մնում է ադրբեջանամետ: Այլապես մեզ նման շարքային քաղաքացիների չափ նրանք էլ կիմանային, որ երեքհազարամյա հայոց Բաքուն մեկուկես հազարամյակ օտարների լծի տակ մնալուց հետո էլ 1786–96 թթ. բնակչության թվի կես մասով մնացել էր դեռևս հայկական, մյուս կեսով դարձել մահմեդական, բայց ոչ ազերթուրքական («Թարիխի Ջեվդեթ», հ. 3), որ մինչև 1988 թ. 1/3–ովդեռևս մնում էր հայկական, 2/3–ով՝ եկվոր ռուսական ու ազերթուրքական: Որ 1912 թ. ցարական վիճակագրությամբ Աղդամը ունեցել է ընդամենը 60 տնտեսություն՝ 260 բնակչությամբ, որը 20–րդ դարի 2–րդ կեսին Ադրբեջանի ղեկավարության հատուկ քաղաքականության շնորհիվ դարձավ մի ահռելի քաղաք՝ Մուղանի տափաստանից ու Իրանից համալրված ազերթուրքերով:

Այսպես շարունակել չի կարելի: Բավական է՝ ինչքան ադրբեջանական գաղափարաքաղաքական քարոզարշավի պոչից կախված քարշ եկանք: Անհրաժեշտ է պատմագիտական ու քաղաքական հիմնավորվածությամբ աշխարհին ցույց տալ, թե ինչ է իրենից ներկայացնում Ադրբեջան կեղծանունով թմբկահարվող երկրատարածքը, և ինչ հարթության վրա պետք է դնել փոխադարձ զիջման հարցերը:

Փոխզիջման խնդիրը ոչ թե պետք է փնտրել Լաչինում և Մեղրիում, այլ կշեռքի մի նժարին պետք է դրվի ԱՐՑԱԽ–ՂԱՐԱԲԱՂ իր պատմական սահմաններով, մյուս նժարին՝ Բաքուն, Շամախին, Շաքին ու Գանձակը, որոնք երկրատարածքով շահագրգիռ հզոր տերությունները դարձրին «Ադրբեջան»:

Իրականության ճշմարիտ պատկերը ցուցադրելուց հետո միայն «քաղաքակիրթ աշխարհը» այլ ձևով կընկալի «մեր այսօրվա պետական քաղաքականությունը»:

Հ.Գ. Փառք Աստծո, վերջապես հայ մտավորականության՝ տարիներ շարունակ հայտարարած ճշմարտություններից մեկը հասել է մեր քաղաքական ղեկավարությանը. Արցախը երբեք անկախ Ադրբեջանի կազմում չի եղել:

Բայց դա ճշմարտության փոքր կեսն է միայն, որովհետև հնչած հայտարարությունից երևում է, որ Հայաստանի ղեկավարները Արցախից դուրս են թողնում, այսինքն՝ ադրբեջանական են համարում ինչպես

ազատագրված տարածքները, այնպես էլ այն հինգ շրջանները՝ Շամքոր, Քարհատ (Դաշքեսան), Գետաշեն (Խանլար) Շահումյան, Ժդանով, որոնք 1990 թ. հայաթափվեցին կոմունիստական Ռուսաստանի հրանոթներով:

Եթե ոչ հիմա, ապա էլ ե՞րբ պետք է քաղաքական կամք դրսևորենք՝ ասելու համար, որ Արցախն ու Նախիջևանը զոհ դարձան ռուս–թուրքական Լենին–Աթաթուրք համագործակցությամբ իրականացվող պանթուրքական ծրագրերին: Որ Արցախն այն եզակի երկրամասն է Այսրկովկասում, որ թուրքերը զենքով նվաճել չեն կարողացել ո՛չ 1724թ. և ո՛չ էլ 1918 –1920 թթ.: Խոսքը օսմանյան թուրքերին է վերաբերում, որ վերջին դարերում երկու անգամ նվաճել են ամբողջ Այսրկովկասը, երկու անգամ էլ քթները ջարդվել է Արցախում:

Ինչ վերաբերում է ազերթուրքերին, նրանց դերը սեփական պետություն ստեղծելու գործում խիստ երկրորդական է եղել: Նրանց համար հայրենիք են սարքել Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը՝ ամեն մեկը ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից: Ադրբեջան կեղծանունով թմբկահարվող պետության ողջ տարածքը հայերի, լեզգիների, թաթերի և թալիշների պատմական հայրենիքն է:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գնահատելով 19–րդ դարի հայոց պոեզիայի ձեռքբերումները՝ Հովհաննես Թումանյանը կատարել է խորիմաստ ու տարողունակ մի ընդհանրացում. «Բոլորը հաստատ գիտեն միայն մի բան, որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մեջ է նրա թշվառությունը... ահա այդ է հարկավոր... այդ հատկությունը կարող է նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ: Հակառակ դեպքում նրանք կմնան հայ բանաստեղծներ, ոչ թե հայոց բանաստեղծներ»:

«Բայց թե ինչ բան է այդ հայրենիքը» թումանյանական հարցադրումը ավելի քան վերաբերում է հայրենիքի քաղաքական ճակատագիրը տնօրինելու կոչված շրջանակներին՝ մանավանդ մեր օրերում, երբ մի հերթական անգամ հայտնվել ենք աշխարհի հզորների հակամարտ շահերի կիզակետում. շահեր, որոնց թելադրանքով երեկ մեր պայքարի արդարացիության շուրջը համաշխարհային աղմուկ բարձրացնելով՝ մեզ քարեքար էին գցում, այսօր ազերբուրքական սանձարձակ քարոզարշավին տոն տալով՝ երկրատարածքում իրենց ռազմական բազաները տեղադրելու հարցերն են լուծում:

Զինադադարից հետո արդեն 10 տարի է, որ դարաբաղա–ադրբեջանական հակամարտությունը տեղափոխվել է քաղաքական պայքարի դաշտ: Ազերբուրքական կողմը մարտնչում է բոլոր ուղղություններով, բոլոր մակարդակներում՝ մեր հայրենիքը, մեր պատմությունը, մեր մշակույթը, մեր պատմական դեմքերին իրենցը հռչակելով ու անտեղյակ աշխարհում հասարակական կարծիք ստեղծելով: Մեր կողմից եթե մեկ–մեկ պատասխան տրվում էլ է, անմիջապես երևում է, որ պատասխանողները պարզ պատկերացում չունեն, թե «ինչ բան է այդ հայրենիքը», և հեշտությամբ նրանց լեզուների տակից դուրս են գալիս «գրավյալ տարածքների վերադարձ», «Մեղրու և Լաչինի փոխանակում» և նման բաներ: Մեր իրավասու գործիչները անհրաժեշտ տեղերում երբևէ բարձրացրե՞լ են Գետաշենի ու Չարդախլվի հարց, թե՞ նման մոտեցումը հանցանք են համարում, չեն ուզում վիրավորել մեր հարևանների «արժանապատվությունը»:

Մեր իրավասու մարմինները լավագույն դեպքում հայրենիքը պատկերացնում են իրենց աչքի տեսածով, որը խիստ խաբուսիկ է, որովհետև չի բովանդակավորվում պատմական տեղաշարժերի դինամիկայով: Նրանք հայտարարում են գրավյալ տարածքներ՝ ելնելով իրենց աչքի տեսածից: Իսկ ո՞րն է այդ գրավյալ տարածքը: Ահա Մինքենդը: Ցարական վարչակարգի տեղական պաշտոնյաների գործուն մասնակցությամբ արաքսամերձ տափաստաններից ներխուժած քոչվոր անասնապահները կոտորեցին Մինքենդի հայության մի պատկառելի մասին, մյուսներին դարձրին բնավեր: Հայրենազրկված մինքենդցու ժառանգը ազատագրեց բռնազավթված հայրենական օջախը: Այստեղ ո՞րն է օկուպացիան և ո՞րը՝ ազատագրումը: Կամ այսօրվա դրության տերերի աչքով տեսածը եղել է յոթգլխանի հրեշի տեսքով գետնի տակից վեր խոյացող մի Աղդամ, բայց իմ և նրանց ծնողների աչքով տեսածը կավահողով սվաղած եղեգնյա պատերով մի Աղդամ էր՝ ցարական վարչակարգից մնացած երեք քարե շենքերով: Անցած դարի 50–ական թվականներից քաղաքական հատուկ ծրագրով Աղդամը դարձրին ահռելի քաղաք, որն ի վերջո պետք է իսպառ կլաներ ԼՂԻՄ–ը: Իսկ երբ մեջտեղ է գալիս նաև ցարական պաշտոնական վավերագրի վկայությունն այն մասին, որ 1912 թ. Աղդամում եղել է ընդամենը 60 ծուխ՝ 260 բնակիչով, այլ լույսի տակ է երևում իրականությունը: Քաղաքական ի՞նչ ծրագիր իրականացնելու համար Աղդամում ու նրա շրջանում 50–ական թվականներից սկսած կուտակեցին 160–հազարանոց բնակչություն, երբ այդ շրջանից հարավ ու արևելք ընկած հսկայական տարածքներ կատարյալ անբնակ էին և այսօր էլ անբնակ են: Գրավելով Աղդամը՝ մեր զավակները չեզոքացրին այդ ահավոր սպառնալիքը:

Էլ չենք խոսում հայոց պատմական հայրենիքի այն մարզերի մասին, որոնք հայ պատմաբանները թեթև ձեռքով նվիրեցին ազերբուրքերին Ստալինի հանձնարարությամբ, և որոնք այսօր աշխարհին են ներկայացվում որպես ազերբուրքերի «հազարամյակների հայրենիք»: Այդ բնագավառը տաբու է մեր պատմաբանների ու քաղաքական գործիչների համար:

Պատմական տեղաշարժերի իրական ընթացքը ներկայացնելու միջոցով ինչ–որ չափով մեր դատին օգտակար լինելու մղումով ընդամենը 34 էջում ներկայացրել էինք Հայոց Արևելից կողմանց վերջին 300–ամյա տեղաշարժերը, որի արդյունքում շահագրգիռ հզորները աննահանջ հետևողականությամբ ազերբուրքերի համար ստեղծեցին Ադրբեջան: Հույս ունեինք, որ իշխանությունների աջակցությամբ, բայց բնավ ոչ իշխանությունների անունից այն կներկայացվի աշխարհի դատին: Սակայն մերժվելուց հետո էլ փորձության ենք ենթարկվել մի այլ տարբերակով՝ հիմնահարցը ներկայացնելու մի երկու էջի սահմաններում, և դարձյալ կանգնել փակուղու առաջ: Չէ՞ որ մեր օրերում ասելիքը թղթին հանձնելը սոսկ տեխնիկական գործ է, հերոսությունն ու տաղանդը այն տեղ հասցնելու կարողությունն է: Ահա այդ տարբերակը ևս: Ո՞վ կարող է այն ներկայացնել հասցեատերերին՝ յուրաքանչյուրին իր լեզվով:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ

Հարգարժան համանախագահներ

Մենք չէ, որ պետք է ձեզ տեղեկացնենք, թե բաբելական աշխարհակալությունից սկսած՝ հզոր տերությունները, իրենց շահերից ելնելով, ինչքան չարիք են հասցրել մարդկությանը, քանի–քանի ժողովուրդների են

ստրկացրել, քանի–քանիսին ոչնչացրել: Վերջին երեքհարյուրամյակում եղե՞լ է ռուս–պարսկական, ռուս–թուրքական որևէ պատերազմ, որ Ռուսաստանն ու Արևմուտքը կանգնած չլինեին իրար դեմ և ամեն անգամ զոհասեղան չհանեին հայ ժողովրդին ու նրա հայրենիքը: Դուք դրանք կարող եք մեզնից տասնապատիկ լավ իմանալ ձեր դիվանագիտական արխիվներում կուտակված փաստաթղթերից, որոնց փշրանքներն է միայն մեզ մատչելի: Որևէ մեկնաբանության կարիք զգո՞ւմ են Բեռլինի վեհաժողովը, Լոզանը, Մոսկվան ու Կարսը, ուր հայ ժողովրդին զրկեցին սեփական հայրենիքում ազգային օջախ ունենալու իրավունքից անգամ: Հայտնի չէ՞, թե ինչպես հաղթանակած Անտանտան դիվանագիտական գաղտնի առևտուր էր անում Թուրքիայի հետ՝ իր «փոքր դաշնակից» Հայաստանը թողնելով Լենին–Աթաթուրքի ողորմածությանը, որպեսզի Հայաստանին զրկեն իր հազարամյակների հայրենիքի 9/10–ական մասից:

Ամեն կարգի զոհողության պատրաստ՝ հայ ժողովուրդն իր ազատության համար 1000 տարի բախել է քրիստոնյա Արևմուտքի դռները: Հայոց վերջին թագավոր Լևոն Զ–ն մահացավ Եվրոպայում՝ այդպես էլ օգնություն չստանալով: Ազատագրական պայքարի ռահվիրա Իսրայել Օրին 1699 թ. սեպտեմբերի 22–ի ծրագրով դիմեց Եվրոպայի տիրակալներին՝ օգնելու, որ Արևելյան Հայաստանը ազատագրենք Իրանի տիրակալությունից: Դա մի Արևելահայաստան էր, որի արևելյան սահմանագլուխը Բաքուն էր, որից բռնազավթված և այսօր Ադրբեջան կեղծանունով թմբկահարվող հանրապետության բուն հայկական մարզերի՝ Շամախու, Շաքիի, Գանձակի ու Ղարաբաղի խանությունների բնակչության 87 տոկոսը հայեր էին, 13 տոկոսը՝ մահմեդականներ, բայց ոչ ազերբուրքեր[1]:

Եվրոպայում գործնական արդյունքի չհասնելով՝ Օրին դիմում է Ռուսաստանին: 1722 թ. Պետրոս Առաջինը ձեռնարկում է Կասպիական արշավանքը: Հայ–վրացական զինական ուժերը Գանձակում սպասում էին՝ միանալու նրան: Սակայն առանց որևէ զինվոր զոհ տալու Դերբենդը գրավելուց հետո ցարը ուխտադրժորեն ետ է դառնում, որովհետև Ռուսաստանին հարկավոր չէր մի Անդրկովկաս, որի հիմնական ժողովուրդներից մեկը՝ վրացիները, դեռևս պահպանում էին իրենց պետականությունը, իսկ մյուսը՝ հայերը, ձգտում էին վերականգնել իրենց կորցրած պետականությունը: Ավելին: 1724 թ. Պոլսի հակահայկական գաղտնի պայմանագրով Ռուսաստանն Իրանին ենթակա Անդրկովկասը ճանաչում է որպես թուրքական սեփականություն՝ դուռ բացելով թուրքական ներխուժման առաջ: Թուրքիան ռազմակալում է Անդրկովկասը, ոչ միայն իրականացնում զանգվածային կոտորած, այլև Շաքիի խանության հայերի հիմնական

[1] Լեո, Երկերի ժող., հ. 3, 1973, էջ 48–97, Ա. Հակոբջանյան, Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, 2001թ., էջ 12–14:

մասին բռնի մահմեդականացնում է (1916 թ. ցարական վիճակագրությամբ այդ տարածքի բռնի մահմեդականացված հայերը 188 հազար էին (սուննի), շիա մահմեդականները՝ ազերբուրքերը՝ 27 հազար, հայերը՝ 45 հազար): Մյուս շրջաններում նույնը կատարել են Թուրքիայի կովկասյան վասալները: Ժամանակակից ազերբուրքերի սուննի բաղադրամասը բռնի թուրքացրած հայեր են:

Ողջ Անդրկովկասում միակ երկրամասը Ղարաբաղն էր, որ թուրքերը չկարողացան նվաճել: Իսկ այսօր այն դարձնում եք ազերբուրքերի հայրենի՞ք: Ինչպե՞ս կարող եք Գետաշենն ու Չարդախլուն հայտարարել Ադրբեջան, երբ դարեր շարունակ նրանք անվնաս բերդեր են եղել թուրքական ամեն մի ագրեսիայի դիմաց, երբ Լենինի ձեռքով ազերբուրքական գերությանը հանձնվելուց հետո անգամ զորբաչովյան հրանոթների բացած ճանապարհով միայն ազերբուրքը կարողացավ մուտք գործել այդ բերդերը:

Տասը տարի հետո՝ 1734 թ., Իրանը, Նադիր Շահի գլխավորությամբ, թուրքերին դուրս է մղում Անդրկովկասից, միաժամանակ Թիֆլիսից մինչև Շամախի ընկած տարածքից 700 000 գերիներ տանում Իրան: Փոխարենը Իրանի խորքերից ու Իրաքից թուրքախոս քոչվոր ցեղեր է մտցնում երկրատարածք՝ ռուսական ներթափանցման դեմ մահմեդական պատնեշ ստեղծելու հեռանկարով: Այս պահից է սկսվել ազերբուրքերի մուտքն Անդրկովկաս և անընդմեջ շարունակվել մինչև 1954 թ.:

Ճիշտ է, երբ 1804 թ. ռուսական զորքերը մտան Գանձակ, երկրատարածք ներմուծված այդ զանգվածները փախան Արաքսի մյուս ափը: Սակայն ցարը նրանց համոզելով ետ բերեց՝ նրանց համար ստեղծելով ամեն կարգի արտոնյալ պայմաններ: Ռուսաստանին ավելի քան հարկավոր էր քոչվորական վայրենի ուժը՝ իր կորցրած պետականությունը վերականգնելու հույսը փայփայող հայերին ճզմված պահելու համար: Պատահական չէ, որ երբ Բեռլինի վեհաժողովից հուսախաբ հայ ժողովուրդը գործնական հունի վրա դրեց ազատագրական պայքարը, Ռուսաստանն էլ Արևելյան Անդրկովկասի դռները լայն բացեց թուրքախոս զանգվածների առաջ: 1897 թ. 1 մլն–ի հասնող ազերբուրքերի 70 տոկոսը այսօրվա Ադրբեջան կոչվող երկրատարածք է մուծվել 1880 թվականից սկսած, որոնց ձեռքով էլ Ռուսաստանն իրականացրեց 1905–07 թթ. հայ–թաթարական ընդհարումները (Ադրբեջանի պատմություն, ռուսերեն, հ.2, էջ 253, 261–262):

Պակասը լրացնելու եկան Մեծ եղեռնի շարունակությունը կազմող թուրքական արշավանքը 1918 թ. և 1918–20թթ. վայրիվերումները, որոնց հետևանքով արդի Ադրբեջանում ջարդի զոհ դարձան ավելի քան 250 000 հայեր, ավերվեցին հարյուրավոր բնակավայրեր (1916 թ. ցարական վիճակագրության արձանագրած 537 000 հայերից 1926 թ. մարդահամարով վկայվում է ընդամենը 280 000):

Իրերի այս դրության մեջ ստեղծվեց Ադրբեջանական Հանրապետությունը՝ հայերին դարձնելով թուրք–խորհրդային 70–ամյա քաղաքական, տնտեսական, մշակութային, բարոյական ու ֆիզիկական խոշտանգումների թիրախ: Բայց չնայած 300–ամյա այս դաժան փորձություններին, մինչև 1988 թ. Արևելյան Հայաստանի երբեմնի այդ մարզերը դեռևս մնում էին նաև հայերի հայրենիք՝ Բաքվից մինչև Ղազախ, Կովկասի փեշերից մինչև Արաքս: Բայց այս անգամ արդեն հայերի փոքրամասնությամբ: Չկար որևէ տեղ, ուր ազերբուրքերի մեծամասնության կողքին չլիներ նաև բնիկ հայկական փոքրամասնություն:

Մի վերջին անգամ պայթեցրին երկու ժողովուրդների արանքում կուտակած չոր վառոդը, մեր գոյության իրավունքի պահանջի դեմ բորբոքեցին նախամարդկային վայրենի բնազդները: Խորհրդային կառավարությունը հայերին ջարդի ու բռնագաղթի ենթարկեց Ադրբեջանի ողջ տարածքով մեկ, իրենց հայրենիքից զրկեց միլիոնից ավելի բնակչության: Իսկ երբ Ղարաբաղն ուժ գտավ չբաժանելու այդ ճակատագիրը, կազմակերպեց ինքնապաշտպանություն, նրա ամեն մի հաջողության դեմ ցցվում էին ՄԱԿ–ի Անվանգության խորհրդի որոշում–սպառնալիքները:

Տասը տարի է անցել զինադադարից, բայց անընդմեջ բորբոքում են տրամագծորեն իրար բացառող հարցեր, «գրավյալ» տարածքների ու բռնագաղթվածների խնդիրներ: Բայց չէ՞ որ տարածքների գրավումն ու բռնագաղթեցումը երեկվա եկվոր–քոչվորների օգտին սկսվեց Բաքվից ու Սումգայիթից և տարածվեց մինչև Շամախի ու Շաքի, Մինգեչաուր ու Գանձակ, Թուզ ու Ղազախ, Հյուսիսային Արցախ, ուր հայ ժողովուրդը ոչ միայն ստեղծել է հազարամյակների քաղաքակրթություն, այլև տեղաբնիկ այլ ժողովուրդների հետ ազերբուրքերի համար կերտել է ժամանակակից Ադրբեջան:

Ղարաբաղն անկախ Ադրբեջանի մաս չի կազմել ո՛չ 1918 –20 թթ. և ո՛չ էլ 1991 թ. հետո: Դա դեռևս բոլորը չէ: Սուլթանական սվիններով «Ադրբեջան» ստեղծվելուց ընդամենը 34 տարի առաջ՝ 1884 թ., թուրք պաշտոնական պատմագիր Զևդեթը, իր «Պատմության» մեջ ներկայացնելով Անդրկովկասի քաղաքական քարտեզը, գրում է. «Վրաստանի և Դաղստանի հարավային կողմը Հայաստանն է, որը բաժանված է երկու մասի... երկրորդը՝ Գենջեի, Ղարաբաղի և Երևանի շրջանները, մտնում են Իրանի երկրի մեջ (Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի... մասին, հ. Ա, 1961, էջ 249):

Եվ դա խոստովանում էր այն ժամանակ, երբ մի այլ թուրք քաղաքական գործիչ՝ Քյամիլ փաշան, 1877–78 թթ. պատերազմի դասերը հաշվի առնելով, պետությունից պահանջում էր. «Հայաստան անունը հնչող կազակները պետք է ջախջախենք», «Մենք պետք է մեր հողի երեսից ջնջենք հայ ազգը»:

Արցախ–Ղարաբաղը բոլշևիկյան ռազմակալմամբ է միայն բռնակցվել Ադրբեջանին: Ադրբեջանը հրաժարվել է խորհրդային կարգերի իրավահաջորդը լինելուց, և Ղարաբաղի հետ միաժամանակ, իրար զուգահեռ հռչակել են իրենց անկախությունը: Իսկ Ադրբեջանի սանձազերծած Ղարաբաղյան պատերազմում, սկզբում պետական զորքի հետ միասին, Ադրբեջանն է բռնազավթել Ղարաբաղի տարածքները և պետք է վերադարձնի այն: Ինչ մնում է բռնագաղթվածների նախկին բնակավայրեր վերադարձնելու հարցին, ապա այն պետք է սկսել Սումգայիթից ու Բաքվից, եթե միայն կարողանանք համոզել այդ քաղաքները կառուցած հայերին:

Պատմաքաղաքական 300–ամյա վայրիվերումների տրամաբանությունը թելադրում է փոխզիջման հետևյալ տարբերակը.

1. Գորբաչովյան վարչակարգի կազմակերպած ցեղասպանությունը լուծել է հայոց հայրենիքի նախկին 4 մարզերի՝ Բաքվի, Շամախու, Շաքիի ու Գանձակի հարցը հօգուտ ազերբուրքերի:

2. Դիմակայելով ագրեսիային, չհաշտվելով ոչնչացման մտքի հետ՝ Ղարաբաղը ոչ միայն հաստատեց իր գոյության իրավունքը, այլև իրենից բռնազավթվածներից որոշ մաս էլ ետ վերցրեց՝ չնայած նրա հինավուրց մայրաքաղաք Պարտավը մնաց գերության մեջ:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրք–բոլշևիկյան կամայականությամբ է երկատվել միասնական Լեռնային Ղարաբաղը, որ 1988–91 թթ. հակամարտության ժամանակ մի շարք շրջաններ բռնազավթվեցին խորհրդային պետական զորքերի «Կոլցո» օպերացիայով՝ իրականացնելով կրկնաշերտ ագրեսիա՝ ցեղասպանություն, և ուրիշի տարածքը մի ուրիշին նվիրելու գործողություն, ԼՂՀ–ին են վերադարձվում նրա օրգանական մաս կազմող Շամխորի, Դաշքեսանի, Գետաշենի, Շահումյանի, ինչպես նաև նախկին ԼՂԻՄ–ի տարածքում հայերի հիմնած, բայց կամայականորեն մարզից պոկված Ժդանովի շրջանները:

4. Որպես ՓՈԽՋԻՋՈՒՄ, Ղարաբաղը չի դառնում Հայաստանի մաս: Ղարաբաղը հաստատել է ինքնուրույն պետություն լինելու իր իրավունքը, պատմության մեջ երրորդ անգամ վերականգնել կորցրած պետականությունը և այդ կարգավիճակով մտնում է անկախ պետությունների ընտանիքը:

Այդ են պահանջում արդարությունն ու իրավունքը:

Հարգարժան համանախագահներ՝ աշխարհի բախտը մատներիդ վրա խաղացնող հզորնե՛ր, քաղաքակրթության հազարամյակների պատմության մեջ մե՛կ անգամ, գոնե մեկ անգամ մոռացե՛ք հզորի ձեր իրավունքը և ունկնդի՛ր եղեք արդարության ու իրավունքի բնական ձայնին: Դուք էլ գիտեք, որ Արցախ–Ղարաբաղը հազարամյակների հերոսական մարտարվեստներով վաստակել է այդ իրավունքը: Եվ եթե, որպես եզակի բացառություն, կարողացաք փոխադարձ համաձայնությամբ վեր կանգնել ձեր մասնավոր շահախնդրություններից, հիմնահարցը կստանա իր արդարացի լուծումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

Հազարամյակների պատմության հետագծով 8

Ինչպես Արնելյան Անդրկովկասը դարձրին Ադրբեջան 40

Ադրբեջանական խաղաղ նվաճումների հետքերով 58

Հակամարտության փոխզիջումային լուծման տրամաբանությունը 74

Ո՞ւր ենք գնում այս ընթացքով, պարոնն ե՛ր 79

Վերջաբանի փոխարեն 106